

(5)

- 52





Պրոլետարների բոլոր լեզուներին, 05 OCT 2011

Պ. ԿԻՏԱՅԳԱՐՈՂՍԿԻ

9057

4-52

**ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄՏՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ**

**ԴԵՊՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ.**

13737

(Սուաշավոր Ասիայի յեվ Հյուսիսային Ամերիկայի հեղափոխական շարժումը)

417

10502

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1925





ՄԻՔԱՅԵԼ ՊԱՎԼՈՎԻՉԻ  
ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՈՎ

Թարգմանեց Ա. ՆԱԶԱՐԵԱՆ



№ 265

Գրառեպլար № 117

Տիրաժ 3000

Պետհրատի IV սպարան Լենինականում Պ. № 208

ՄԻՀՄ ՅԵՎ ԱՐՎԵԼԲԸ

«Միլիոն և հարյուրավոր միլիոն մարդիկ—փաստորեն յերկրագնդի մեծամասնությունը—հանդես են գալիս վերպես ինքնուրույն և զործոն հեղափոխական ֆակտորներ»:

ԼԵՆԻՆ

«Առաջավոր և քաղաքակիրթ Յեվրոպան չի հետաքրքրվում Չինաստանի վերանորոգմամբ: Չորս հարյուր միլիոն հետամնաց ասիացիներ հասել են ազատություն և զարթել են քաղաքական կյանքի համար: Յերկրագնդի ազգաբնակչության մի քառորդն անցել է, այսպես ասած՝ քնից դեպի լույս, դեպի շարժում, դեպի կոնիկ»:

ԼԵՆԻՆ

(Յերկրի ժողովածու, XIX, էջ 20):

ՄիՀՄ աշխատավորներն աշխուժորեն արձագանքեցին՝ «Ձեռքներդ հեռու Չինաստանից» ընկերությունը անդամագրվելու կոչին: Այս ընկերության անդամների թիվն արագ կերպով աճում է:

ՈՂԵՍՍԱ, 10 սեպտեմբերի. Ոգեստայում կազմակերպվեց «Ձեռքներդ հեռու Չինաստանից» ընկերության մասնաճյուղ: Այս ընկերության կազմվելու



ձեռներեցությունը պատկանում է նահանգական արհմիութեան խորհրդին: Ընկերությունը հեռագիր ուղարկեց Համամիութենական Արմիորհին, խնդրելով ՍնձՄ ամբողջ բանվորական դասի անունից ուժգին բողոք հայտնել ազգային հեղափոխական Չինաստանի անկախութեան խախտման առիթով:

ՈՒՅՍ, 10 Սեպտեմբերի. Կարմիր բանակային մասերի հրամանատարական և քաղաքական կազմի ընդհանուր ժողովը լսելով գեկուցում Չինաստանի զեպքերի մասին, բողոքի բանաձև ընդունեց կապիտալիստների դեմ, վորոնք լիախորեն միջամտում են անկախութեան համար կռիվող չինական ժողովրդի գործերին:

ԿԻՅՅՎ, 10 սեպտեմբերի. Չինաստանի զեպքերը լայն արձագանք գտան Կիևի պրոլետարիատի շրջաններում: Շատ գործարաններում և բարձրագույն կրթական հիմնարկություններում բողոքի բանաձևեր են ընդունված Չինաստանում կապիտալիստների կատաբած նոր արկածախնդրությունների դեմ: Այդ բանաձևերի մեջ այն համոզումն է արտահայտվում, վոր Կոմիստերնը զիմակագերծ անելով յեվրոպական իմերիալիստների այդ հերթական արկածախնդրությունը՝ կարող է նրա զարգացման առաջն առնել:

ԲԱՆՄ ՈՒՏ, 10 սեպտեմբերի. Լիբկնեխտի անվան աղահանքի բանվորները վորոշեցին հավաքաբար անդամագրվել («Չեռքներդ հեռու Չինաստանից» ընկերութեանը:

\* \* \*

Լերմոնտովի նշանավոր «Վեճ» բանաստեղծութեան մեջ, վոր գրված է 1841-ին, կարդում ենք այն ժամանակվա Արևելքի հետևյալ ընույթագիրը.

Յես չեմ վախենում Արևելքից ծեր,—  
Պատասխան տվեց Կադրեկը մթին,—  
Արդեն իններորդ դարն է, ինչ այնտեղ  
Խոր քուն է մտել ցեղը մարդկային:

Նայիր, չինարու ծավալուն ստվերում  
Քնկոտ վրացին տեճորը ձեռքին  
Քաղցր գինիի փրփուրն է թափում  
Իր խայտանկար անդրավարտիքին:

Յեւ մարդարտաշիթ շատրվանի մոտ,  
Ղալխանի թանձր ծխի մեջ կորած,  
Ննջում է ծերուկ Թեհրանը նվաղկոտ,  
Գլուխը փափուկ բարձին խոնարհած:

Տես, վոտքերի տակն և Յերուսաղեմի,  
Աստծու կրակով այրված ու խանձված,  
Անխոս, վորպես մի շիրիմ վաղեմի,  
Ընկած է անշարժ յերկիրը մեռած:

Ավելի հեռուն՝ Նեղոսը ղեղին  
Հավերժ ստվերազուրկ ավերով հոսում,  
Յեւ արքայական դամբարանների  
Աստիճաններն և շիկացած ոճում:

Բեդուինն էլ չի գործում արշավանք,  
Վոր իր գունավոր վրանները լցնի,  
Ոյժմ աստղերն է հաշվում անհամբանք  
Ու գովերգում է գործքն իր հայրերի:

Ամենն, ինչ այստեղ կարող էս տեսնել,  
Քնած է, քնին տալով մեծ արժեք.  
Վոչ, այս զառամյալ Արևելքը չէ,  
Վոր ինձ յերբեկ պետք է նվաճի:\*)

\*) Թարգմ. Ա. Խոնդկարյանի:



Շատ բան է փոխվել այն որից, յերբ իր ուշժի և արվեստի գեղեցություն տեսակետից այդ հիանալի վտանավորն է գրվել: Ո՞վ է այժմ Արեւելքը «զառամյալ» անվանում, ո՞վ է ասում, վոր «ամենը, ինչ այնտեղ կարող ես տեսնել, քնած է, քնին տալով մեծ արժեք», ո՞վ է այժմ «ննջող» ածականով բնորոշում նոր կյանքի համար զարթնող Պարսկաստանի մայրաքաղաքը՝ ժամանակակից Թեհրանը, վորի առաջադիմաթյան մասին «Շեֆարե Սորիս» թերթը (1924 թ. 17 հունվարի № 74) գրում է. «Սարդար Սեպահը չե (Ռիզա խան), վոր առաջնորդում է մեր յերկիրը դեպի հանրապետություն... մեզ դեպի հանրապետություն կանչողը այն կարմիր արշալույսն է, վոր բոցավառվել է Ռուսաստանում, այն տեսարանը, վոր մեր առաջ բաց է անում յերիտասարդ Տաճկաստանը»: Աշխարհի մեծագույն կայսրությունները—Գերմանիան և Ավստրիան—հանրապետություն են դարձել: Նրանց որինակը հրապուրում է նաև Պարսկաստանին... Իսկ այն քայքայումն ու վոչնչացումը, վոր մեզ պատճառել է Ղաջարների կառավարությունը, և այն անտարբերությունը, վոր ներկա շահը ցույց է տալիս դեպի մեր պետությունը, մտածելով միայն Յեվրոպայում զբոսանքներ կատարելու մասին, և ավելի յեն մղում մեզ դեպի այս ուղղությունը: Սարդար Սեպահը միայն մի իդեալ ունի, այն է՝ տեսնել Պարսկաստանը ուժեղ և հզոր. այնպես վոր նա կարողանա դեմ դնել Յեվրոպայի քաղաքական չար դիտավորություններին... Սեպահն ուղղում է, վոր Պարսկաստանն առաջ գնա կատարելագործման ուղիով»:

Ո՞վ անխոս, անշարժ և մեռած կանվանի ներկա

Պաղեստինը, վորտեղ արարական ազգաբնակչության բաժն խավերի մեջ ուժեղ թափով զարգանում է ազգային - ազատագրական շարժումը, վորտեղ հրեական տրոլետարիատի շարքերում աճում, զորեղանում է կոմունիստական կուսակցությունը:

Յեզիպոսում և Նեղոսի ու նրա ճյուղերով վտանգվող բոլոր յերկիրներում Լեմոնտովը «գերեզմանացին լուսթյունից» զատ ուրիշ վոչինչ չի տեսել:

«Ավելի հեռուն՝ Նեղոսը դեղին  
Հավերժ սովերազուրկ փերով հոսում,  
Յեվ արքայական դամբարանների  
Աստիճաններն է շիկացած ոժում»:

Իսկ այժմ պատահաբար բանալով թերթը («Կարմիր Աստղ», 27 ոգոստ. 1924 թ.) կարդում եմ այնտեղ հետևյալ լուրը.

«Յեզիպոսի մայրաքաղաքում՝ Դահիրեյում տեղի ունեցավ միտինգ և ցույց, վորոնք բազմաթիվ կողմնակիցներ գրավեցին Սուդանը միացնելու լուրջագներէ տակ: Ատրարի փերին (Նեղոսի վտակներից մեկը) տեղի ունեցան արյունալից ընդհարումներ՝ նույնատեսակ մի միտինգ հավաքված բանվորական կուսակցությունների և անգլիական զաղութային զորքերի միջև: Պորտ-Սալիդում (Սուդան) վոստիկանությունը զենքի ուշժով ցրեց նավահանգստի բանվորները և բռնակիրների ցույցերը:

Խարթումում (Սուդանի գլխավոր քաղաքը) զինվորական զարոյի յերիտասարդ սպաներ հարձակվեցին անգլիական զինվորների պահակատեղերի վրա: Խարթումից հյուսիս՝ նավային բանվորները ցույցեր կադ-



մակերպելու միջոցին ընդհարումներ ունեցան անգլիական զորամասերի հետ, և այլն, և այլն:

«Այս առիթով Մակդոնալդը խորհրդակցություն ունեցավ Յեզիպոսի անգլիական կոմիսարի, Սուդանի կառավարչի և տեղական բանակի հրամանատարի հետ: Այս խորհրդակցությունից հետո դեպի արևելք ուղևորվող անգլիական նավատորմիղը հրաման ստացավ գնալու Պորտ-Սայդ և Ալեքսանդրիա: Սուդանում անգլիական զորամասերը ուժեղացրած են:

Դեպի Խարթում թռավ անգլիական ոդային տորմիդի մի եսկադրիլ: Վոստիկանությունը կատարում է մասսայական ձերբակալություններ և յերկրից արտաքսում է նույնիսկ յեզիպոսական քաղաքացիներին, վորոնք կասկածելի չեն վորպես հակաբրիտանական տրամադրություններ ունեցողներ»: Լոնդոնից արված մի ուրիշ հեռագրի մեջ (24 ոգոստոս. 1924 թ.) կարդում ենք հետևյալը.

«Խարթումից (Սուդան) հաղորդում են, վոր Սուդանի զորամասերում ծաղայող յեզիպոսական քաղաքացիների նկատմամբ կատարվող ձերբակալությունները խստացված են: Այս խստությունները կապված են սուդանցիներին ապստամբության հրավիրող հակաբրիտանական կոչերի տարածման հետ: Կրտսեր Ալի Մալալը, վոր ոգոստոսին ղեկավարում էր յեզիպոսական բանվորական ջոկատների ապստամբությունը, դատապարտված է 6 տարվա բանտարկության»:

Նույնիսկ բեդուինները, վորոնց մասին հիշում է մեծ բանաստեղծը, վաղուց արդեն դադարել են աստղերը համարելուց և դրա փոխարեն համարելով իրենց պայուսակներում յեղած գնդակները, արշավում են.

Անգլիայի յերեկվա հովանավորյալի՝ Հեջազի թագավոր Հուսեյնի դեմ: Վերջին տարիների ընթացքում արաբական Արևելքում չեն դադարում բեդուինների ապստամբությունները, աճում և խորանում է ազգային-ազատագրական շարժում Արաբիայի համարյա բոլոր ցեղերի մեջ, վորի չորս անկյուններում մենք տեսնում ենք ծավալվող հրդեհի բռնկումներ:

Իր նշանակությամբ առաջին տեղն է բռնում վահաբիտների շարժումը: Յեթե նույնիսկ ճիշտ է, վոր վահաբիտներն այսօր Անգլիայի դրդամբ են ապստամբել Հեջազի թագավոր Հուսեյնի դեմ և նրան ստիպել, վոր գահից հրաժարվի, բայց և այնպես վաղը նույն վահաբիտները, այդ խաշնարած ցեղը, վոր անկախության է ձգտում, վտանգավոր պիտի դառնա Անգլիացիների համար: Յեւ յեթե Հուսեյնն իսկ չկարողացավ անգլիացիներին հաճելի լինել, թեև նրանցից գնված մեկն էր, ևս առավել անգլիացիք իրենք չպիտի կարողանան հաշտության յեզր գտնել, վահաբիտների հետ, վորոնք իրենց անկախության համար մշտապես պատրաստ են կռիվելու ոտար ցեղերի դեմ: Շատ վահաբիտներ անգլիական պրովակատորների ազդեցութեամբ հաղթական կռիվ սկսելով Հուսեյնի և նրա վորդի Աբդուլլահի դեմ, զենք վերցրին Հեջազի թագավորի և նրա հաջորդի դեմ ճիշտ այնպես, ինչպես անգլիական ազենտների դեմ, յերբ վերջիններս աշխատեցին ձնշել արաբական շարժումը և պատրաստեցին անգլիական խնամակալության տակ դնել վերջին արաբական ազատ քաղաքները, վորոնց թվում նաև Ալ-Կաբան ու Զուհ:

Սաովությունների հաջորդ ապոնը Մուսուլի վի-



լայնեթն ե, վոր ձգտում ե միանալ հարավային Միջագետքին և վոր գլխավոր նավթային շրջաններէց մեկն ե: Այստեղ վաղուց արդեն հուզումներ են տեղի ունենում՝ անգլիացիների կողմից տեղական ինքնավարութեան գործում ցույց ե տված միջամտութիւնն և այսօր շինների ու թյուրքերի միջև յեղած ազգային թշնամութիւնների հողի վրա:

Այժմ այդ թշնամիներն այնքան են ուժեղացել, վոր թյուրքերի պարտիզանական խմբերի գործողութիւնների պատճառով Բաղդադում պատերազմական դրութիւնն ե հայտարարված: Յեթն այս տեղեկութիւնները կողք կողքի դնենք հարևան պարսկական շրջանի՝ Լորիտան հակառակական շարժումների մասին բացակայած վերջին բազմթիւ լուրերի հետ, այն ժամանակ մեզ համար պարզ կըլինի, վոր ամբողջ հարավային Միջագետքը կրակի մեջ ե և վոր այստեղ անգլիացիների համար բավականաչափ գլխացավանք կա\*):

Սուովութիւնները յերրորդ վայրը պարսկական Դյուրդիստանն ե: Թեև սա ազգագրական տեսակետից տարբերվում ե արաբական Արևելքից, բայց և այնպես այստեղ անգլիացիք քյուրդերին ևս գինեղով՝ աշխատում են շարժում առաջ բերել և նրանց Մուսուլի հարցի մեջ քաշել:

Վերջապես չորրորդ հերթին պետք ե հիշել վահաբիտների կրկնվող հարձակումները Պաղիստինի վրա, վորի հովանավորութիւնը Ազգերի Լիգայի կողմից հանձնված ե Անգլիային:

\* ) Տե՛ս «Կարմիր Աստղ», 26 սեպտեմբեր 24 թ. «Արաբական Արևելքի հրդեհի շառագունումը»:

Բայց ազգային-ազատագրական շարժումը չի տանձնափակվում միայն այն յերկիրներով, վորոնց ազգաբնակչության խորունկ քնի մեջ լինելը 19-րդ դարի առաջին կեսին նկարագրում ե մեզ Լեւոնտովը: 20-րդ դարի Արևելքը այլևս այն չե, ինչ վոր եր 15-րդ դարում: 20-րդ դարը սե ու դեղին ցամաքների բոլոր յերկիրների հեղափոխական վոզու զարթնումի դարն ե՝ սկսած Աֆրիկայից մինչև Միջին Կայսրութեան Սաղաղական ովկիանոսի ափերը:

1924 թ. սեպտեմբերի հեռագրերը հաղորդեցին մեզ Զիրբալթարի նեղուցի շրջանում սպանացիների գեմ գուրս յեկած մարոկկացիների ապստամբութեան և ազանական բանակի կատարյալ ջախջախման մատին: Սպանիան, վոր Մարոկկոյում 160,000 զինվոր ե պահում, անհրաժեշտ ստիպմունքի տակ ե ամեն որ նախորդ գնդեր ուղարկել այնտեղ: Այդուհանդերձ ազանական զորքերի վիճակը Մարոկկոյում շարունակւում ե հուսահատական լինել: Դը-Րիվյերայի դիկտատուրայի բոլոր փորձերը՝ դրութիւնը բարձրել, բռնաբան հանձնող են անցնում:

1921 թ. հուլիսի պատերազմական յեղույթի լիաճատար անհանդուրժիւնն սպառնում ե կրկնվել նաև 1924 թվին:

Մենք՝ «Կուլ Ասիայի և Աֆրիկայի համար» մեր դրքում արդեն պատմել ենք 1921 թ. այդ ապստամբութեան մասին: Սպանական Մարոկկոյի մուսուլման ցեղերի՝ իրենց ստրկացնողների գեմ կատարած այդ ապստամբութեան ժամանակ գններալ Սիլվեստրի բանակը ջարդով յուր յեղավ և գններալն ինքն ել սպանվեց թե ինքնասպանութիւն գործեց:



Անլիլայի շրջանում սպանական բանակատեղին դատարկվում է թե չե, անմիջապես գրավվում է ապստամբների կողմից: Ինչպես վոր ստիպված է լինում խոստովանել սպանական զինվորական միևնույնը մամուլի ներկայացուցիչների հետ ունեցած իր խոսակցութեան միջոցին: Նա ասում է՝ «Յեղերի ապստամբութեանը լինում է լրիվ և ընդհանուր: Անլիլայի բերդաքաղաքը կտրվում է արտաքին աշխարհից: Սիդի Իդրիս ամրոցը, վոր Միջերկրականի ափից շատ հեռու է, ընկնում է ճգնաժամային դրութեան մեջ: Սպանական պատերազմական նավերի պաշտպանութեամբ բերդի կայազորը ազատելու փորձերն իզուր են անցնում, շնորհիվ թշնամու գործող կրակի: Սպանական պատերազմական նավերից միջանիսը ապստամբների թնդանոթների ուժեղացումով ջրասույզ են լինում, ինչ վոր վկայում է վերջիններիս հիմնալի գինված լինելը: Սպանական կառավարութեանը բանակն ուժեղացնելու և ապստամբութեանը ճնշելու համար ստիպված է լինում նոր գորակոչներ հայտարարել»:

Մարոկկոյի զեպքերի լուրերը շատ գործող տալավորութեան գործեցին ամբողջ Յեվրոպայում, հատկապես Սպանիայում, ինչպես և Ֆրանսիայում: Վորովհետև հասկանալի չէր, թե սպանական Մարոկկոյում տարածված շարժումը չէր կարող շուտ թե ուշ չանդրադառնալ Ֆրանսիական Մարոկկոյի, ինչպես նաև սև ցամաքի այն բոլոր յերկրամասերի վրա, վորոնք ընկած են Միջերկրականի ափերին:

Սպանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի բուրժուազական մամուլը միանգամայն հասկանալի անհանգրստութեամբ այն փաստն էր հաստատում, վոր սպա-

նական զենեքալներ և սպանների հրամանի տակ յեղող վարձկան բնիկ զորքերը միանում էին ապստամբներին, և Անլիլ բերդաքաղաքը՝ Աֆրիկայի հյուսիս արեւմտյան ծովափին սպանական տիրապետութեան այդ ամրոցը, ուժեղացնում էր ըստ յերևույթին հիմնալի Պերպուլ գինված ապստամբ զորքերի կողմից:

Այս բոլորով հանդերձ սպանական և Ֆրանսական մամուլը զարմանքով եյին հիշատակում աֆրիկական ցեղերի ապստամբութեան պատմութեան մեջ չըտեսնված մի իրողութեան, «տարրինակ իրողութեան» ինչպես «Տան»-ն էր («Le Temps») գրում: Յեւ այդ «տարրինակ իրողութեան» այն է, վոր ապստամբները չեն սպանել վոչ կանանց, վոչ յերեխաներին և վոչ իսկ պատերազմական գերիներին, այլ ընդհակառակը՝ թույլ են տվել, վոր խաղաղ ազգաբնակչութեանը հեռանա պատերազմական գործողութեանների վայրերից: Վորպես նման «տարրինակ մի իրողութեան» ել նկատվում էր այն, վոր վոչ մի կարգապահութեան չճանաչող, վոչ վոքի չենթարկվող այդ վայրերն լեռնցիները կովել են վորպես հնազանդ և կաթաղանթութեան վարժ գինվորներ՝ յենթարկվելով ինչ վոր մեկից ցուցմունքի: («Le Temps», 27 հուլիս 1921 թ.):

Վայրերն խռովարարների առաջին հայացքից այդ անբացատրելի վարմունքի գուշակութեան բանալին, ինչպես և նրանց հիմնալի մշակված պատերազմական գործողութեանների ծրագրերը, հարձակվող վաշտերի որինակելի գինվորական կազմակերպութեանը, նրանց հիմնալի գինված լինելը մինչև արտիլերիան և նրանց զինամթերքների հակայական բանակը, վորի



շնորհիվ խոռվարարները հնարավորութուն եյին ըստանում ուժեղանալու և սպանական ամբողջները և ջրասուշուրտ անել նրանց պատերազմական նավերը, այս բուրբուն, բուրբունական թերթերը, ճիշտ և քչերը պոռնում եյին նրանում, վոր այդ ապստամբութեան մեջ ապստամբ բայլելիկյան ազնւոյնների մասնակցութեանը կար, սակավութիւն այլ թերթեր ել գտնում եյին, վոր այնտեղ կան գերմանացի սպաներ:

Այստեղ հիշենք, վոր յեվրոպական մամուլը նույնն եր անում և մեր բանակի նկատմամբ: Յեվրոպական թերթերը մեր կարմիր զինուորների հիանալի կազմակերպութեանն ու կարգապահութեանը բացատրութեամբ եյին միևնույն առասպելական գերմանացի սպաների և գնահատելի ներկայութեամբ: Հիւրավի, խաղաղ ազգաբնակչութեան հանդեպ ունեցած «վայրենի ցեղերից» մարդասեր վերաբերմունքը, այն «տարրիշակ իրողութեանը», վոր բուրբունական մամուլն ստիպված եր խոստովանել, պարզ ապացոյց և այն բանի, վոր 3-րդ Խնտերնացիոնալի կոնգրեսները, արևելյան ժողովուրդների Բազլի հռչակավոր համագումարը, ինչպես և 3-րդ Խնտերնացիոնալի վեհ զաղափարների ազդեցութեան տակ զարգացող հետ պատերազմյան շրջանի պրոլետարական հեղափոխական բոլոր մեծ շարժումները անհետեանք չին մնացել նույնիսկ բուրձոյները, բնութեանագիտական սպանական ռիֆֆի անմաշելի ամբուրթեաններում բնակվող այդ հետաքննալից լեռնայինների համար: Հեղափոխական խլուրդը կատարում և իր գործը և լավ և փորում կապիտալիզմի վտանգների տակ յեղած հողը նույնիսկ Աֆրիկայի ափերին:

«Ամբողջ աշխարհի ճնշված ժողովուրդներ և բուրձոյները պրոլետարներ, միացե՛ք», — Բազլի պատմական համագումարում հայտարարված այդ վեհ լուրջագրը, այն համագումարում, վոր Մարտովն այնքան ծաղրեց արտասահմանում, իր արձագանքն և գտել Հյուսիսային Աֆրիկայի ափերում ապրող լեռնականների սրտերում: Սև և դեղին ցամաքների ամենահետաքննալից ցեղերն իսկ սկսել են հասկանալ, վոր իրենց ազատագրութեամբ հնարավոր և մի կողմից իրենց ներքին կազմակերպութեան և կարգապահութեան, և մյուս կողմից իրենց հանդեպ տուժած յեվրոպական ցամաքի աշխատավորական մասսաների համակրանքի դեպքում: Մարոկկոյի ապստամբած ցեղերը չուղեցին ավելորդ դէնք տալ սպանական բուրբունաղիայի ձեռքը, և դրանով դժվարացնեն սպանական պրոլետարիատի գրութեանը, վոր ավելի առաջ, քան ամբողջ Արևմտյան յեվրոպայի պրոլետարիատը, առանձին քաջութեամբ և միշտ կովել իր բուրբունաղիայի գաղութային արկածախնդրութեանները դեմ: Սպանական պրոլետարիատը, համաձայն ֆրանսական կիսապաշտոնական «Տան» լրագրի, Մարոկկոյի դեպքերի առաջին իսկ լուրերից առաջ բերեց արտակարգ հուզմունք շղայնութեամբ և անմիջապես պատրաստակամութեան հայտնեց ակտիվ գործունեութեան դիմել՝ կովելու Սպանիայի տիրող դասակարգերի իմպերիալիստական ծրագրի դեմ: Ամբողջ Սպանիայի բանվորները ծայր աստիճանի վրդովվում են Մարոկկո ուղարկվող նոր զորամասերի պատճառով: 1924 թ. ոգոստոսի 1-ի Բիլբաոում պայթում և ընդհանուր գործադուլ, վոր անցնում և Սիրակուզա և այլ քա-



դաքններ: Սպանիայի շատ քաղաքներում կատարվում են մասսայական ձերբակալություններ:

Իմպերիալիստական Սպանիան իր ուլժերի սոսկալի լարումից հետո միայն կարողացավ մի կերպ մընալ Աֆրիկայում\*):

Յեւ ահա 1924 թվին մենք ախանատես ենք լինում սպանական Մարոկկոյի նոր ապստամբությանը, մի ապստամբութուն, վորին մասնակցում են սպանական զաղթավայրի համարյա բոլոր ցեղերը: Սպանական զորքերի կրած պարտութունները լիակատար փոխվել են ջախջախման:

Համաձայն վերջին տեղեկությունների Տետուան և Տանժեր քաղաքները պաշարված են ապստամբների կողմից: Սպանական զորքերը նահանջել են ամբողջ զծով, չնայած վոր սեպտեմբերի ընթացքում բավականաչափ նոր զորքեր են ուղարկվել Մարոկկո (50,000 զինվոր): Թե Մարոկկոյի ավանտյուրան վորքան ուժասպառ և անում Սպանիային, պարզ յերևում է թեկուզ հենց այն մանիֆեստից, վոր դիկտատոր դը-Րիվիյերան իշխանությունը դերեկտորիայի կողմից գրավելու տարեդարձի առթիվ ուղղել և սպայությանը և բանակին: Այդ հետաքրքիր մանիֆեստի մեջ դը-Րիվիյերան խոստովանում է, վոր «դիրեկտորիան մի տարվա ընթացքում չկարողացավ մեր առաջ գրված հարցերը լուծել, վորովհետև Մարոկկոյի պատերազմը կլանեց նրա բոլոր ուլժերը»:

Փրանսական Կոմիտեի պարլամենտական ֆրակ-

\*) Տես մեր գիրքը «Կռիվ Ասիայի և Աֆրիկայի համար», էջ 27—209.

ցիան, կենդրոնական կոմիտեն, ինչպես և կոմսոմոլի համաֆրանսական կոմիտեն վողջունում են սպանական իմպերիալիզմի դեմ տարած Մարոկկայի ապստամբների փայլուն հաղթութունները և հույս են հայտնում, վոր ապստամբների առաջնորդ Աբդուլ-Բերիմը ֆրանսական և յեվրոպական պրոլետարիատի հետ կըշարունակի կռիվը բոլոր իմպերիալիստների դեմ, ներառյալ և ֆրանսականի, մինչև Մարոկկոյի լիակատար ազատագրումը:

Սպանական Մարոկկոյի ապստամբությունը կըղղիացած չմնաց:

Փրանսացիք նույնպես հաստատում են, վոր ֆրանսական Մարոկկոյի սահմանամերձ ցեղերի մեջ հատկապես վերդայի հովտում խռովություններ են ծագում, վորոնց հետևանքով պետք է յեղել Ֆեսից մեծաքանակ ուլժեր ուղարկել այդ շրջանը: Ինչպես տեսանք միաժամանակ խռովություններ են տարածվում նաև Սուդանում:

Ավիլորդ և կանգ առնել Հնդկաստանի և Չինաստանի ազգային և բանվորական շարժումների բընուլթի վրա: «Նոր Արևելք» հանդեսը բավականաչափ հոգիածներ են նվիրել այդ թեմային: Հիշենք այստեղ միայն այն, ինչ վոր գրել և Լենինը Ասիայի արթնացման մասին դեռ 1913 թվին.

«Վաղո՛ւց և վոր Չինաստանը լիակատար անշարժության նմուշ էր համարվում: Իսկ այժմ այնտեղ յեռում է քաղաքական կյանքը, հորդանում է հասարակական շարժումը, դեմոկրատական բարձրացումը: 1905 թվի ուռաական շարժումից հետո դեմոկրատական հեղափոխություն

1003  
13737





Թյուրքիան, Պարսկաստանը և Զինաստանը: Խմորումն  
աճում է նաև անգլիական Հնդկաստանում»:

«Հետաքրքիր է տեսնել, վոր այժմ հեղափոխա-  
կան—դեմոկրատական շարժումը տարածվել է նաև  
հոլանդական Հնդկաստանում, Ճավա կղզում և հոլան-  
դական մյուս գաղութներում, վորոնք 40 միլիոն ազ-  
գաբնակչությամբ ունեն»:

«Համաշխարհային իմպերիալիզմը և 1905 թվի  
ռուսական շարժումը վերջնականապես արթնացրել են  
Ասիան: Միջնադարյան անշարժության մեջ հարյու-  
րավոր միլիոն մոռացվածներ, վայրենացածներ զար-  
թել են այժմ նոր կյանքի, մարդկային այրենական  
երավունքների և դեմոկրատիայի կոլի համար»:

Կոմիտեերնի մեծ առաջնորդի այս տողերը գրվե-  
լուց ի վեր Արևելքում շարժումը զգալի չափով զար-  
գացել է, և այժմ իրոք գաղութային և կիսագաղու-  
թային յերկիրներում «միլիոն և հարյուրավոր միլիոն  
մարդիկ—փաստորեն յերկրագնաի մեծամասնությու-  
նը—հանդես են գալիս վորպես ինքնուրույն և գործոն  
հեղափոխական ֆակտորներ», ինչպես վոր մատնանը-  
շեց Լենինը 3-րդ համագումարում:

\* \* \*

Լերմոնտովը դառամյալ և քնած Արևելքին հա-  
կադրում է նիկալայան Ռուսաստանը՝ Հյուսիսը, վոր-  
տեղ յեղել և շարժում, վորտեղ լսվել է զրնգոց և աղ-  
մուկ:

Ուրալից մինչ գետը Դանուսի,  
Մինչ մեծ գետը Լայոնն,  
Շողշողալով և ծովածուփ  
Գնդերն են շարժվում:

Ցյունքներն են ծփում ճերմակ,  
Ինչպես խոտը դաշտի,  
Ուլաներն են սուրումարագ՝  
Բարձրացնելով փռշի:

Գումարտակները մարտական  
Սեղմաշար ընթանում,  
Դրոշներ են առջևից տանում,  
Թմբուկներ են հարում:

Մարտկոցները պղնձե շարքով  
Սուրում են, դղրում,  
Կարծես կոլի պատրաստվելով՝  
Պատրույգներն են վառվում:

Յեվ գեներալն ալհհեր  
Ռազմի դաշտում յեփված,  
Սպառնալից հայացքը լարել,  
Առաջնորդում է նրանց:

Անվերջ սուրում են աղմկոտ  
Գնդերն ասես հեղեղ,  
Ամպերի պես խիստ դանդաղկոտ  
Ուղիղ դեպի Արևելք:

Չարագույժ մի միտք պաշարեց  
Կազրեկի սիրտը ծեր,  
Թշնամու զորքն համրել սկսեց  
Ու չկարաց համրել:

Իր ցեղակից լեռն ու սարին  
Տխուր հայացք նետեց,  
Քաշեց գդակն իր աչքերին  
Յեվ առհավետ լռեց\*):

\*) Թարգմ. Ա. Խոնդկարյանի:



Յեթե Լերմոնտովի այս վոսսանավորից զատ ուրիշ փաստաթուղթ մնացած չլինելու նիկողայան դարաշրջանի մասին, այդուհանդերձ մենք ի վիճակի կըլինեյինք հենց այդ յերկերի հիմամբ պատկերացնել ցարական Ռուսաստանի և քնած Արևելքի միջև, յեղած փոխհարաբերությունները: Յարական Ռուսաստանը յեղել և ամբողջ Արևելքի գլխավոր և ամենից ավելի վտանգավոր թշնամին: Ամբողջ ասիական ցամաքը Կադրեկի պես դարերով լռել և հեղեղի նման զորեղ և աղմկոտ ռուսական զնդերի անընդհատ հոսանքից, վրոնք տասնյակ և տասնյակ տարիներ ամպերի նման շարժվել են ուղիղ դեպի Արևելք:

«Ամեն ինչ փոխվեց այն բողոքից, յերբ Ռուսաստանում հաղթանակեց Խորհրդային իշխանությունը: Բանվորա-գյուղացիական Ռուսաստանը զորեղ և և անհաղթելի հանձինս իր կարմիր բանակների, հեքյաթային հրապուրանքը իր նոր դեմքին՝ յերևաց ասիական ժողովուրդներին այլևս վոչ վորպես դարավոր տանջող ամբողջ մահմեդական աշխարհի, վոչ վորպես թրշնամի, վոչ վորպես քրեակից Անգլիայի, Գերմանիայի կամ Ֆրանսիայի՝ դեզին ցամաքը բաժանելու կովում, այլ ընդհակառակը՝ վորպես բարի հանձար, վորպես անկեղծ բարեկամ Արևելքի բոլոր ճշմարտ ժողովուրդների, համաշխարհային իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում: («Կոփ Ասիայի և Աֆրիկայի համար», էջ 74):

Ինչ կըպատահեր Պաքսկաստանին, Չինաստանին և Թյուրքիային, յեթե ՍԽՀՄ ոգներ համաշխարհային իմպերիալիզմին: Արևելյան յերկրների անկախությունը լիովին ջնջելու համար արած նրա փորձերի մեջ:

Ռուսաստանը հնարավորություն ունենալով թիկունքից հարձակվելու Պարսկաստանի, Տաճկաստանի և Չինաստանի վրա այն ժամանակ, յերբ Անտանտը ճակատից կըհարձակվեր այդ յերկրների վրա, նա կարող կըլիներ արթնցող Արևելքին դնել խիստ ճգնաժամային կացության մեջ:

Յեթե Անտանտն ույժ ունեցավ զորեղ Գերմանիան իրեն համար գաղութ դարձնելու և իր ձեռքը ձգելու նրա կենսական բոլոր աղբյուրները, ուրեմն ել ինչ չեր կարող անել նա Արևելքի նկատմամբ, յեթե նրան գործակցեր Ռուսաստանը: Ինչ վիճակի կըհասնեյին Պարսկաստանը, Թյուրքիան, Չինաստանը, յեթե մեկը, մյուսի յետեից հարձակման յենթարկվեյին հյուսիսից, հարավից, արևելքից և արևմուտքից:

Ինչը կարող և ավելի ցայտուն կերպով արտահայտել հին և նոր Ռուսաստանի միջև յեղած խոր տարբերությունը, քան այն վերաբերմունքը, վոր ՍԽՀՄ ցույց և տալիս ներկայիս Չինաստանում կատարվող դեպքերի նկատմամբ:

Յարական Ռուսաստանը բոկեմբների ապստամբության շրջանում Չինաստանի վրա հարձակվող պետությունների կոնցերտում գլխավոր ջութակի դերն եր կատարում: Այժմ յերբ միջին կայսրության նկատմամբ նոր միջամտություն և կատարվում, ՍԽՀՄ հանդես և գալիս վորպես չինական ժողովրդի միակ և հավատարիմ բարեկամը:

ՍԽՀՄ բոլոր քաղաքներում կազմակերպվում են «Ձեռքներդ հեռու Չինաստանից» ընկերություններ և մեր արմատությունները դիմումներ են կատարում բոլոր յերկրներին աշխատավոր մասսաներին, առաջին



հերթին Զրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի և Յապոնիայի բանվորներին՝ կոչ անելով նրանց, վոր ամբողջ վճռականությամբ դուրս գան Չինաստանի խաղաղ սղգաբնակության նկատմամբ գործադրվող անգլիական, ամերիկական, ֆրանսական և յապոնական կառավարությունների ավազակային հարձակման դեմ, վոր միացյալ ույժերով հետ մղեն կապիտալիստական գիշատիչներին՝ չինական ժողովրդի ներքին գործերին միջամտելու փորձերը։ Վոչ միայն մեր հանրապետության մայրաքաղաքներում և դավառական քաղաքներում—ինչպես Մոսկվայում, Լենինգրադում, Սարկովում, Ուֆայում, Նիժնոնովոյում, Պավլոգրադում և հարյուրավոր այլ մեծ ու փոքր վայրերում, վոր հրավիրվում են ժողովներ և կազմակերպվում «Չեղճներդ հեռու Չինաստանից» ընկերության մասնաճյուղեր, վորոնք տարերային թափով, առանց կենդրոնի վորևե հրահանգի, բանաձևեր են հանում չինական միջամտության դեմ և սկսում են կատարել հոգուտ չինական աշխատավորների ամեն տեսակ հանգանակություն ու ոժանդակություն, այլև այնպիսի փոքրիկ վայրերում, ինչպես Կադիեկայում, Բրյանսկի հանքերում և Դոնբասի մյուս վայրերում, ուր յես վերջերս յեղա, նկատելի յե բուռն հետաքրքրություն դեպի այն ամենը, ինչ վոր կատարվում է Չինաստանում, ինչպես և ջերմ ցանկություն ըստ կարելույն ոգնություն գնալու չինական ժողովրդին դարավոր ճշնշողների դեմ մղած կռվում։ Կարմիր բանակի հզոր բառախոնները աղմկոտ՝ ինչպես հեղեղը, դանդաղ՝ ինչպես ամպերը, ավելի սպառնական, քան ցարական բանակները, սեղմ շարքերով առաջ են գնում վոչ նրա

համար, վոր արթնացող Արևելքի վրա հարձակվին։ Յեղ նրա հրանոթների պատրոյգները ծխում են ինչպես ճակատամարտից առաջ վոչ նրա համար, վոր մեր թնդանոթների գնդակները քանդեն Արևելքի ազատագրական շարժման ամրոցները։

ՄոկշՄ տարբեր պատրույգներ, տարբեր ջահեր և տանում գեպի Արևելք։

Ջիովանիոլին հին Հռոմի ստրուկների հայտնի ապստամբությանը նվիրած եր «Սպարտակ» վեպի մեջ այսպես է նկարագրում այդ քաղաքացիական պատերազմի սկիզբը, վոր քիչ եր մնում սկզբում ստրուկների հաղթական բանակը Հռոմի պատերի տակ հասներ։

Սպարտակը բաժանում է միքանի հարյուր անդեն գլադիատորներին, վորոնք անակնկալ կերպով շրջապատվում են պատրաստվող ապստամբության մասին լուր առած հռոմեական լեգիոններից և իր մի բուռն կտրիճներին վառված կերոններով բաց է թողնում վոտից մինչև գլուխ զինված հռոմեական զինվորների վրա։ Գլադիատորները վառված հսկայական կերոններով՝ այդ հնարովի գենքերով անցնում են հռոմեական զինվորների շարքերից և այդպիսով կազմում են գլադիատորական բանակի կորիզը, վորին միանում են Իտալիայի բոլոր կողմերից յեկող ստրուկների նոր խմբերը։ Ահա այսպես է սկսվում հաղթական կռիվը ստրկատիրական Հռոմի անեղ բանակների դեմ։

Այս վառված կերոններով միջնադեպը կարծեք թե սիմբոլն է հանդիսանում ժողովրդական ապստամբության եռությանը և նրանով բացատրվում է վատ զինված ժողովրդական բանակների հաճախակի հաղ-



Թուրքիոյնը ընդդէմ բազմաթիւ ու ավելի լավ զինված  
այն բանակներէ, վորոնք տիրող դասակարգերի շահն  
են պաշտպանում:

Բուրժուական ամբողջ աշխարհը միացավ Խորհրդ-  
դային Ռուսաստանի դէմ: Անգլիական, ֆրանսական,  
ամերիկական և յապոնական բուրժուազիան պաշտպա-  
նեց Կոլչակին, Դենիկինին, Վրանգելին, Յուդենիչին,  
Էստոնական, ֆինլանդական, լեհական, բուլղարական  
սպիտակ գլխաւորականներին և հափշտակիչներին զի-  
նեց Խորհրդային Թշնամիներին հրացաններով, զնդա-  
ցիւններով ու տանկերով, մատակարարեց նրանց զրամ,  
հայթայթեց կենսական պատերազմական մթերքներ:  
Այդ բոլորով հանգերձ Խորհրդային խշտանութիւնն  
ամբողջ կապիտալիստական աշխարհի դէմ մղած իր  
կռիւ մեջ հաղթական դուրս յեկավ:

Խորհրդային Ռուսաստանը պաշտպանվեց անթիւ  
Թշնամիներէ՝ մեկ ձեռքում բռնած հատու թուրը, իսկ  
մյուսում՝ վառվող կերոնը:

Այդ կերոնը սոցիալիստական հեղափոխութեան  
կերոնն է. նա կերոնն է կապիտալիստներէ և կալվա-  
ծատերերի դէմ մղվող բանվորներէ և գյուղացիներէ  
կռիւ, ինչպէս և կերոնն է բոլոր ճնշվածների ընդդէմ  
իրենց ճնշողներէ տարած պայքարի:

Այդ կերոնը պայծառ վառվեց և նրա ճառագայթ-  
ները թափանցեցին վոչ միայն ՍՍՀՄ բանվորների ու  
գյուղացիների գիտակցութեան մեջ, վորոնք խարվե-  
լով կամ բռնութեամբ քշված էին Դենիկինի, Կոլչակի  
և Բոլդաչանկոյի բանակները այլ նաև ռաբրիկայա-  
բանակների ու զինվորների մեջ, վորոնք շատ զժկա-  
մակութեամբ էին կռվում Կարմիր Բանակի դէմ:

ՍՍՀՄ համայն աշխատավորութեանը մտնելով  
«Զեռքներդ հեռու Չինաստանի» ընկերութեան մեջ,  
ցույց տալով անկեղծ պրոլետարական համերաշխու-  
թիւն և կարեկցութիւն իր անկախութեան համար  
խմբերիալիզմի դէմ կռվող Չինաստանին, կոչ անելով  
ամբողջ միջազգային պրոլետարիատին՝ պայքարելու  
կապիտալիստներէ կազմակերպած չինական ինտեր-  
վենցիայի դէմ, վոգեվորում է միլիոնավոր չինացիներ-  
էին և մղում է նրանց յեռանդուն կռիւ՝ ընդդէմ Չի-  
նաստանի ներքին գործերին միջամտող իմպերիալիստ-  
ներէ: Նրա այս ձեռն գործունեութեան լուրն արդեն հա-  
սել է Չինաստանի ամենախուլ անկյունները: Մենք  
այսպիսով վոգեվորելով Չինաստանի լայն մասսանե-  
րին՝ սուր ի ձեռին դուրս գալու վճռական պատերազ-  
մի և կռիւիւ համաշխարհային բուրժուազիայի լկաի  
միջամտութեան դեմ, միաժամանակ միջազգային պրո-  
լետարիատին ուղղած մեր համերաշխութեան կոչով,  
ինչպէս և բոլոր յերկիրներէ, ամենից առաջ՝ Անգլիայի,  
Ամերիկայի, Ֆրանսիայի և Յապոնիայի բանվորների  
գործոն և վճռական յերույթի համար արած մեր ազի-  
տացիայով, վորպէսզի սրանք դուրս գան Չինաստանի  
ներքին գործերին միջամտող իրենց կառավարութիւն-  
ների դէմ, այդ բոլորով մենք գինում ենք իր անկա-  
խութեան համար կռվող Չինաստանին այն կերոնով,  
վորով Խորհրդային Ռուսաստանը խորտակեց իր դէմ  
շարժվող բոլոր թշնամի բանակները:

Միխ. Պավլովիչ



«Արեւելքն իր դարգացման մեջ  
վերջնականորեն ընթացավ ընդ-  
հանուր յեվրոպական կապիտա-  
լիստական մասշտաբով»...

Վ. ԼԵՆԻՆԻ «Ավելի լավ է քիչ,  
բայց լավ» հոգովածից:

## Ն Ե Ր Ա Շ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Առաջավոր Ասիայի և հյուսիսային Աֆրիկայի՝  
յերկիրներում յեղած հեղափոխական շարժումը, վորի  
մասին պատմում են և այս գիրքը, միատեսակ չեն հիշո-  
ւայնպեւ, ինչպես վոր միատեսակ և նույնաման չեն այդ  
յերկիրների եկոնոմիկան, կապիտալիստական զարգաց-  
ման շրջանի մեջ մտնելու նրանց հրապուրվելու տա-  
տիճանը և իմպերիալիստական այս կամ այն պետու-  
թյան, կամ թե միջանի պետութիւնների ունեցած  
ազդեցութեան չափը:

Ընդհանուր առմամբ Մերձավոր Արեւելքի մահմե-  
դական յերկիրներում յեղած հեղափոխական շարժման  
զարգացման մեջ պետք է հիշել յերկու շրջան.

1. Լոզանի համագումարի նախընթաց շրջանը և
2. Լոզանի համագումարին հաջորդող շրջանը, վոր վեր-

ջացավ 1923 թ. հուլիսին, վորի կողմից ընդունված  
դաշնագրերով հաստատվեց հեղափոխական Տաճկա-  
ստանի համարյա լիակատար անկախութիւնը մի կող-  
մից, և անգլո-ֆրանսական կապիտալի գաղութային  
տիրապետութիւնը Միջագետքում, Յեգիպոսում, Սի-  
րիայում, Պաղեստինում և այլն մյուս կողմից:

Մինչև Լոզանի համագումարը թյուրքերի, յե-  
գիպտացիների, Առաջավոր Ասիայի (Պաղեստինի, Մի-  
ջագետքի, Սիրիայի, Արարական թերակղզու) և հյուսի-  
սային Աֆրիկայի (Մարոկկո, Ալժիրի, Տունիս) արաբ-  
ների հեղափոխական շարժումը բնորոշվում է իմպե-  
րիալիզմի և ներքին ռեակցիայի դեմ ուղղված միաց-  
յալ ազգային-հեղափոխական ճակատի գոյութիւնը:  
Առևտրական բուրժուազիան, ինտելիգենցիան, բան-  
վորներն ու գյուղացիները բուրժուական հրամա-  
նատարութեամբ դուրս են գալիս իմպերիալիզմի դեմ—  
այդ «խորթ-ոտարականի», «չարախնգաց կործանողի  
և քայքայողի»: Կարծես թե ելեքտրական հոսանք է  
անցնում Մերձավոր Արեւելքի ստրկական մահմեդական  
ժողովուրդների «լենդան ուլթերի» բոլոր խավերով, և  
ծեր ու մանուկ ապստամբում են հաղթական Անտան-  
տի անտանելի լծի դեմ: Միայն ֆեոդալ-կալվածա-  
տիրական դասակարգն է, վոր դուրս է մնում «միաց-  
յալ ազգային ճակատից», միայն ճորտատերերի, այդ  
հետադիմական դասակարգերն են կաղմակերպում ներ-  
քին ուլթեր, վորոնց վրա ել հենվում են «քաղաքակիրթ»  
Յեվրոպայի կապիտալիստական կոլոնիզատորները.  
Տաճկստանի և Մարոկկոյի սուլթանները, Արաբիայի,  
Միջագետքի և Յեգիպոսի եմիրներն ու «թագավոր-  
ները» իրենց սրտակից խոշոր-կալվածատեր պալատա-



կան դասակարգերի, ազնվականների և հետադիմական հոգևորականութան հետ միասին դեմ են դուրս գալիս «միացյալ ազգային ճակատին»՝ ոտարյերկրյա կապիտալի կողմը բռնելով: Այս ֆեոդալ-ճորտատիրական վերին խավը հանդիսանում է ոտարյերկրյա իմպերիալիզմի միակ ուղեցույցը, նրա գործակալը և հավատարիմ սպասավորը: Յեւ այս լինում է այն պատճառով, վորովհետև իր ժամանակ արդեն ապրած այդ հասարակական խմբավորումը միայն իմբերալիզմի ղինվորական և ֆինանսական ույժերի ոգնությամբ է կարողանում պահել իր դարավոր արտոնությունները: Ահա թե ինչու այդ հետադիմական-կալվածատիրական վերին խավը առեկող ալիքի յե հակված գործարքի մեկնել իմպերիալիզմի հետ ի հաշիվ ժողովրդական մասսաների:

Գաղութային և կիսագաղութային ամբողջ Արևելքում գլխավորապես բնիկ բուրժուազիան է, վոր սաստիկ կերպով հեղեղված ազգային-հեղափոխական շարժմամբ, հանդիսանում է ազգային «կամքի» պետական ինքնուրույնության և անկախություն կրողը, առաջին հրացանն արձակողը և առաջնորդը: Նա վորդեքում և կազմակերպում է բանվոր-գյուղացիական մասսաներին, կովիլու իմպերիալիզմի և նրա սպասավորների, հավատարիմ ճորտերի՝ հավատարիմ ազնվականութան դեմ:

Բուրժուական մտավորականությունն ազգային հեղափոխության «ուղեղն» ու «հոգին» է:

Գաղութային և կիսագաղութային բնիկ բուրժուազիան ապրում է ժողովրդի և մասսաների վրա ունեցած իր անհաղթելի իշխանության և ազդեցության «մեղրալուսինը»՝ նույնացնելով իրեն այդ ժո-

ղովրդի և մասսաների հետ, ինչպես, վոր ֆրանսական մեծ հեղափոխության ժամանակ էր:

Մերձավոր Արևելքի միայն յերկու յերկիրներում՝ Միջագետքում և Մարոկկոյում է, վոր իմպերիալիստական բռնությունների դեմ մղվող կովի մեջ տեղական ազնվականության ներկայուցիչները հանդես են գալիս վորպես ակտիվ առաջնորդներ: Այս հանգամանքը նրանով է բացատրվում, վոր վերոհիշյալ յերկու յերկիրներում կյանքի ֆեոդալական-նահապետական կառուցվածքը տակավին վերջնականորեն չի քայքայվել: մարոկկացիների և Միջագետքի ազգաբնակչության վորող մասերի կյանքի կիսաքոչվոր յեղանակը տակավին չի կարողացել սեպեր խփել տեղական ազնվականների և ժողովրդական մասսաների մեջ: Միայն այդ յերկու յերկիրներում է, վոր ապստամբած մասսաների գլխին գտնվում են հողային և անասնապահական ազնվականները, վորոնք մոտ են կանգնած ֆրանսական, սպանական և անգլիական գաղթականների (կոլոնիզատոր) կողմից քայքայված ժողովրդական զանգվածներին:

1914—18 թվականների իմպերիալիստական պատերազմը և նրան հաջորդող կապիտալիստական ճգնաժամը թուլացրին մեծ պետությունների տնտեսական ինամակալությունը գաղութների վրա: Մյուս կողմից Արևելքի, մասնավորապես Մերձավոր Արևելքի հետամնաց յերկիրները զգալի կերպով առաջ գնացին, ինքնամիտի բնական տնտեսությունից ապրանքային-կապիտալիստական տնտեսության անկման ճանապարհի վրա:

Պատերազմի ընթացքում «արդյունաբերական



շրջանառութեան՝ պրոցեսն զգալի կերպով առաջ գնաց  
Թյուրքիայում, Յեգիպտոսում, Պարսկաստանում և այլ  
յերկիրներում: Ստեղծվեց բնիկ առևտրական և մասամբ  
եւ արդյունաբերական բուրժուազիա: Սովերի պես  
նրան սկսեց հետեւել բանվորական դասակարգը: Գյու-  
ղը սակավ առ սակավ դուրս յեկավ իր պատրիարքա-  
կան կեղևից և սկսեց շերտավորվել:

Մի խոսքով տնտեսական մեծ փոփոխութեաննե-  
րը, վորոնք տեղի ունեցան այդ յերկիրներում վերջին  
տարիների ընթացքում, հեղաշրջեցին Յեվրոպայի և  
Մերձավոր Արևելքի միջև դարարով հաստատված հա-  
սարակական բոլոր հարաբերութեանները: Այս գա-  
ղութներն ու կիսագաղութները այլևս չուղեցին «վոս-  
կե հատակ» լինել յեվրոպական բիրթանների համար:  
Նրանք հրաժարվեցին իմպերիալիստական պետութեան-  
ների համար գեր-վաստակի աղբյուր լինելուց:

Բուրժուական ինքնուրույն զարգացման գիտակ-  
ցված պահանջների արտահայտվելու հետ միասին յե-  
րևան յեկավ ազգային-պետական անկախութեան և  
տնտեսական ինքնուրույնութեան լողունգներ: Ահա  
այստեղից եւ «միացյալ ազգային ճակատ» բուրժուազի-  
այի գլխավորութեամբ: Բուրժուազիան քաղաքի և գյուղ-  
ի շահագործվող մասսաների հետ միասին կռվի դուրս  
յեկավ ներքին և արտաքին ճնշողների, իմպերիալիզ-  
մի ու սրան ոժանդակող ստրկատիրական տարրերի դեմ:

Բայց այդ «միացյալ ճակատը» գոյութեւն ու-  
նեցավ այնքան ժամանակ, վորքան ժամանակ վոր բուր-  
ժուազիան կռվում եր իւրաքանչեւ համար: Հենց, վոր  
ազգային բուրժուազիան իշխանութեւնը ձեռք ձգեց՝  
արդեն «միացյալ ճակատի» մեջ սկսեցին ձեղքեր ա-

ռաջանալ, ինչպես վոր պատահեց Տաճկաստանում և  
Յեգիպտոսում:

Դասակարգերը—այդ մենք ակնառու տեսնում  
ենք Լոզանի համագումարից հետո—ջախջախեցին «մի-  
ացյալ ճակատի» շղթան:

Բանվորական մասսաներն աստիճանաբար ազա-  
տագրվում են ազգայնական իդեոլոգիայից և անցնում  
են դեպի ինքնուրույն դասակարգային կռվի ճանա-  
պարհը:

Թյուրքիայի և Յեգիպտոսի պրոլետարիատը վե-  
ջին տարիների ընթացքում քիչ-քիչ սկսել ե իրեն  
գիտակցել վորպես ինքնուրույն դասակարգ: Սրան վոր-  
պես ապացույց ծառայում են այդ յերկիրների պատ-  
մութեան մեջ չտեսնված հեղափոխական համախմբում-  
ներն ու գործադուլները, վորոնք Յեգիպտոսում մինչև  
գործարաններ գրավելու հասան: Յեգիպտական պրո-  
լետարիատը, թեև տակավին ղեկահաստ, բայց արդեն  
ցույց ե տվել դասակարգային կռվի այնպես գոհար-  
ներ, վորոնք կարող եյին զարգարել Արևմտյան Յեվ-  
րոպայի նրա ավագ յեղբայրների շարժումը...

«Միացյալ ազգային ճակատի» քայքայման և  
անկման այս պրոցեսն սկսվեց Տաճկաստանում և Յե-  
գիպտոսում, վորտեղ բուրժուազիան տարբեր ճանա-  
պարհներով իշխանութեան հասավ: Իսկ Մերձավոր  
Արևելքի ուրիշ յերկիրներում—Միջագետքում, Պաղես-  
տինում, Սիրիայում և հյուսիսային Աֆրիկայում դեռ  
կատարվում ե իմպերիալիստական ճնշման դեմ ուղղված  
ազգային հեղափոխական կռվի առաջին փուլը: Այս-  
տեղ տակավին խոսքը պատկանում ե ղեկներին, և բուր-  
ժուազիան կռվում ե լոկ իշխանութեան դեկը ձեռք



ձգելու համար: Այստեղ միացյալ հակախմբերիալիստական ճակատի լողունգը, վորի մեկ ծայրն ուղղված է ոտարյերկըրյա լծի դեմ, իսկ մյուսը՝ կալվածատիրական խմբակի, դեռ շողշողում է ծխածանի բոլոր գույներով:

Ռուս. բանվորների և գյուղացիների որինակը խանդավառությամբ է լցնում հեռավոր, Միջին և Մերձավոր Արևելքի պայքարող ժողովուրդներին, վորոնք կռվում են բուռն վողկորությամբ: Խորհրդային հանրապետության կողմից յերիտասարդ հեղափոխական Թյուրքիային ցույց տրված բարոյական և նյութական ոգնությունը, գիտակցությունը, վոր Խորհրդային Միությունը աշխարհում միակ յերկիրն է, վոր մինչև վերջ պաշտպանում է Թյուրքիայի, Պարսկաստանի, Զինաստանի, Ավղանստանի և մյուս բոլոր գաղութային ու կիսագաղութային յերկիրների ազատագրության ամբողջությունը և անկախությունը, այս բոլորը վողկորում է ճնշված ազգություններին՝ իմպերիալիստական գիշատիչների դեմ մղած իրենց կռվի մեջ:

Մահմեդական յերկիրների, ինչպես և ամբողջ Արևելքի ազգային ազատագրական շարժման ծավալման հաջողությունը նշանակում է՝ գաղութատեր պետությունների նյութական բազայի նեղացումը և ներանց շահագործման շրջանի ու դեր-վաստակ ստանալու նվազումը:

Հեղափոխական մահմեդական Մերձավոր Արևելքը դեռ իր խոսքը չի ասել: Նա միայն տատանվում է:

«Արևելքը, գրում է ընկ. Լենինը մահվանից քիչ առաջ հրատարակած իր հոդվածներից մեկում («Ավելի

լավ է քիչ, քան լավ»), վերջնականապես մտել է հեղափոխական շարժման մեջ առաջին իսկ իմպերիալիստական պատերազմի ույժով և վերջնականապես ներս է քաշվել համաշխարհային հեղափոխական շարժման ընդհանուր հորձանքի մեջ: Հեղափոխական և ազգայնական Արևելքն ընդհանրապես, և Մերձավոր Արևելքը մասնավորապես միայն վորձեր են անում ապագա գլխավոր պատերազմական բաղխման համար, վոր տեղի չէ ունենալու հակահեղափոխական իմպերիալիստական Արևմուտքի հետ...»):

\*) Հեղափոխական շարժումը «Ֆազերի» բաժանելու մեր սկզբունքի համաձայն էլ մենք համապատասխան ձևով դասավորեցինք Մերձավոր Արևելքի յերկիրները:



## Թ Յ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Լ Ո Ւ Ն

### ԱԶԳԱՅԻՆ ՇԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ազգային-ազատագրական շարժման դասական և համարյա կատարյալ տիպը մենք տեսնում ենք Տաճկաստանում:

Անատոլիայի յերիտասարդ տաճկական բուրժուազիան դուրս յեկավ իմպերիալիստական պատերազմի արգանդից: Վորքան վոր առաջին հայացքից տարորինակ թվա, այնուամենայնիվ փաստ ե, վոր գերմանական կապիտալն այդ բուրժուազիայի կնքահայրն եր: Նա եր, վոր կանգնեց այդ բուրժուազիայի որորոցի կողքին:

Իրերի բերմամբ գերմանացիք ստիպվեցին՝ զարգացնել Թյուրքիայի արտադրական ույժերը, վորով և ոժանդակեցին Թյուրք ազգային բուրժուազիայի աճելուն: Այն ժամանակ, յերբ անգլիական և ֆրանսիական կապիտալը հենվում եր հունական և հայկական բուրժուազիայի վրա, վոր ծայր աստիճան ազդեցիկ եր հին Ոստոմանյան Թյուրքիայում, դրա հակառակ՝ գերմանական կապիտալը իր զիրքը հիմնեց բնիկ ազ-

գային բուրժուազիա ստեղծելու վրա: Դրանով նա հույս ունեւր այդ կիսազաղութային յերկրում հենակետ ստեղծել անգլո-ֆրանսիական բուրժուազիայի մրցության համար:

Գերմանացիք շատ ավելի ուշ հայտնվեցին Թյուրքիայում, քան անգլիացիք ու ֆրանսացիք: Գերմանական կապիտալը ստիպված եր ոժանդակել Թյուրքիայի արտադրական ույժերի զարգացմանը նախ այն պատճառով, վոր նա իր եռությամբ պակաս պարազիտային և ավելի արտադրական եր, և յերկրորդ՝ այն պատճառով, վոր այդ կապիտալի հայտնվելու միջոցին Թյուրքիայի բոլոր «արդյունավետ վայրերն» արդեն բռնված ելին նրա ավելի բախտավոր անգլո-ֆրանսական մրցակիցների կողմից:

Վաշխառու Ֆրանսիան փոխառվություն եր առնում Թյուրքիային՝ հայտնի ֆրանսական կրեդո ռազմագործարանից զինամթերքներ գնելու և բարձր տոկոսներ վճարելու համար: Իսկ գերմանացիք Թյուրքերին փոխառվություն ելին անում գլխավորապես յերկաթուղիներ կառուցանելու համար:

Թյուրքիայի գլխավոր վարկավորողը յեղել և Ֆրանսիան: Սկսած 1858 թվականից նա զբաղ և հայթայթել սուլթանների կառավարությանը: Այդ փոխառվությունները, վոր արվում ելին մեկը մյուսի յետեից, նաեւ նրա համար ելին, վորպեսզի դրանցով վճարվեն մյուս փոխառվությունները: Սակայն վաշխառուական տոկոսները լիովին չեյին բավարարում փոխառվություն անողներին, և վորպեսզի յեվրոպական կապիտալիստները, գլխավորապես ֆրանսականը, ել ավելի մեծացնեն իրենց յեկամուտ-



ները սուլթանները յերկրում, սկսեցին թյուրքիային տալ կնքված փոխառության միայն մի մասը: Այսպես, որինակ, 792 միլիոն ֆրանկի խաղարկության փոխառություն կնքվեց: Այդ փոխառությունը հանձնվեց ավստրիացի բանկիր բարոն Հիլդին 255 միլիոն ֆրանկով. 400 ֆրանկի ապահովված բաժնեթղթերը տրվեցին այդ սպեկուլյանտին 123 ֆրանկով:

Հազարավոր որինակներեց մենք վերցրինք միայն այդ մեկն իբրև փայլուն նմուշ՝ ցույց տալու համար յեվրոպական բանկիրների լիտի խաբեբայությունը և Ռոտտմանյան կայսրության ֆինանսական ստորկացումը՝ վերջիններիս կողմից:

Վաշխատուական, գլխավորապես ֆրանսական կապիտալին հակադրվող գերմանական կապիտալը թյուրքիա մտավ արտադրական և վոչ թե վաշխատական նպատակներով: Նա բամբակի պետք ուներ, ուստի և վորպեսպի անգլո-ամերիկական շուկայից կախում չուներ, գերմանական կապիտալը զարկ և տալիս Տաճկաստանում բամբակի մշակության զարգացմանը: Նա յե, վոր առաջինը լինելով կյանքի յե Կոնստանդնուպոլսի ազգային բանկերին:

Թյուրքիայում ֆրանսական կապիտալն իրեն զրոյթյան տեր էր զգում: Իսկ գերմանական կապիտալին անհրաժեշտ էր մի շանթարգել ընդդեմ ֆրանսական վաշխատական կապիտալի, վորի որինետացիան հիմնվում էր հունա-հայկական չարչիական բուրժուազիայի վրա: Այդպիսի շանթարգել նա գտավ հունձին թյուրքական ազգային բուրժուազիայի, վորը հենց իր շնորհիվ էլ ծնունդ էր առել: Գերմանական կապիտալը ձուլվեց նորածին թյուրքական բուր-

ժուազիայի հետ և նրա հետ էլ աճեց: Այս բուրժուազիայի մեջ նա տեսնում էր անգլո-ֆրանսական մըրցակցության կռիվի իր դաշնակցին:

Գերմանացիք ոժանդակեցին Տաճկաստանի յերկրագործության կուլտուրայի ու տեխնիքայի բարելավմանը, նրա ազգային արդյունաբերության զարգացմանը: Նրանք առանձին յեռանդ հայտնաբերեցին այդ ուղղությամբ գլխավորապես պատերազմի բնթացքում: Գերմանական կապիտալի տնտեսական քաղաքականությունը թյուրքիայում հետևյալն էր. ամեն կերպ ճնշել «այլացեղ» բուրժուազիային—հունահայկական, և ուժեղ կերպով պաշտպանել թյուրքազգային բուրժուազիային:

Պատերազմի ժամանակ թյուրք բուրժուազիան բացառիկ բարեպատեհ պայմաններ ունեցավ՝ «ազգային» սկզբնական կապիտալ կուտակելու համար: Ինչպես հայտնի յե այդ ժամանակ գյուղատնտեսական մթերքների գները խիստ բարձրացան: Այս բարձրանալը կատարվեց՝ ասիական և յեվրոպական բանակների կողմից յեղած կենսամթերքների սատիկ պահանջի և բազմամիլիոն գյուղացիական մասսաների զորակոչի հետևանքով: Գյուղում մնացած ազգաբնակչության խմբերը, գլխավորապես հացառատ Անատոլիայի հարևան գյուղացությունը, հիանալի կերպով ողտագործում և այս բարեպատեհ հանգամանքը: Թյուրքական գյուղերի ունեոր շերտերը միեկանք տալով ազատվում էին գլխավորական ծառայությունից, ինչ վոր մշտապես գործադրվել և Ռոտտմանյան թյուրքիայում: Յեվ անա այդ ունեոր խափերը պատնում են միջնորդ գյուղական արտադրողի և սպառող կառա-



վարութեան միջև: Գյուղը դրամի պետք ունի և հաճախ բերքի մեծ մասն ստիպված է ծախել, յերբ դեռ այն չի հավաքված:

Վաշխառուական և ճորտատիրական հարաբերութիւններն այդ ժամանակ սաստիկ զարգանում են գյուղում: Հետզհետե գյուղը կենդրոնանում է 3—4 հարստացած կուլակ ընտանիքների ձեռքում:

Միևնուէն ժամանակ հարստացած գյուղացութիւնն ի նկատի ունենալով աշխատավորական ուշժերի պակասը, գյուղի ամալացած լինելը տղամարդկանցից, ուժեղ թափով դնում է գյուղատնտեսական գործիքներ—մեքենաներ և ընդարձակում իր հողամասերը: Այս տնտեսութիւններն սկսում են արդեն շուկայի համար աշխատել: Վերջ բնական *subsistence* կառավարութիւնն ոգնութեան է դալիս հարստացած գյուղացութեանը, վոր մղվում է դեպի կողմնակի արհեստներ, այն է՝ ջրաղացներ, յուղագործարաններ և վաճառականութիւն՝ խանութ, պանդոկ ևայլն:

1915 թվականի վերջերին և 1917 թվականի սկզբներին մենք տեսնում ենք թյուրքիայում հարստացած գյուղացութեան կողմից արդեն բուռն ձգտում դեպի քաղաք՝ իր կապիտալը վաճառականութեան և կապալառութեան մեջ գնելու համար: Այս յերեւոյթը լայն տարածված էր հատկապէս Անատոլիայում:

Հայտնվում են «նուվորիշներ» (նորեկուկ բուրժուաներ): Կեղտոտը յեկավ:

\*) «նուվորիշ» ֆրանսերեն *nouveau riche* խոսքն է, վոր բառացի նշանակում է «նոր հարուստ»: Այսպէս սկսեցին կոչել Ֆրանսիայում այն մարդկանց, վորոնք պատերազմի միջոցին սպեկուլյացիայով հարստացան:

Ծնթ. թարգմ.

Գյուղական կապիտալը տնայնագործութեան մեջ մեծ կիրառում է գտնում: Անատոլիայում հիմնվում են բազմաթիվ արտադրական արտեղներ, 1—2 վաճառական-ձեռնարկուների գլխավորութեամբ: Վրտնաման, լծասարք, ռազմամթերք, դարբնագործական իրեր—այդ բոլորն արտադրվում են մեծաքանակ չափով: Այս հանգամանքից առաջ է դալիս մեքենաների պահանջ բանվորական ուշժի պակասը լրացնելու համար: 1917 թվականի վերջերին Անատոլիայի «նուվորիշները» կամ «նեպմանները» Գերմանիայում մեծաքանակ պատվերներ են տալիս իրենց գործարանների մեքենավորման համար:

Անատոլիայի արդյունաբերական հեղաշրջման այս պրոցեսն ընդհատվում է գերմանական կռաւիցիայի քանդվելով:

Այսպիսով տաճիկ ազգայնական բուրժուազիան խոր արմատներ է ձգում մի կողմից կապիտալիստական գյուղատնտեսութեան և մյուս կողմից քաղաքի առևտրա-արդյունաբերական կյանքի մեջ: Տնտեսական այս դրութիւնն արյուն, հյութ և կենսական ուշժ է տալիս յերիտասարդ տաճիկ բուրժուազիային, բարձրացնում է նրա քաղաքական հեղինակութիւնն ու կշիռը գյուղացիական լայն մասսաների աչքում և դարձնում է նրան գերիշխող (գլխավոր ղեկավար) ազգային հեղափոխութեան մեջ:

#### ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ. ԲԵՄԱԼԻ ԽՈՒՄԲԸ

Ընկ. Ռադեկը իր «Վերսայլի խաղաղութեան լիկվիդացիան» գրքույկի մեջ ցույց է տալիս, վոր «նոր-հրդային կառավարութիւնը իլլուզիաներով չտարվեց



Անդորայի Ազգային Ժողովի կառավարութեան սոցիալական բնույթի նկատմամբ: «Նա—շարունակում եմ ընկ. Ռադեկը—շատ լավ գիտեր, վոր այդ փոշ միայն բանվոր-գյուղացիական կառավարութեան չէ, այլ նույն իսկ բուրժուական հեղափոխության կողմ ազդեցիկ բուրժուական կառավարություն ել չէ (ընդգծումը մերն է. Պ. Կ.): Նա գիտեր, վոր այդ ռազմիկ սպայութեան շերտերի կառավարութեան է. շերտերի՝ վորոնք պաշտպանութեան են դառնում բյուրոկրատիայի կողմից»: Տաճկաստանում գործող ույթների հետագա վերլուծումը մեզ ցույց կը տա, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեան առաջնորդներն ավելի շուտ չվերագնահատեցին Մուստաֆա Քեմալ-փաշայի կառավարութեան սոցիալական նշանակութեանը:

Իրականութեանն ավելի ցայտուն կերպով հայտնաբերեց Քեմալի խմբի գեմքը, քան վոր կարելի չեր սպասել: «Նրա բնի բոլոր թռչունները» հանդիսանում են վորպես հառաջադիմութեան և վոչ թե հետադիմութեան պաշտպաններ, վորպես բուրժուական հեղափոխութեան զաղափարակիրներ: (Իսկ այդ Արևելքի համար նշանակում է մի քաջ ավելի առաջ, ինչպես բազմիցս ընդգծում եր ընկ. Լենինը):

Ազգային ինտելիգենցիան (քաղաքական և զինվորական) Անատոլիայի յերիտասարդ բուրժուազիայի գլուխն անցավ, մշակեց իդեոլոգիա, կազմակերպեց նրա կամքը «Մուդաֆաշի-Հակուկ» (իրավունքների պաշտպանութեան ընկերութեան) կուսակցութեան միջոցով և ամբողջ ազգի անունից մասսաներին առաջնորդեց զեպի կոթի ներքին և արտաքին թշնամիների դեմ: 1923 թ. ապրիլին այս կուսակցութեանը վերանվանվեց «Ժողովրդական կուսակցութեան» («Հակ»):



ՄՈՒՆՏՈՅՈՒ ՔԵՄԱԼ-ՊԱՇԱ



Այդ կուսակցութիւնը թշուրջիայի կառավարող կուսակցութիւնն է: «Ժողովրդական կուսակցութեան» ծրագիրը դեռ վերջնականապէս չի հաստատուել: Այդ կառավարութեան մասին քիչ թե շատ ճիշտ դադափար տալու համար, վոր ազգային հեղափոխութիւնն ներշնչողն է, քաղվածքներ բերենք անցյալ տարվա աշնանը, թշուրջական պարլամենտի («Մեջլիս») ընկերական պայքարի նախորեկին, Մուստաֆա-Քեմալի ստորագրութեամբ հրատարակված հայտարարութիւնն:

Ահա թե ինչ է թշուրջ ժողովրդի իրավունքների հայտարարութիւնը.

1) Ամբողջ իշխանութիւնը անվերապահ կերպով պատկանում է միայն ազգին:

2) Յերկրի ներսում բարորութեան պահպանումը գլխավոր խնդիրն է և պիտի ապահովվի համաձայն ազգի ցանկութեան և պահանջների:

3) Հարկերի սխտեմը, վորոնց թվում և «տշար»-ը (տասանորդ) յենթարկվում է հիմնական բարեփոխութեան: Ամեն տեսակ ոգնութիւն գյուղացութեանը:

4) Ժողովրդական լուսավորութեան գործի հիմնական բարեփոխութիւն:

5) Ապահովում յերկրի բարեկարգութեան:

6) Աշխատավորութեան շահերի պաշտպանութիւն՝ աշխատանքի վերաբերյալ որեւնքների հրատարակութեամբ:

7) Զինվորական ծառայութեան տնտեսութեան կըրճատումն:

8) Պետական հսկողութիւն վարչական մարմինների վրա:

9) Պատերազմի պատճառով ավերված շրջանները վերաշինութիւն:

Ինչպէս տեսնում ենք, այս ծրագիրը դժված է այն նպատակով, վոր ազգայնակշուրթեան բոլոր շերտերը գրավվեն բուրժուական պետութեան շինարարութեան համար: Մենք շուտով կըհամոզվենք, թե ինչ է հասկանում «Ժողովրդական կուսակցութիւնը» «ազգ» բառով: Այդ բանը մեզ պարզ կըլինի, յեթե ծանոթանանք ներկա պարլամենտի կազմին, վոր ընտրված է խաղաղ ժամանակի պայմաններում, համաձայն 1924 թվի «Սահմանադրութեամբ» մշակված ընտրական որենքի:

Թեև ընտրութիւններն ընդհանուր են, բայց նրանք ուղղակի չեն, այլ յերկաստիճան: Այս հանգամանքն առավելապէս ապահովում է բուրժուազիայի շահերը: Բայց տեսնենք «Ազգային Մեծ Ժողովի» սոցիալական կազմը:

Լոգանի համագումարից հետո, վորը 90 տոկոսով վերջացավ ազգայնականների հաղթութեամբ, տեղի յեն ունենում թշուրջական յերկրորդ միջլիսի ընտրութիւնները: Թշուրջական հանրապետութեան ներկա նախագահ Քեմալ-վաշայի կողմնակիցներին հաջողվում է անցկացնել բացառապէս իրենց մարդկանց: Ո՞վքեր են տաճիկ աղդի այդ ներկայացուցիչները:

Պարլամենտի 286 պատգամավորները, վորոնք բոլորն էլ ընտրվել են «Ժողովրդական կուսակցութեան» ցուցակով, ըստ իրենց սոցիալական կազմի, բաժանվում են հետեյալ դասերի.

Զինվորական պաշտոնյաներ

49 հոգի



|                            |   |         |
|----------------------------|---|---------|
| Քաղաքացիական               | » | 33 հոգի |
| Ազատ արվեստի մարդիկ        |   | 50 »    |
| Հոգևորականներ              |   | 18 »    |
| Առևտրական և յերկրագործական |   |         |

բուրժուազիայի ներկայացուցիչներ 76 »

Իսկ վերտեղ ե «ժողովուրդը», վերտեղ են բան-վորների ու գյուղացիների ներկայացուցիչները, կը-հարցնե ընթերցողը: Ավանդ, «ժողովրդական կուսակ-ցութիւնը» միայն հպարտանում ե ազգի անունով, բայց ժողովրդի իսկական ներկայացուցիչներին վոչ մի կերպ թույլ չի տալիս մոտենալու կառավարական դեկին: Այդ պարլամենտում տիրում ե բուրժուազիա-յի լիակատար բռնութիւնը. այնտեղ ներայացված ե ինտելիգենցիայի ընտրյալ դասը, վոր իրեն «ազա-դասակարգային» ե համարում, ինչպես նաև հառաջա-դիմական սպայութեան և քաղաքացիական պաշտո-նեութեան բարձր խավը:

Այդ մեջլիսը տարբերվում ե իր նախորդից, վոր ընտրվեց 1920 թվականի ազգային պատերազմի բոլորո-քած շրջանում, միայն նրանով, վոր այդտեղ բացակայում են «ցուլերը»—Արևելյան Անատոլիայի ֆեոդալական-կալվածատիրական և հետադիմական հոգևորականու-թեան ներկայացուցիչները:

Այնտեղ դերակշռում ե քաղաքի և գյուղի «գոլուտ» բուրժուազիան: Բոլոր փքուն հայտարարութիւններն այն մասին, թե «ամբողջ իշխանութիւնը պատկանում ե միայն ազգին», լոկ թգենու աերեններ են՝ բուրժուա-կան մերկութիւնը ծածկելու համար, ժողովրդի իսկա-կան ներկայացուցիչները—բանվորները և գյուղացի-

ները ամբողջովին բացակայում են մեջլիսից, ինչպես մենք տեսանք վերոհիշյալ ցուցակից:

Անատոլիայի բուրժուազիայի կուռքն ե Մուստա-ֆա Քեմալ-փաշան, վոր ստացավ «ղազի» անունը (այլադալանների հաղթող): Նա եր, վոր անխնա կռիվ հայտարարեց իմպերալիզմի դեմ, նա եր, վոր կազմա-կերպեց բանակը, վոր սվինով պատառտեց թյուր-քիայի վզին փաթաթած Սերի կողոպտիչ դաշնագիրը: Մուստաֆա Քեմալն եր, վոր կովի յեւալ ֆեոդալիզմի, ինչպես և սուլթանի ու խալիֆայութեան դեմ (մահմե-դական աշխարհի հոգեվոր պետ):

Դարձյալ Մուստաֆա Քեմալն եր, վոր վորպես վերանորոգված թյուրքիայի նախագահ, իրենով պսա-կեց բուրժուական հանրապետութեան շենքը, վոր ծըն-վել եր ազգային-ազատագրական պատերազմի փոթոր-կի ու մըրիկի մեջ:

## ԽՈՇՈՐ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԶՈՒՏ «ԻԹԹԻԶՍԱԿԱՆՆԵՐ»

Անատոլիայի «կեղտոտ» բուրժուազիան, դեռ ազա-տագրական պատերազմի սկզբին, ազգային ազատա-գրական գործի մեջ հանդիպեց բացահայտ անբարյացա-կամութեան և թշնամութեան՝ Պոլսի, Իզմիրի և մյուս մեծ կենդրոնների հին, հարուստ բուրժուազիայի կող-մից: Սրանք կապված են վաշխառուական, գլխավորա-պես ֆրանսական բանկիրային կապիտալի հետ և թյուրքիայի ազգային տնտեսութեան մեջ նույն գիշատիչ դերն են խաղում, ինչ վոր հույն-հայկական բուրժուա-զիան: Սրանք շահագրգռված եյին, վոր ըստ կարե-լույն շուտ վերահաստատվի կապը Արևմուտքի հետ:



Անատոլիան՝ «գաշնակիցներին» կողմից գրավված Կոստանտինապոլսից, նեղացրել եր ներքին շուկան և վոչնչացրել եր հին, միջնորդ ու վախճառու բուրժուազիայի այդ մասի շահերը:

Այդ խմբերը գաշնակիցներին գրավման ժամանակ պաշտպանեցին Անտանտի հետ ամրապահ պայմանագիր կնքող սուլթանին և նրա արքունիքը: Քաղաքականապես նրանք ներկայացված են հանձին «Հուրիեթ-վե-իֆլիաթ»-ի ու «Միություն և Պրոգրես» կուսակցության աջ թևին («Միություն և Պրոգրես» կուսակցությունը կամ «Յերիտասարդ թյուրքերի» կուսակցությունը կանգնած եր 1908 թվի թյուրքական առաջին հեղափոխության զրուխը, վոր վերջացավ հողային ազնվականության հետ փտած զիջումներով, միապետական սահմանադրության հաստատմամբ և արյունաբու սուլթան Աբդուլ-Համիդի տապալմամբ:

Լոզանի համագումարից հետո յերբ քեմալական իշխանությունը Պոլիս մտավ, այդ խմբերն առաջ քնցին իրենց՝ այսպես կոչված «Միություն և Առաջադիմություն» կուսակցության «գուտ» իթթիհատական կողմնակիցների քաղաքական պլատֆորման:

Նրանց քաղաքական որդանն ե «Տանին» ազդեցիկ լրագիրը, վոր «Ժողովրդական կուսակցության» դեմ ոպպողիցիա յե կադմում:

### «ՖԵՌԻԱԼԱԿԱՆ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերջապես խոշոր-ֆինանսական - բուրժուական հետադիմական այդ կուսակցությունը լրանում ե թյուրքական հասարակական կյանքում հանդես յեկած մի յերբորդ խմբավորումով: Մենք այստեղ ինկատի ունենք

այսպես կոչվող «Մուդաֆայի-Հակուկ» (իրավունքներ պաշտպանության ընկերություն) № 2 կուսակցությունը: Այդ կուսակցության քաղաքական ուսմունքը չափազանց յերերուն և անվորոշ ե: Նա ներկայացնում ե հետաձայն խաշնարած-հողագործ վիլայեթների շրջանների, նահանգների) վիթխարի ֆեոդալական-անգնվական հողատերերի և բարձրաստիճան սե հողերակաշնության շահերը: Այս խմբակն անցյալ տարվա ընտրություններին խիստ պարտություն կրեց և համարյա վոչ վոքի չկարողացավ մեջլիս մտցնել, թեև առաջին մեջլիսում նա 85 տեղ ուներ:

### «ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ» ԿԱՄ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դեռ Կոմինտերնի յերկրորդ կոնգրեսի մեջ ցույց տրվեց, թե ինչպես գաղութային և կիսագաղութային յերկիրներ բուրժուական նացիոնալիզմի ներկայացուցիչները հմտորեն շահագործում եյին Խորհրդային Ռուսաստանի բարոյական և քաղաքական հեղինակությունը, հարմարվելով բանվորների դասակարգային բնադդին, «սոցիալիստական» և «կոմունիստական» ձև տալով իրենց բուրժուական-դեմոկրատական ձգտումներին: Քեմալականներն ստեղծեցին կառավարական «կոմունիստական կուսակցություն» այն նպատակով, վորպեսզի Խորհրդային Ռուսաստանին համակիր անատոլիական բանվորներին և գյուղացիներին յետ պահեն իսկական կոմունիստական կազմակերպությանը միանալուց: Հենց վոր Անատոլիայի բուրժուազիան ուժեղացավ, լուծեց այդ «բանվորա-գյուղացիական»



կուսակցութիւնը, վորովհետեւ իրեն այլեւս հարկաւոր չենք:

Թյուրքիայի կոմմունիստական կուսակցութիւնը դատապարտվեց ընդհատակյա վիճակի: Այդ կուսակցութեան սահմանադիր ժողովը տեղի ունեցավ 1922 թվի հոկտեմբերին: Անցյալ տարվա մայիսին Քեմալի կառավարութիւնը ջախջախեց Թյուրքիայի կոմկուսին, ձերբակալեց նրա առաջնորդներին և փակեց նրա թերթերը:

Սակայն Թյուրք բուրժուազիային չի հաջողվի վոչնչացնել յերկրի կոմմունիստական շարժման սաղմերը: Չնայած վոր նա բարձրորոս կերպով վորսաց կոմ. կուսի հիմնադիր ու առաջնորդ Մուստաֆա Սուրհիին և նրա Անատոլիայի ընկերներին, ծովասուղ անկող բոլորին, բայց և այնպէս հեղափոխական-կոմմունիստական շարժումը Թյուրքիայում կանգ չի առել: Նա՛ դատապարտված ընդհատակյա վիճակի, չի դադարում դեկավարել յերկրի բանվորական շարժումը՝ կազմակերպելով գործադուլային կռիւլը, բանվորական մասսաների քաղաքական յեղույթները:

#### ՅԵՐՐՈՐԴ ՊԼՈՒՆ

### ՍՈՒԼՅԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ ՅԵՎ ԽԱԼԻՖԱ-ՅՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Թյուրքական բանակը դեռ նոր եր ծով ձգել հունական բանակին, յերբ ազգային հեղափոխական-բուրժուական մտավորութիւնը ամբողջ ուշժով նետվեց սուլթանութեան վրա: 1922 թվին մեջլիսը քեմալական

պատգամավորներին և սուլթանի կողմնակից մի խումբ պատգամավորների յերկարատե կռիւներից հետո վորոշեց տապալել Վահիդ-Նեդին սուլթանին, վոր մի հարմար ժամանակ փախավ անգլիական զինվորական նավով: Ահա թե ինչ եր գրում Քեմալի կիսապաշտոնական «Յենի-գյուն» (նոր ուր) թերթը. «Սուլթանութիւնն արդեն իր շրջանն ապրել է, և վորպէս լուծվող դիակ՝ նա դարձել է ժողովրդի համար չարիք: Իր կյանքը վրկելու պարտականութիւնը հենց իրեն՝ ազգի վրա յեւ գրված եր, և ազգը հասկացավ այդ. — նա պատամբեց սուլթանութեան դեմ»:

Սուլթանութեան վերացման դեմ հայտնապես դուրս յեկավ պատգամավորների ֆեոդալ խումբը: Բայց փոխադարձ դիջում կատարվեց: Մեջլիսը համաձայնեց պահել խալիֆայութիւնը՝ նշանակելով փախած սուլթան Աբդուլ-Մեջիդի վորդուն՝ Ոսմանների տոհմի ներկայացուցչին վորպէս մուսուլմանների կրօնական ներկայացուցիչ:

Տիրող քեմալական խմբի համար չափազանց բընորոշ է Մեջլիսի այս կիսատ քայլը: Քեմալականներին հատուկ է տատանման և յերերձան քաղաքականութիւնը, վորպէս տիպիք և արմատական ժանր-բուրժուաների, սիրահարված են Ֆրանսական մեծ հեղափոխութեան հերոսների վրա և ընդորինակում են նույնիսկ նրանց վոճը: Ռեակցիայի կռիւի մեջ քեմալականները մեկ քայլ անում են դեպի առաջ և յերկուսը՝ դեպի հետ: Նրանք չեն վճռում կտրել հակահեղափոխութեան տնտեսական արմատները, ֆեոդալական կալվածների գրավման ճանապարհով: Նրանք տապալում են սուլթանութիւնը և թողնում են խալիֆա-



յությունը: Իսկ հետադիմական ոպոզիցիան հմտորեն ուշադրեցում է քեմալականների գեղոգությունները իր դասակարգային հակահեղափոխական նպատակներին համար:


Ֆեոդալական բարձր շերտը տնտեսապես չտուժեց հեղափոխությունից: Ֆեոդալներն այժմ ել են տիրապետում գյուղում: Ստորե բերված ցուցակը, վոր մոաավորապես ճիշտ է, Թյուրքիայում՝ պատերազմի ժաժանակվա վիճակագրություն չլինելու պատճառով, ցույց է տալիս այդ խոշոր հողատիրական խմբի հզորությունը:

Թյուրքիայի ամբողջ մշակելի հողերից ունեն՝  
Ագնվականները (բեյ) 30,000,000 հեկտար  
Խոշոր հողատերեր (աղա) 20,000,000 »  
Միջակ-ուներ գյուղացիները  
(պուրտա) . 24,900,000 »  
Աղքատ գյուղաց. (ֆուկր) 2,500,000 »

Այսպիսով մշակելի ամբողջ հողերի 65 տոկոսը պանվում է ֆեոդալների ձեռքում, 35 տոկ. միջակ հողատերերի, և միայն 2 տոկոսն է, վոր բաժին է հասնում աղքատներին:

Հեղափոխությունը տակավին անձեռնմխելի չէ թողել ֆեոդալների առանձնաշնորհումները: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս անատոլիական «ցուլերին» ամեն անգամ հարձակման դիմել և ուժեղ ճնշում գործադրել քեմալականների վրա:

Արևելյան Անատոլիայի Թյուրք ֆեոդալները քայլում են ձեռք ձեռքի Պոլսի վաշխառու-միլարդներին հետ՝ միացյալ ույժերով կռվելու հեղափոխության ավելի խորացման դեմ:



ԻԶՄԵՐ-ՓԱՆՆ

ԲԵՄԼՊՈՐԵ



Պոլիսը, Ոսմանյան տոհմի անցյալ մայրաքաղաքը, չի կարող թրքական հանրապետության մայրաքաղաք «Կեղտոտ» Անգորային ներել իր անկումը: Պոլիսը սարսուռի յենթարկեց ազգային-ազատագրական շարժումը: Ծախված սուլթանը ե նրա շառավիղներն ամեն կերպ վնասեցին ազատասեր Անգորային, վոր ժողովրդական ույժերի կազմակերպման կենդրոն դարձավ ընդդեմ իմպերիալիզմի: Սուլթանական Պոլիսը չճանաչեց հեղափոխական Անգորային:

Իրա փոխարեն Անգորան նրան իջեցրեց վիճակի, նահանգական քաղաքի աստիճանի \*):

Մինչև խալիֆի արտաքսվելը Պոլիսը դարձել էր հակահեղափոխական ույժերի ժողովման կենդրոն: Հետադիմականները պահանջում էին խալիֆ Աբդուլ-Մեջիդին ոժտել քաղաքական իշխանության լիազորություններով, ուրիշ խոսքով՝ նրանց պահանջը նըշանակում էր վերահաստատել սուլթանությունը:

### ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԼԻՎԼԻԴԱՑԻԱՆ

Քեմալական թյուրքիային չհաջողվեց լիակատար անկախության հասնել Լոզանում:

Քեմալականները գնեցին կրճատված քաղաքական անկախությունը: Դարդանելից հրաժարվելու, Դարդանելի նեղուցի բանալիները Անգլիային հանձնելու գնով:

\*) Բայց մայրաքաղաքը Անգորայից Պոլիս տեղափոխելուց հրաժարվելը բացատրվում է նրանով, վոր հանրապետական կառավարությունը չուզեց ռիսկ անել և ընկնել անգլիական հաժանավերի ուժեղացման տակ Դարդանելի կողմից:

Ուսուցիչիան վորոշեց ոգտագործել այդ փոքրիկ կապիտալը: Ֆեոդալներին, խոշոր ֆինանսիստներին, հետադիմական մոլլաներին և անգործ պոլիտիկոսներին բաղկացած այդ ուսուցիչիան համարյա թե թյուրքիայի «ազգային» անկախության պաշտպանի շրջազգեստ հագավ: Կապված լինելով գլխավորապես ֆեոդալական կապիտալիստների հետ՝ նա ոգտագործեց իր տնտեսական գորությունը պարլամենտից դուրս, կառավարություն վրա ճնշում գործադրելու համար: Հենց այդ ժամանակ էլ տնտեսական ճգնաժամը սուր կերպարանք ստացավ:

Բայց այստեղ կառավարության համբերությունը վերջանում է և նա դիմում հարձակման: 1924 թվի մարտին Մեջիդը վորոշում է արտաքսել խալիֆին և 33 պրինցներին: Ճիշտ է, այդ արտաքսումը ավելի շուտ նման էր պատվավոր աքսորի: Արտաքսյալներին տրվում է 100 հազար լիրա միանվագ նպաստ, նրանց իրավունք է վերապահվում 1 տարվա ընթացքում լիվլիդացիայի յենթարկել իրենց անշարժ գույքը: Բայց մյուս կողմից վակուֆ (յեկեղեցապատկան) հողերը զրավում են հոգուտ պետություն: Մահմեդական հոգեորականությունը զրկվում է իր հոտի վրա ազդելու տնտեսական ուժեղ գնեքից: Մահմեդական յեկեղեցին ամբողջապես կախումն է ունենում պետությունից:

Քեմալականներն այնուամենայնիվ չեն համարձակվում ավելի հեռու գնալ և լիովին թուլացնել ու վոչնչացնել ֆեոդալիզմը: Արմատական - բուրժուական «ժողովրդական կուսակցությունը» խարխափող կիսատ-պուտ և պոլիտիկան—ուսուցիչիանստական է:



Նրա աչքն ամբողջ ժամանակ ֆեոդալների կողմն է՝ փոխենալով նրանց չափազանց զրգուկուլուց:

## „ԱՇԱՐԻ“ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Թյուրք բուրժուական կառավարութեան ամենամեծ ռեֆորմը՝ սուլթանին տապալելուց, հանրապետութիւն հայտարարելուց և խալիֆային արտաքսելուց հետո հանդիսանում է ճորտատիրական տասանորդի՝ «աշար» հարկի վերացումը:

Քեմալականներն ամբողջ ժամանակ աշխատել են կապ հաստատել գյուղացութեան հետ: Նրանք Անատոլիայից դուրս քշեցին հույն գյուղացիներին և դրանց կայքը բաժանեցին թյուրք գյուղացիներին: Քեմալականներն զգալի չափով մեղմացրին ծխախոտի մենաշնորհը (ոսթի) պայմանները՝ յերկրագործներին հնարավորութիւն տալով զբաղվելու իրենց ուղած ծխախոտի տեսակի մշակութեամբ: Շրջանային ընտրական խորհուրդներին տվեցին վորոշ անկախութիւն: Զգալի կերպով ուժեղացրին «Յերկրագործական բանկի» գործունեութիւնը:

«Գյուղացին մեր յերկրի տերն է», ասում է մի անգամ Մուստաֆա Քեմալն իր ճառի մեջ: Մեջլիսի սոցիալական կազմից մենք արդեն տեսանք, վոր յերկրի այդ «տերը» նույնիսկ մեկ ներկայացուցիչ չունի պարլամենտում: Մինչդեռ հատկապես գյուղացութիւնն է իր ուսերի վրա կրել ազգային պատերազմի ամբողջ բեռը: Ապագա հատուցման հուսով գյուղացիներն իրենց գույքը, իրենց աշխատանքն ու արշուները զոհ բերեցին ազատութեան համար մղվող ազգային

պատերազմի սեղանին: Գյուղացիները բանակին տրվեցին կովի ընդունակ ամբողջ արական ազգաբնակչութեանը: Ամբողջ գյուղեր անբնակ դարձան: Նույնիսկ զեղջկուհիները Անատոլիայի սպանիչ ճանապարհներով յեղներով զինամթերք եյին տեղափոխում գեպի ձակատ:

Կառավարութիւնը վերջապես հազիվ այս տարվա հուլիսին վորոշեց հարկային ռեֆորմ անցկացնել՝ փոխելով բերքային «աշար» հարկը դրամական հարկի:

Վորպեսզի հասկանանք, թե գյուղացութեան համար ինչ թշվառութիւն է նշանակում այդ ճորտատիրական հարկը, մենք պետք է կանգ առնենք «աշարը» գանձելու ձևի վրա: Սովորաբար «աշարը» գանձվում էր միջնորդների ձեռքով:

Կառավարութիւնն իր «աշարի» իրավունքը ծախում էր մասնավոր մարդու: Այս վերջինը դիմում էր ամեն տեսակ բռնութեան, վորպեսզի գյուղացիներից ըստ կարելույն շատ քաշե:

Յուրաքանչյուր գյուղ ծախվում էր առանձին աճուրդով, և միևնույն անձը կարող էր մի քանի գյուղերի միջնորդ դառնալ: Մինչև «աշար»-ի հալածման վերջնալը միջնորդը գյուղի լիակատար տերն է: Առանց նրա վորոշման գյուղացին իրավունք չունի կալից ցորենը և հարդը հավաքել. նա չի կարող ցորենը շուկա տանել, կամ թե աղալու համար լվանալ ու չորացնել: Միջնորդ-կապալառուն «աշարը» հավաքելու համար գյուղ է գալիս մի ամբողջ շքախմբով և գյուղի հաշվին էլ ապրում է: Կապալառուների կամայականութիւնները գյուղում աննկարագրելի յեն:

«Աշարը» հավաքելու ուրիշ միջոցներ էլ կան,



բայց վերոհիշյալն ամենից ավելի գործածականն ե ու ծանրը, վոր Թյուրքիայի գյուղացությանն ահ ու սարսափի մեջ են պահել:

«Աշարը», զրում ե թրքական Մեջլիսի բյուջետային հանձնաժողովի զեկուցողը, «մեր ժողովրդական տնտեսության վրա բացված մի վերք ե, վոր փտախաի յե փոխվում»:

«Շնորհիվ «Աշարի» յերկիրն արտադրում ե միայն այն քանակությամբ մթերքներ, ինչ վոր հազիվ հազ բավարարում ե՝ խիտ լինելուց շատ հնուտ իր ազգաբնակչությանը», կարգում ենք մենք նույն փաստաթղթի շարունակության մեջ:

«Աշարը» կամ տասանորդը Մահմեդի ժամանակվա մնացորդներից ե, և սակայն հազիվ 1924 թվի ամառը փոխարինվեց դրամական հարկով, վորով և վոչնչացավ միջնադարյան հարկային սխտեմի այդ մնացորդը: Սրանով ել թրքական գյուղում ճանապարհ հարդվեց կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար:

Սա թրքական կառավարության համար մի մեծ պլյուս ե: Բնորոշ ե, վոր կառավարությունը մտքեց այս խոշոր ռեֆորմը պարլամենտի յերկարուձիգ արձակուրդի ժամանակ: Քեմալական կառավարությունը «աշարի» վերացմամբ մի մեծ քայլ արեց դեպի առաջ՝ չյուզը ֆեոդալական ճորտատիրական հարաբերություններից ազատագրելու ճանապարհի վրա:

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՍԸ ԹՅՈՒՐԳԻԱՅՈՒՍ

Թյուրքիայի 14 միլիոն ազգաբնակչությունից 644,000-ը վարձու բանվոր և ծառայող են: Քեմալի հեղափոխական-բուրժուական կառավարությունը իհարկե չզլացավ իր կրկնակի խնամակալության տակ առնել Թյուրքիայի բանվորական շարժումը: Մենք արդեն գիտենք, վոր նա միևնույն ժամանակ փորձեց ըստեղծել կոմունիստական կուսակցություն ժանդարմական սպաների և բեգերի վարչության տակ: Հաստատուն կերպով վոտքի կանգնելով՝ նա սկսեց կազմակերպել բանվորներին հատուկ պետական գուքատվյան միությունների մեջ: Այսպես կոչվող «Բիրլիկ»-ը (աշխատանքի կոնֆեդերացիա) կազմվեց կառավարական անզգամ գործակալ Շեքիր Ռասսիմի աջակցությամբ:

1923 թվականի սեզոններին կայացած՝ այսպես կոչվող Իզմիրի տնտեսական համագումարին մասնակցում եյին ազգաբնակչության բոլոր դասակարգերի ներկայացուցիչները, վորոնց թվում նաև բանվորական դասակարգին: Բայց բանվորական դասակարգի ներկայացուցիչներն ընտրված չեյին բանվորների կողմից, այլ նշանակված եյին կառավարական կոմիտեաներից: Միայն Պոսի «Այդենլիկ» կոմունիստական խմբին հաջողվեց ընտրել տալ իր ընկերներից մեկին, վոր շուտով իր յետևից տարավ Իզմիրի համագումարի բանվորական ֆրակցիային:



Բանվորական պատվիրակները պահանջներ դր-  
ել են բանվորական որենադրության՝ 8-ժամյա աշխա-  
տանքի, կոալիցիայի և կոլլեկտիվ պայմանագրերի մա-  
սին: Կառավարութունը խոստացավ այդ որենադրու-  
թյունները տալ մեջլիսի միջոցով, բայց հարկավ այդ  
բոլոր խոստումները մինչև որս ել չիրագործվեցին:

Թրքական բանվորական շարժումը տակավին շատ  
յերիտասարդ է: Առաջին բանվորական կազմակերպու-  
թյունները յերևան յեկան 1908 թվին, առաջին յերի-  
տասարդ-թրքական հեղափոխությունից հետո: Այս  
շարժումը նախապատրաստվեց գլխավորապես հայկա-  
կան, բոլղարական և թյուրք-հրեական սոցիալիստա-  
կան տարրերի կողմից: Յերիտասարդ-թրքական կա-  
ռավարութունը անողոք կերպով տրորեց թրքական  
բանվորական շարժման նորագործ ծիւերը: Դրանք  
յերկաթուղու ծառայողներն ու յերկրորաքարշի բան-  
վորներն էյին, վորոնք առաջին անգամ ստեղծեցին  
իրենց փոքրիկ արհմիությունները և կազմակերպեցին  
առաջին գործադուլը թյուրքիայում: 1909 թվականին  
ժամանակի իշխող կուսակցության—«յերիտասարդ-  
թյուրքերի» կառավարությունը հրատարակեց տաժա-  
նակիր աշխատանքի հոչակավոր որենքը գործադու-  
լների դեմ: գործադուլները թուլատրվում էյին միայն  
այն ժամանակ, յերբ կառավարության ներկայացու-  
ցիչը գտնում էր, վոր բանվորների պահանջներն ար-  
ժանի յեն ուշադրության: Այս որենքը ույժի մեջ և  
ձեացել մինչև այժմ:

Կառավարությունը հատուկ ուշադրությամբ հե-  
տևում էր Պոլսի բանվորների արամադրությանը:  
1918-ին, յերբ Պոլիսը գրավվում է անգլո-Ֆրանսական

զորքերի կողմից, բանվորները խիստ կերպով կրում են  
անգլիական և ֆրանսական իշխանության հակահետա-  
խուզումների ազդեցությունը: Միայն մի սրիկա չիլ-  
միի ոգնությամբ անգլիացիք 7000 գործադուլավոր  
բանվոր են ջարդում, վորպեսզի դրանով խաղ սար-  
քեն ֆրանկո-բելգիական կապիտալի գլխին, վորի  
ձեռնարկների մեջ էյին աշխատում այդ բանվորները:  
Վերջապես 1922 թվին, յերբ հետզհետե ավելի  
պարզ պատկերացավ քեմալականների հաղթությունը,  
հակահետախույզ դրավորների ազդեցությունն սկսեց  
թուլանալ:

Իսկ ինչ վերաբերում է այն տերրիտորիային, վո-  
րի վրա տարածվում էր Ադգային Մեծ ժողովի իշխա-  
նությունը, այդտեղ արդեն արտահայտվում էր քեմա-  
լական հովանավորության ազդեցությունը, ինչպես  
վոր մենք քիչ առաջ ցույց տվինք: Անատոլիայի  
յերկաթուղու ծառայողները, Զանգուլագի հանքա-  
գործները և փամփուշտի գործարանների բանվորնե-  
րը իրավունք ունէյին ոգտվելու փոխոգնության գանձ-  
արկից,—և միայն այսքան: Իսկ հանքագործների հա-  
մար հրատարակվեց 8-ժամյա աշխատանքի որենք:

1923 թվի ամառը թյուրքիայի բանվորական  
կյանքը նշանակալից դարձավ խոշոր դեպքերով: Յեր-  
կրի համարյա բոլոր կարևոր բանվորական կենդրոն-  
ներում բարձրացավ գործադուլի ալիքը: Այդ ալիքը  
տարածվեց հսկայական մի շրջանի վրա՝ ընդգրկելով  
32,000 գործադուլավոր բանվորներ. մի թիվ, վոր  
աննախընթաց էր թյուրքական բանվորական շարժ-  
ման մեջ: Ընդհանուր առմամբ այդ գործադուլները  
հայտնապես հաղթանակալի բնույթ էյին կրում: Տըն-



տեսական պահանջներին կից դրված էյին նաև մի շարք քաղաքական պահանջներ, ինչպես, որինակ՝ կո-  
ալիցիայի իրավունք, սոցիալական որոնողություն,  
և այլն:

Այնտեղ, ուր գործադուլները ղեկավարում էյին  
կոմունիստները (Պոլսի տպագրիչներին, Արևելյան  
յերկաթուղու ծառայողներին), պահանջ էր դրված՝  
ամենատես կապ սեղծել ՍեՀՄ հետ:

Բոլոր գործադուլներին 50 տոկոսը վերջացավ բան-  
վորների հաղթությամբ: Այդ գործադուլները տեղի  
ունեցան հետևյալ ձևերով:

|                                                                                          | Գործադուլ<br>անցնող<br>մի օրը | Պիլի<br>մի օրը | Գործադուլ<br>մի ամիսը |
|------------------------------------------------------------------------------------------|-------------------------------|----------------|-----------------------|
| 1. Բոմոնդի գարեջրի գործարան Պոլ-<br>սում 10/VIII-ից մինչև 17/VIII . . . . .              | 300                           | հոգի           | 8 օր                  |
| 2. Գրաշարների գործադուլը Պոլսում<br>7/IX-ից մինչև 15/IX . . . . .                        | 100                           | »              | 8 »                   |
| 3. Արևելյան յերկաթուղու գործարանը<br>18/XI-ից մինչև 25/XI . . . . .                      | 1,400                         | »              | 8 »                   |
| 4. Այդինի յերկաթուղու գործադուլը<br>նոյեմբերին . . . . .                                 | 1,600                         | »              | 10 »                  |
| 5. Ջանգուղադի հանքագործների մաս-<br>նակի գործադուլը (հոկտ. նույնիսկ) . . . . .           | 10,000                        | »              | 3 »                   |
| 6. Ջանգուղադի հանքագործների բնդ-<br>հանուր գործ. 25/VII-ից մինչև 6/VIII 12,000 . . . . . | »                             | 12             | »                     |
| 7. Պոլսի գոկերների նավամատուցի<br>բանվոր. գործադուլը դեկտեմբերին . . . . .               | 600                           | »              | 3 »                   |

|                                                                      | Գործադուլ<br>անցնող<br>մի օրը | Պիլի<br>մի օրը | Գործադուլ<br>մի ամիսը |
|----------------------------------------------------------------------|-------------------------------|----------------|-----------------------|
| 8. Իզմիրի պողպատգործների գործադուլը<br>հոկտեմբերին . . . . .         | 5,000                         | »              | 7 »                   |
| 9. Պոլսի մանածագործների գործա-<br>դուլը հոկտեմբերին . . . . .        | 800                           | »              | 3 »                   |
| 10. Պոլսի շրջակայքի յերկրագործական<br>բանվորների գործադուլը դեկտեմբ. | 130                           | »              | 2 օր                  |
| Գումարը . . . . .                                                    | 32,010                        | հոգի           | 64 օր                 |

Կառավարությունը տեսավ, վոր բանվորական  
շարժումն սկսում է դուրս սահել «գուրատույանների»  
հովանավորությունից: Ուստի հետագայում նա բոլոր-  
ովին լուծեց «Բիրլիկը», աշխատանքի այդ կոնֆե-  
դերացիան, վորի հետ նա սկզբում խաղեր էր սար-  
քում:

Այս ամառ տեղի ունեցավ յերկու գործադուլ՝ մի-  
կը փոստ-հեռագրական ծառայողների և մյուսը ելեք-  
տրաքարշի բանվորների մեջ: Վերջիններս նույնիսկ  
կռվի դուրս յեկան վոստիկանություն դեմ, վորին ոգ-  
նություն հասավ ժանգարմբերիան: Ընդհարումների հե-  
տևանքով միջանիսը վիրավորվեցին և 27 հոգի ել  
ձերբակալվեցին:

Վերջին գործադուլը ցույց է տալիս, թե թրքա-  
կան հանրապետության բանվորները վորքան են հե-  
ռանում քեմալականներից, ոպպողեցիա կադմիտով պե-  
տական իշխանության դեմ, վոր նրանց վրա կրակ է



բաց անում հանուն ազգային բուրժուազիայի և ոտար-  
երկրյա կապիտալի շահերի:

Ազգային միասնական «ճակատը» ձեռքովել եւ  
Բանվորական դասակարգը դուրս ե գալիս, կամ առ-  
նվազն սկսում ե դուրս գալ վորպես կոմմունիստական  
ույժ՝ տեսնելով հանրապետական իշխանության մեջ  
իր դասակարգային թշնամու ներկայացուցչին և պաշտ-  
պանին:

Թյուրքիայի ազգային-հեղափոխական շարժումը  
լավ թե վատ կատարել ե իր առաջին փուլը: Հետըզ-  
հետե «ազգայինը» ծաղկաթափ ե լինում՝ փոխարին-  
վելով պրոլետարիատի վերջնական նպատակների հա-  
մար մղվող դասակարգային հեղափոխական կռիվ:  
Այս շարժումը դեռեւս իր սկզբնական գրության մեջ  
ե գտնվում, բայց նա արագ զարգացման հատկու-  
թյուններ ունի: Նոր եջ ե բացվում Թյուրքիայի յե-  
րիտասարդ բուրժուական հանրապետության պատմու-  
թյան մեջ:

Մենք գտնվում ենք այդ յերկրի խոշոր բանվո-  
րական շարժումների նախորդին, վորոնք հան-  
դես են գալիս կապիտալիստական դարգացման ճանա-  
նապարհի վրա:

Մեծ հուճեւ ե սպասում Թյուրքիայի կոմկու-  
սին...

## Յ Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Ա. Ռ. Ա. Ջ. Ի. Ն. Գ. Լ. Ռ. Ի. Ե.

### ԱԶԳԱՅԻՆ-ՇԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Պիրամիդների յերկրում մենք տեսնում ենք ազ-  
գային-ազատագրական շարժման բոլորովին այլ տիպ,  
քան Թյուրքիայում: Այնտեղ մենք տեսանք, թե ինչ-  
պես յերկրի յերիտասարդ բուրժուազիան փայփայ-  
վեց, սնվեց և մեծացավ գերմանական կապիտալով,  
վորի հովանավորությունը՝ Թրքական բուրժուազիայի  
վրա իր բարձրագույն կետին հասավ պատերազմի ժա-  
մանակ:

Պատերազմը վերջանում ե գերմանական հզորու-  
թյան խորտակմամբ: Հաղթող դաշնակիցները լիկվի-  
դացիայի յեն յեն թարկում գերմանական ձեռնարկու-  
թյունները կամ պարզապես բաշխում են իրենց միջև,  
իսկ իրեն՝ Թյուրքիային բաժանում են «ազդեցության  
շրջանների»:

Հացառատ Անատոլիան կտրվում ե Պոլսից: Հու-  
նա-հայկական բուրժուազիան, դարձյալ անգլո-ֆրան-  
սական կապիտալի հովանավորությամբ, գրավում ե  
պատերազմի ընթացքում կորցրած իր դիրքերը: Թըր-  
քական ազգային «կեղտոտ» բուրժուազիան կանգնում  
ե վոչնչացման սպառնալիքի առաջ: Թրքական դյու-



դական կուլակը տեսնում է առաջացող ազգային և տնտեսական ստրկացման վտանգը:

Անատոլիան անդամահատված, արյունաքամ է յեղած. Արևմտյան Անատոլիայի լավագույն մասը, Իզմիրով միասին հանձնվում է դարավոր թշնամիներին՝ Հույներին: Խալապիք և Ֆրանսացիք տիրում են հարավին և հարավ-արևմուտքին: Իրեն՝ Թյուրքիային թողնված են յերբեմնի Ռոտամանյան կայսրության ալլանդակված կտորները միայն: Վերջ թյուրքիային: Վերջ ձվից նոր դուրս յեկած ազգային բուրժուազիայի տնտեսական տիրապետությունը, վոր զեռ սերտորեն կապված է գյուղի հետ:

Բանակը ստորացած, խայտառակված է: Սուլթանի մինիստրների կողմից ստորագրված Սևրի դաշնագիրը հավիտենականացնում է Թյուրք ժողովրդի ստրկությունը: Իսկ այստեղ՝ լեռների յետեր և Սև ծովի հյուսիս. ամերին ուսական բանվորներն ու գյուղացիները հերոսաբար կռվում են Անտանտի և նրա սպասավորների դեմ, վոչնչացնելով ցարկզմը, սեփականադրելով «հայրենի» և ոտաբերկրյա կապիտալիստներին...

Անցնում է մի առժամանակ և Խորհրդային Ռուսաստանն ուղարկում է Թյուրքիային նյութական ոգնություն: Խորհրդային Ռուսաստանը ցարական Ռուսաստանը չէ, վոր դաշնակիցների հետ վտանատակ երանում թրքական տերրիտորիան. այլ Խորհրդային Ռուսաստանը մոտ բարեկամ է և ոգնության ձեռք է պարզում:

Թյուրք ժողովրդի հաղթական ապստամբության և խալու-ֆրանկո-անգլիական իմպերիալիզմի անհաշ-

տելի հակասությունների ճնշմամբ՝ ձեղքվում է դաշնակիցների ընդհանուր ճակատը Թյուրքիայում: Նախ իտալացիք են հեռանում, իրենց զենքերն Անգորայի թրքական կառավարության թողնելով: Խալապիքներից հետո ֆրանսացիք են քաշում իրենց զորքերը հարավային Անատոլիայից, թողնելով անգլիացիներին և նրանց վարձկան հունական բանակին ճակատ առ ճակատ՝ առյուծի պես մարտնչող թրքական ապստամբ զորամասերի հետ... Տաճիկ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը պսակվում է հաղթությամբ, վորը ձեռք է բերվում քեմալու դեմ մղված արյունալից կռիվներով:

Իսկ Յեգիպտոսում: Իսկալիսի ճանապարհներով այստեղ բուրժուազիան իշխանություն հասավ: Վոչ զինված ապստամբության, այլ կոմպրոմիսների ճանապարհով, վորոնք արվեցին ոտաբերկրյա ստրկացնողների՝ անգլիական նենդ և խորամանակ իմպերիալիզմին:

Այստեղ «մայր կերակրող» Նեղոսի հովտում մենք հանդիպում ենք տարբեր պատմական և տնտեսական դրություն, քան Թյուրքիայում: Այստեղ սոցիալական և միջազգային հարաբերությունների տարբեր կազմ գոյություն ունի, այդ պատճառով ել այս յերկրի ազգային-ազատագրական շարժումը բոլորովին այլ բեռնությ է կրում, քան Թյուրքիայում:

Բրիտանական ուղւպացիան (նվաճումը) Յեգիպտոսում սկսվեց սրանից 41 տարի առաջ: Այդ ժամանակից ի վեր Յեգիպտոսը դարձավ անգլիական իմպերիալիզմի մի գաղութ: Բամբակ և Սուեզի ջրանցք:



Ահա այն յերկու բաները, վորոնք գայթակղեցնում են բրիտանական իմպերիալիզմին:

Անգլիան ամուր նստեց Սուեզի ջրանցքի վրա, վոր ինչպես միջանցք միացնում է Արևելքը Արևմուտքի հետ: Մյուս կողմից անգլիական կապիտալը վերածեց Յեզիպոսը մի հսկայական բամբակի պլանտացիայի, վոր բռնում է յերկրի մշակելի հողերի ավելի քան 40 տոկոսը:

Անգլիացիք Յեզիպոսում հսկայական գումարներ դրեցին, անցկացրին ջրանցքների և պատնեշների մի ամբողջ ցանց, կառուցեցին 4,549 կիլոմետր յերկարությամբ յերկաթուղագլծ, չհաշվելով Սուեանում կառուցվածը, վոր 2,413 կիլոմետր է:

Համարձակ կարելի չէ ասել, վոր յեթե գերմանական կապիտալը ծնունդ տվեց թրքական ազգային բուրժուազիային, բրիտանական կապիտալն ել կյանքի կոչեց Յեզիպոսի տեղական արաբական բուրժուազիային: Պատերազմի ժամանակ և նրան հաջորդող տարիներում հին փարավոնների յերկիրը յենթարկվեց «արդյունաբերական հեղաշրջման»: Հսկայական քանակությամբ մեքենաներ ներմուծվեցին, բազմաթիվ ձեռնարկություններ և բանկեր հիմնվեցին զուտ յեզիպոսական կապիտալով:

Ֆրանսական, բելգիական և հոլանդական կապիտալը նույնպես խիստ կերպով շահագրգռված է Յեզիպոսում, բայց և այնպես անգլիական կապիտալն է, վոր այնտեղ գերիշխում է: Նա յե, վոր «տոն» և տալիս ամբողջ յերկրին: Արտահանվող ամբողջ բամբակի կեսից ավելին Անգլիային է բաժին ընկնում: Ահա թե ինչու Յեզիպոսի հողատեր-բամբակագործները, ար-

տահանողներն ու բանկիրները այնքան ամուր կերպով կապված են անգլիական կապիտալի հետ: Յեզիպոսի ազգային պարտքի բաժնեթղթի կեսը՝ 93 միլիոն ֆունտ ստերլինգը գտնվում է ունևոր դասակարգերի ձեռքում:

Թյուրքիայում գերմանական «բարեկամ» կապիտալը ջախջախվեց. նրա տեղն ուղեցին բռնել դաշնակիցները: Յերիտասարդ տաճկական բուրժուազիան ոգտվեց գերմանական տիրապետության անկումից, վորպեսզի բնդհանրապես ազատագրվի ոսարեկրյա լծից և անկախ դառնա:

Բայց բրիտանական իմպերիալիզմը հաղթական դուրս յեկավ պատերազմական պայքարից: Նա ել ավելի ուժեղացրեց իր գաղութային հզորությունը: Նրա ակցիաները հաստատուն են բորսայում: Նրան վոչ վոք չի կարող դուրս անել Յեզիպոսից: Անգլիացիք ինչպես վոր կային, այնպես ել ֆնացին դրության տերը: Պետք եր միայն հմտորեն ոգտվել 1918—19 թըվերի միջազգային կոնյունկտուրայից, պետք եր միայն սեղմել, վորպեսզի բրիտանական առյուծն ավելի զիջումներ աներ...

Յեզիպոսի ազգային շարժումն սկսվել է շուրջ 27 տարի առաջ: Ազգայնական մամուլը, անգլիական իշխանության դեմ յեղած բողոքի ցույցերը՝ կովի միակ գենքերն էյին յեզիպոսական ազգայնականների ձեռքում: Սրանք ոգտվում էյին Անգլիայի և Ֆրանսիայի միջև յեղած բախումներից, ընդհարումներից և բարված հարաբերություններից: (Վերջինը մի ժամանակ զորեղ ազդեցություն ուներ Յեզիպոսի վրա դեռ Նապոլեոն Առաջինի օրերից):



Պատերազմի ժամանակ Անգլիան ձեական պրոտեկտորատ (պաշտպանութիւն) հայտարարեց Յեգիպտոսի վրա—«միայն պատերազմի ժամանակի համար»։ Յերկրում հայտարարվեց պատերազմական դրութիւն։ Պատերազմի պատճառած տնտեսական քայքայման անմիջական հետեանքը յեղավ՝ գնեթի բնդհանուր յեմ խիստ զգալի անկումը։ Պատերազմը վերջացավ, սակայն անգլիացիք չուզեցին իսկ մտածել պրոտեկտորատը վերացնելու մասին։ Ազգայնականներն սկսեցին հիշեցնել նրանց այդ մասին, բողոքի ցույցերով և հասարակական կարծիքը զինելով։ Զափավոր և ծայրահեղ ազգայնականները տարիներ աշխատելով կարողացան կազմակերպել մասսաները շարժման մեջ դնող ապստամբութիւնը։

Գյուղացութիւնը (ֆելլահները) զգալի չափով շերտավորվեց հատկապես պատերազմի ժամանակ։ Նրա մի կարեւոր մասը բոլորովին հողագործի դարձավ։ Ազգայնական պրոպագանդան նպաստավոր հող գտավ։ Հատկապես քաղաքի բանվորները յենթարկվեցին ազգայնականների ագիտացիային։ Յեգիպտական ուսանողութիւնը, ինչպես վոր ժամանակին ցարական Ռուսաստանում եր, և այժմ Չինաստանում, դարձավ հեղափոխական ազգային շարժման առաջին հրացանածիգը։

Վերսալի խաղաղութեան դաշնագիրն այդ ժամանակ դեռ վերջնականապես չէր կազմված։ Վիլսոնի հռչակավոր 14 կետերը դեռ շատերին իլլուզիաներ եյին ներշնչում, դեռ շատերը Վիլսոնի հայտարարութիւնները հալած յուղի տեղ եյին ընդունում՝ կարծելով վոր շուտով կըվերջանա Յեգիպտոսի անգլիական ոկուպացիան (նվաճումը)։

Սակայն շուտով ընդհանուր հիասթափութիւն առաջ յեկավ։ Պարզվեց, վոր ինքը Վիլսոնն արդարացնում և Յեգիպտոսի անգլիական պրոտեկտորատը։

Անգլիական լծի այդ վավերացումը Յեգիպտոսի վրա՝ Վերսալի համագումարի կողմից կրակի վրա յուղ լցրեց։ Սկսվեցին «անկարգութիւնները»։ Անգլիացիք դիմեցին ազգային շարժման ժողովրդականացած առաջնորդների ձերբակալմանը, վորոնց թվումն էր նաև խոշոր առաջնորդ նախկին վեզիր (վարչապետ) Զադուլ-փաշան։ Զերբակալվածները յերկրից դուրս են արվում։ Անգլիացիների այս արարքը վտռի հանեց ամբողջ յեգիպտական հասարակութեանը։ Յերկրում սկսվեցին ապստամբութիւններ։ Սուէանից մինչև Միջերկրականի ափերը թագավորում և ընդհանուր համերաշխութիւն։ Մեծ քաղաքներում և գյուղերում ցույցեր են տեղի ունենում։ Անգլիական զորամասերն այնպես են բաժանվում շրջանների վրա, վոր ամբողջ յերկրը նմանվում և պատերազմական գործողութիւնների թատերաբեմի։ Քաղաքացիական ծառայողները դադարեցնում են իրենց աշխատանքները։ Կանայք դուրս են պրծնում իրանց արգելանոցներից և մղվող պայքարի մեջ նետվելով, մրցել են սկսում տղամարդկանց հետ։ Ֆելլահները (գյուղացիք) կտրում են հեռագրաթիւերը և քանդում յերկաթուղագծերը։ Յերկաթուղու ծառայողները գործադուլ են հայտարարում, վոր տևում և 47 օր։

Բրիտանական իշխանութիւնն այդ բոլորին պատասխանում և դաժան ճնշումներով։ Ամեն որ մահապատիժներ են կատարվում։ Բայց և այնպես ապստամբութիւնը գնալով ավելի յետարածվում։ Ազգա-



յին-հեղափոխական շարժումը հիշեցնում է մի մը-  
րըրկածով հեղեղ, վոր տապալում է սրբում է իր ճա-  
նապարհի վրա յեղող ամեն ինչ:

1918—1919 թվականներին ազգային-ազատա-  
գրական շարժումն իր բարձրագույն կետին հասավ  
ընդգրկելով ազգաբնակչության բոլոր խավերը: Բացի  
բարձր ֆեոդալական անդակաձևությունից, վոր՝ ինչ-  
պես թյուրքիայում, ծախված եր անգլիացիներին:

Վերջիվերջո անգլիական իշխանությունը դի-  
ջում է: Չաղլուլ-փաշան և ազգային շարժման մյուս  
աջսորված առաջնորդները վերադարձվում են: Լյոյդ  
Ջորջի զիջողությունը, «խռովությունների պատճառներն»  
ուսումնասիրելու նպատակով նրա կողմից լորդ Միլնետի  
հանձնաժողովի առաջումը նեղվածք էն առաջ բերում  
ազգային շարժման մեջ: Չափավոր ազգայնականները,  
Չաղլուլի գլխավորությամբ վերջնականապես բռնում  
են աճուրդի և զիջողությունների ճանապարհը: Վերջ  
«միացյալ ազգային ճակատին»:

1922 թ. փետր. 26-ին անգլիացիների կողմից  
հռչակվում է Յեզիպոսի «անկախության» վերահաս-  
տատումը: Բայց և այնպես պատերազմական դրու-  
թյունը ֆուլ է յերկրում: Ծնշումները շարունակում  
են գործադրվել առաջվա նման:

Անգլիացիք դեռ մի վորոշ ժամանակ հենվում են  
յերկրի հողային և ֆինանսական արխատուհրատիայի  
վրա: Այդ դասակարգի ներկայացուցիչ Ազլի փաշայի  
հետ նրանք համաձայնության են գալիս պրոտեկտո-  
րատը վոչնչացնելու, պատերազմական դրությունը վե-  
րացնելու, արտաքին գործոց մինիստրություն հաս-  
տատելու և սահմանադիր ժողով հրավիրելու մասին:

1923 թվին վերջապես հրատարակվեց բյուրոկրա-  
տական առանձնասենյակների լուծթյան մեջ պատ-  
րաստված սահմանադրությունը: Ըստ այս սահմանա-  
դրության Յեզիպոսն ստանում է ներկայացուցչական  
կառավարություն, վորի մինիստրությունը պատասխա-  
նատու յե յերկու պալատից բաղկացած պարլամենտի  
առաջ: Ստորին պալատի ընտրությունները յերկուս-  
տիճան են, իսկ վերին պալատինը (սենատ)՝ յեռաս-  
տիճան: Այնուհետև անգլիացիք վերցրին պատերազ-  
մական դրությունը, նույն անգլիացիք էլ ներումն շը-  
նորհեցին քաղաքական բանտարկյալներին և աքսոր-  
յալներին: Յերկրորդ անգամ թույլ տրվեց աքսորված  
չափավոր ազգայնականներին՝ Չաղլուլ-փաշայի գլխա-  
վորությամբ վերադառնալ Յեզիպոս:

Անցյալ 1923 թվականի աշնանը կայացան ըն-  
տրությունները, վորոնց մեջ «չաղլուլականները» լիա-  
կատար հաղթություն տարան: Չաղլուլ-փաշան դար-  
ձավ վարչապետ և «հավատարիմ հպատակ» յեզիպոս-  
կան «թագավոր» Ֆուադ Ա-ի: Վերջապես յեզիպոս-  
կան բուրժուազիան իշխանության անցավ:

Մենք տեսանք, թե ինչ ճանապարհով այդ բուր-  
ժուազիան կառավարության դեկը ձեռք ձգեց: Զիջում-  
ների, համաձայնությունների և աճուրդի այդ ճանա-  
պարհը նախորդված է յեզիպոսական բուրժուազիայի  
զարգացման պայմաններով, համախարհային պատե-  
րազմի մեջ հաղթող անգլիական կապիտալի հետ ու-  
նեցած նրա սերտ աշխատակցությունը: Վոչ թե զին-  
ված կռիվ իմպերիալիզմի դեմ, այդպիսի զինված կռ-  
վից յեզիպոսական բուրժուազիան մահու չափ սոսկում  
է, այլ Լոնդոն առաջվող պատվիրակությունների վա-



բաժնեակցությունները մեծապէս ու ձեռք, փողոցները ցուցները—ահա դրանք են յեզիպտական բուրժուազիայի սիրած միակ «զենքերը»:

Յեզիպտոսի ազգային-ազատագրական շարժումը համեմատած թյուրքիայի հետ, ուղղակի ալլանդակութիւն է: Այստեղ մենք տեսնում ենք ճնշված ազգութեան հեղափոխական շարժման զարգացման ուրիշ փուլ: Այստեղ յերկրի բուրժուազիան սողում է իմպերիալիզմի առաջ՝ «արյունահեղութիւնից» խույս տալով...

#### ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

### ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ. «ԶԱՂԼՈՒԼԱԿԱՆՆԵՐ»

Մենք արդէն գիտենք, Վոր «զաղլուխտները» պարլամենտի ընտրութիւնների ժամանակ ստացան ձայների ճշտող մեծամասնութիւն: Նրանք պատգամավորների թիվն է 205:

Այս կուսակցութիւնը չափազանց խայտաբղետ է ըստ իր սոցիալական կազմի: Նրա մեջ մտնում են և խոշոր հողատերերի, ներառյալ թագավորական տան արքայազուններին, և՛ հոգևորականութիւնը, և՛ պաշտոնյաներ, և՛ արհեստավորներ, և՛ հասարակ ֆելլահներ, և՛ մինչև իսկ բանվորներ:

Պետական պաշտոնեութիւնը առաջինը յեղավ, Վոր սկսեց պայքարել անկախութեան համար: Սա մի խմբավորում է, Վոր կլանում է պետական բյուջեի մեծագոյն մասը, անկախութեան է ձգտում լոկ այն նպատակով, Վորպեսզի ավելի չաղ ոռճիկներն ստա-

նա, ինչ Վոր մինչև այժմ ստացել են անգլիական պաշտոնյաներն ու մյուս ոտարյերկրացիները:

Ուսանողութիւնը նույնպէս կազմում է «զաղլուխտներ» կուսակցութեան շուկաներից մեկը: Կուսակցութեան գլխավոր շտաբը կազմված է աչքի ընկնող պաշտոնյաներից, հարուստ հողատերերից և տեղական բռնակալներից:

Այդ կուսակցութիւնը Վորոշ ծրագիր չունի: Նրա հոգին «ազգային հերոս», ներկա վարչապետ Զաղլուխտյանն է: Նրա անվան հետ է կապված Յեզիպտոսի վերջին 40 տարվա ազգային-հեղափոխական շարժման պատմութիւնը: Նա յեր, Վոր Վորդերեց յեզիպտական պատմութիւնը: Նա յեր, Վոր անկախութեան կռիւի համար: Նա դարձավ ազգային հերոս՝ բառիս բուն իմաստով, դրավելով ամբողջ ազգաբնակչութեան վստահութիւնը:

Զաղլուխտ վորպեսզի սկզբնական շրջանում ոգնի ազգային շարժմանը՝ ծախում է իր կարողութիւնը մինչև վերջին աթոռը, և աղքատ չի մնում միայն շրջնորհիվ իր բարեկամների, Վորոնք յետ են դարձնում նրան իր կարողութեան մի մասը: Այն հետապնդումները, հալածանքներն ու աքսորները, Վորոնք նա անձամբ յենթարկվեց անգլիացիների կողմից, դարձրին նրան մի տեսակ առասպելական անձնավորութիւն ժողովրդական լայն մասսաների աչքում, Վորոնք աղթում և աստվածացնում էին նրան:

Զաղլուխտյան «Վաֆտ» (չափավոր ազգայնականների) կուսակցութեան գլուխ անցավ, Վոր մինչև անցյալ տարի յեզիպտական ժողովրդի «մտքերի իշխողն էր»:

Այս կուսակցութիւնը կազմվեց 1906—7 թվա-



կաններին, խորամանկ խեղդիվ Աբրահամ Բ.-ի իշխանութ-  
յան ժամանակ, վոր աշխարհ աքսորի մեջ է: (Պատե-  
րազմի ժամանակ նա հրաժարվեց ընդունել անգլիա-  
կան պրոտեստոնտառ Յեզիպոսի վրա, վորի համար  
էլ վերջիններս կողմից դահլենկեց յեղավ): Զաղլու-  
փաշան գործոն մասնակցություն ունեցավ այս կու-  
սակցության մեջ:

Զաղլուի անունը հայտնի յեղավ Յեզիպոսում  
դեռ 1882 թվականից, վորպես ազգայնականների ա-  
ռաջին ապստամբությանը մասնակցողի: 1907 թվին  
պառակտում առաջ յեկավ այս կուսակցության մեջ:  
Արմատական մասը, վոր բաղկացած էր զեմոկրատա-  
կան տարրերից, միջակ և հարուստ գյուղացիներից,  
մանր վաճառականներից, պաշտոնյաներից և ուսանո-  
ղությունից, բաժանվեց և հիմնեց «անհաշտ» ազգայ-  
նականների կուսակցությունը, «Հիզը-եւ-վաթանի»  
անվամբ: Իսկ Զաղլուը ֆեաջ «Վաֆտ»-ի չափավոր  
տարրերի հետ, վորոնք կողմնակից էին զիջողական,  
համաձայնողական քաղաքականության՝ ինչպես բրի-  
տանական իմպերիալիզմի, նույնպես և յեզիպոսական  
ֆեոդալիզմի նկատմամբ:

Նույնիսկ 1919 թվին, յերբ ազգային շարժումն  
իր ծաղկման բարձրագույն կետին էր հասել, «զաղլու-  
լիստների» նպատակն էր իրագործել Յեզիպոսի ան-  
կախությունը լոկ սուլիերենիտետի գերիշխանության ի-  
մաստով, այն էլ միայն ներքին գործերի շրջանում,  
և նրանք ավելի քան մեկ անգամ պատրաստակամու-  
թյուն հայտնեցին Անգլիայի հետ բարեկամաբար հա-  
մաձայնության գալու՝ ձանաչելով Յեզիպոսում ու-  
նեցած վերջիններիս հատուկ շահերը:

«Զաղլուականները» իշխանության գլուխ անց-  
նելուց հետո, իրենց «չափավոր» քաղաքականությամբ,  
թագավորի և հոգատիրական-ճորտատիրական ազնվա-  
կանության հետ սարքած իրենց խաղերով, սոցիալ-  
տնտեսական լայն բարենորոգություններից հրաժար-  
վելով և բանվոր դասակարգի ու գյուղացու լայն նը-  
կատմամբ գործադրած իրենց «սանձահարկու» քաղա-  
քականությամբ, մեծ հիասթափում առաջ բերեցին ժո-  
ղովրդական մասսաների մեջ: Կառավարող «Վաֆտ»  
կուսակցության վերաբերմունքը դեպի Սուդանի հար-  
ցը (այս մասին քիչ հետո) և դեպի ներքին քաղա-  
քականությունը պետք է շերտավորում առաջ բերե-  
այդ կուսակցության մեջ:

### «ՀԻԶԲ-ԵՒ-ՎԱԹԱՆԻ» ՍԶԳԱՅՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒ- ԹՅՈՒՆԸ

Այս կուսակցությունը պարլամենտում ընդամենը  
5 տեղ ունի: Նա անգլիացիների հետ վոչ մի համա-  
ձայնություն չի թույլ տալիս այնքան ժամանակ,  
վորքան ժամանակ նրանք Յեզիպոսում և Սուդանում  
բանակներ կրպակեն: Սա մանր բուրժուազիայի կու-  
սակցությունն է: Այս կուսակցությունն է, վոր գյու-  
ղական լայն մասսաներին քաջեց ազգային շարժման  
մեջ: Նրա ծայրահեղ ձախակողմյան թեև ընդունում է  
տերրորի (ահաբեկում) սկզբունքը՝ անգլիական իշխա-  
նությունների վերաբերմամբ: «Վաթանիստները» մի  
ժամանակ անգլիական ապրանքների դեմ հաջող կազ-  
մակերպված բոյկոտ սկսեցին: Այս կուսակցությունը  
աղբեցություն ունի նաև բանվորական շրջաններում:  
Սրա անդամներից շատերը մասնակցեցին այդ



միությունները կազմակերպման գործին: Այս կուսակցությունը հանդես ե գալիս վորպես հակառակորդ թագավորի:

Զաղլուլ-փաշայի քաղաքականության վերաբերմամբ սկսված հիասթափությունից և դժգոհություններից հետո հիմք կա յենթադրելու, վոր ապագա ընտրությունները ժամանակ «վաթանխատները» կըկազմեն ամենաազդեցիկ կուսակցությունը: Սրանք ել չունեն վորոշ ծրագիր:

### «Ա Դ Լ Ի Լ Ա Կ Ա Ն Ն Ե Ր»

Այս կուսակցությունը պարլամենտում 5 պատգամավորներ ունի: Նա անգլիացիների ձեռքում մի կույր զենք ե: Նրա առաջնորդ Ադլի-փաշան անցյալ տարվա պարլամենտական ընտրություններում չանցավ, վորովհետև նա իրեն արատավորել եր անգլիացիների հանդեպ ունեցած իր հաճոյակատարությամբ և ծառայականությամբ: Այս կուսակցությունը ներկայացնում ե յերկրի բարձր ֆինանսական, բյուրոկրատական և հողատիրական ազնվականությունը:

### «ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ»

Կոմունիստական կուսակցությունը կազմակերպվեց 1921 թվի ոգոստոսին: Նրան աշողվեց կապվել Յեգիպտոսի բանվոր դասակարգի հետ, վորի անդամների թիվն ե 500,000, վորոնք զբաղված են արդյունաբերության և առևտրի մեջ:

Յեգիպտական կոմկուսի վարած հակաիմպերիալիստական քաղաքականությունը և դառնակարգային հեղափոխական տակտիկան (գործելակերպը) յենթադրեցին նրան խիստ ճնշումներ: Այս տարվա գարնանը

Զաղլուլ փաշայի կառավարությունը խիստ հարձակում սկսեց յեգիպտական կոմկուսի դեմ, մատնելով նրան ընդհատակյա վիճակի: Այս բոլորը կատարվեց Յեգիպտոսի վրա տարածվող հեղափոխական գործադուլների այն ալիքից հետո, վորի լրումն եր գործարարների գրավումը:

### ՅԵԳԻՊՏԻ ԳԼՈՒԽ

### ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մերձավոր Արևելքի մահմեդական յերկիրներից և վոչ մեկում մենք չենք հանդիպում գյուղի այնպիսի սուր շերտավորման, ինչպիսին գոյություն ունի Յեգիպտոսում: Յեգիպտոսը գլխավորապես յերկրագործական յերկիր ե: Արդյունահող և արդյունագործող արդյունաբերությունն այստեղ քիչ ե զարգացած: Բուն Յեգիպտոսում (չհաշված Սուդանը) հողագործության հարմար հողերի տարածությունը հաշվվում 8,040,672 ֆեդան (ֆեդանը հավասար ե  $\frac{1}{3}$  դեսյատին): Այս քանակությունից հազիվ  $\frac{2}{3}$  միլիոնն ե մշակվում, վորովհետև դրա համար նախապատրաստական աշխատանքներ են հարկավոր:

Յեգիպտոսում յերկրագործությունը հիմնված ե ջրաբաշխական կառուցվածքների վրա (ջրամբար, պատնեշ, ջրանցք): Ֆեյլահ յերկրագործները կազմում են ամբողջ ալգաբնակչության  $62\frac{2}{3}\%$ -ը, վորի ընդհանուր թիվն ե  $13\frac{1}{3}$  միլիոն: Ֆեյլահների մի կաթնոր մասի տնտեսությունը զաճաճային վիճակի մեջ ե: Սակավահող և հողագուրկ ֆեյլահները բացակսեցին — վարձու բանվորներ են:



| Սեփականությունների չափը | Ոստերկրացիների սեփականությունների ծախսը. | Թ. ի վ. ը | Տարածությունը | Տեղաց. սեփ. |
|-------------------------|------------------------------------------|-----------|---------------|-------------|
| Մինչև 1 ֆեդդան          | 1,171                                    | 2,185     | 499,154       | 1,226,364   |
| 1-ից մին. 5 ֆ.          | 4,667                                    | 1,788     | 1,075,364     | 509,494     |
| 5-ից » 10 »             | 5,132                                    | 698       | 550,728       | 80,219      |
| 10-ից » 20 »            | 7,721                                    | 543       | 525,083       | 38,557      |
| 20-ից » 30 »            | 7,703                                    | 310       | 281,993       | 11,645      |
| 30-ից » 50 »            | 12,345                                   | 311       | 346,817       | 9,077       |
| 50-ից բարձրը            | 512,747                                  | 1,330     | 1,743,774     | 11,846      |
| Ընդամենը                | 551,487                                  | 7,165     | 5,023,013     | 1,887,202   |

Այս աղյուսյակը վկայում է յեզիպտական գյուղացու խիստ շերտավորման, ինչպես և հողերի ուժեղ կենդրոնացման մասին՝ հոգուտ սակավաթիվ հողատեր ազնվականների: Փաստեմքն ամբողջ գյուղացության միայն  $\frac{1}{4}$  մասն է, վոր հող ունի:

Կուլակները կազմում են գյուղական աղքատակաշուկայի  $\frac{70}{100}$ -ը: Մնացած գյուղացիները (մոտ 4 միլիոն) աղքատ, միջակ կամ ուղղակի հողագործներ են:

Սոցոր հողատերերը սովորաբար իրենց հողը կապալով են տալիս խոշոր կապալառուներին: Այս վերջինները տալիս են հողը փոքր կապալառուներին, իսկ սրանք ել ավելի փոքրերին, վորոնք մշակում են թե կապալով վերցրած և թե իրենց սեփական հողերը: Աղքատները սովորաբար մի բերք են ստանում հողից (կլիմայական պայմանները թույլ են տալիս պարապել հողագործութամբ ամբողջ տարին):

Լայն չափով տարածված են «հարակաշի» (испольщина) և փոխառությունն աշխատանքով հատուցանելու (отработка) ձևերը:

Յերկրգործական բանվորները հաճախ իրենց աշխատավարձի փոխարեն ստանում են մի կտոր հող ոգտագործության համար: Գյուղում խիստ զարգացած է վաշխառությունը:

Յեզիպտոսի Ֆելլահը կալվածատիրոջ և վաշխառուի իսկական ստրուկն է: Ֆելլահն իր գոյությունը քաշ է տալիս աղքատության մեջ: Նա սովոր է ամենաքչով բավականանալ: Դրան նպաստում է կլիմայի մեղմությունը, վոր ֆելլահին չի ստիպում պաշտպանվել ձմեռվա ցրտերից: Ֆելլահը գտնվում է իրականապես աղքատության մեջ և ստրկացած է կրոնական մոլե-



ռանդությամբ, վոր թույլ չի տալիս նրան տեսնելու իր թշվառության իսկական պատճառները: Թերևս ներանով պիտի բացատրել ագրարային (հողային) շարժումների բացակայությունը Յեզիպոսում:

Իշխող զաղուլիստական կուսակցությունը վոչընչով չի թեթևացրել ֆելլաների դրությունը: Զաղուլիստները համաձայնություն կնքած լինելով ֆեոդալների հետ, բնական է, վոր չեյին կարող և չեյին ել կամենամ ձեռնամուխ լինել հողային սեփականության «սրբազործված» հիմքերին:

Միայն այս վերջին տարում է, վոր սկսեցին գյուղացության արթնանալու նշաններ յերևան գալ: Այս բանին հատկապես նպաստեցին քաղաքների խոշոր գործադուլները: Հեղափոխական բանվորները, վորոնք խմբերով հայրենիք են ուղարկվում, հանդիսանում են վորպես տարածողներ բուրժուազիայի և կալվածատերերի դեմ սպստամբած վոգու. դրանք իրենց ձեռքում պահելով իշխանությունը՝ խարազանում են ժողովրդին մտրակներով և կարիճներով:

## ԶՈՐԲՈՐԴ ԳԼՈՒՑ

### ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐՓՈՒՄ

Արդյունաբերության և վաճառականության մեջ զբաղված է ընդամենը 500,000 բանվոր: Փաստորեն Յեզիպոսի բանվորներն սկսել են կազմակերպվել արհմիությունների մեջ սրտնից 10 տարի առաջ: Ազգայնականներն սկզբում ագիտացիա եյին մղում յեզիպ-

տական բանվորների մեջ՝ կազմակերպելով արհմիություններ: 1919 թվին 22 արհմիություն գործադուլ հայտարարեց, իսկ 1921 թվին՝ 44: 1921 թվին կոմունիստներին հաջողվում է կապ հաստատել բանվորական կազմակերպությունների հետ և նրանց հեղափոխական պրոպագանդա մղել: Այդ ժամանակ է, վոր կազմակերպվեց «Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիա»-ն:

Յեզիպոսում շատ գործարաններ և ընկերություններ կան, վորոնք ունեն 1000-ից ավելի բանվոր:

Ինչպես որինակ՝  
Ելեքտրաքարշի ընկերությունը (Ալեքսանդրիայում)  
ունի 4,770 բան.

Բանբախադաշի գործարանում (Ալեքսանդրիայում)  
ունի 6,000 բան.

Շաքարի գործարանները (Գահիբեյի մոտ)  
ունի 4,000 բան.

Նավթահորերը (Սուեզի ջրանցքի մոտ)  
ունի 1,200 բան.

Ազգային մանածարանը (Ալեքսանդրիայում)  
ունի 1,600 բան.

Յեզիպոսի ամենաուժեղ միջազգային կազմակերպությունը Սուեզի ջրանցքի բանվորների կազմակերպությունն է: Այդ միությունը ունի 6,000 բանվոր:

Զաղուլ-փաշայի կառավարությունն ի դերեվ հանեց Յեզիպոսի բանվորների հույսերը: Բանվորներն սպասում եյին, վոր իրենց դրությունը կը բարելավվի, յերբ Զաղուլն իշխանությունն ստանձնի: Իսկ յերբ նրանք համոզվեցին, վոր ներկա զիկատորը չի գործադրում իր խոստումները, սկսեցին զիմել գործադուլներ:



Ալեքսանդրիայում բանվորները զբաղեցին ամենախոշոր գործարաններից մեկը: Այս պատահեց 1924 թ. փետրվարին: Գործարանի տները մասնակի զիջումներ արին: Այս առաջին հաջողությունը խրախուսեց նաև մյուս գործարանների բանվորներին, և այնուհետև սկսվեց գործարաններ զբաղեցու շարքը: Կառավարությունը ոգնության հասավ կապիտալին և զինվորական ուժեր ուղարկեց խռովությունները ճնշելու, վորոնք անսովոր չափերի յեյի հասել: Զինվորական ուժերի սպանությունիցի տակ՝ բանվորներն ստիպվեցին դատարկել գործարանները:

Արևելքում չտեսնված մի յերեվույթ և այս, յերբ 3,000 տարի շարունակ հեզության ու հնազանդության տիպար յեղած բանվորները հանկարծ գործարաններ են զբաղում, բանվորական պահակ են կանգնեցնում, և տներին թույլ չեն տալիս ներս մտնել, կառավարիչներին բանտարկում են և միայն գործադուլային կոմիտեյի վորոշմամբ և, վոր նրանց ազատ են արձակում, այդպիսի մի անսովոր յերեվույթ սարսափ և զատճառում ձկարգութի մարդկանց:

Մյուս քաղաքների բանվորներն սկսում են հետեւ Ալեքսանդրիայի բանվորների որինակին: Քաջերով և յերկաթե ձողերով զինված՝ նրանք զբաղում են գործարանները, բաժանում են նբանցում յեղած պահեստները և զիջում են միայն զինվորական ուժի ճնշման տակ:

Զաղլուլի կառավարությունը պետական ապարատի ամբողջ ույժով հարձակվեց բանվորների և կոմկուսի վրա: Նա ջախջախեց վերջինիս, ինչպես նաև աշխատանքի կոնֆեդերացիան: Յերկրի բանվորների և



ԸՆԿ. ՀՈՒՍՆԻ-ԵԼ-ԱՐԱՔԻ



հեղափոխականների դեմ թագավորեց տերրովը: Բուրժուական մամուլը կատաղեց: Յեզիպտական կոմկուսիկենտկոմի անդամները՝ ընկ. Հուսնի-ել-Արաբիի գլխավորութեամբ բանտ ձգվեցին: Նրանց սպառնում է բազմամյա տաժանելի բանտային կյանք:

Ձաղուլի կառավարութունը վորոշեց բոլոր միջոցներով ճնշել յեզիպտական բանվորների մեջ տարածված ապստամբական վոգին: Նա զիմեց կապիտալիստական յերկիրներին և ցարական կառավարութեանը հատուկ բոլոր սովորական միջոցներին, իշարս վորոնց և զուբատովչինայի: Նա վորոշեց մեկ կողմից ճնշել բանվորական հեղափոխական շարժումը, իսկ մյուս կողմից ձեռք դնել նույն այդ շարժման վրա՝ կազմակերպելով պետական, վոստիկանական արմիր-ություններ:

Ձաղուլն ինքը գնաց Հելիոպոլիսի մի գործարան (Գահիրեյի մոտ) և սկսեց շողոքորթել բանվորներին ինքնասիրությունը: Իսկ նրա գործակիցներից մեկը Աբդու Ռահման-բեյ-Ֆահմի (մի ժամանակ սա անգլիացիների դեմ տերրորիստական մահափորձեր կազմակերպելու պատճառով՝ մահապատժի դատապարտվեց) սկսեց «հայրենակցական» բանվորական միություններ կազմակերպել:

Սակայն բանվորներն ըստ մեծի մասին բոյկոտի յեն յենթարկում այդ միությունները: Գործարանների գրավումը շարունակվեց ամբողջ ամառը՝ մերթներքին, մերթ վերին Յեզիպտաում: Յերկաթուղու, պոստի և հեռագրի ծառայողները նույնպես գործադուլ արին՝ պահանջելով աշխատավարձի հավելում և 8 ժամյա բանվորական օր:

Ձաղուլականները շատ բան կորցրին բանվորների աչքում: Դասակարգային հեղափոխական բնագրը վերջին ժամանակներս խիստ զարգացավ յեզիպտական պրոլետարիատի շարքերում: Նա արդեն գիտե, վոր ինքը և այդ բուրժուազիան մեկ ճանապարհով չեն կարող գնալ:

Վերջին տարվա ընթացքում պրոլետարիատը զգալի չափով առաջագիմեց, նա սկսեց իրեն գիտակցել վորպես ինքնուրույն դասակարգ: Այն կռիվը, վոր պրոլետարիատը մղում է ընդդեմ Մեծ Բրիտանիայի իմպերիալիզմի և ընդդեմ Ֆեոդալիզմի, ինչպես և այն պայքարը, վոր նա տանում է Յեզիպտոսը ճորտատիրական քնացորդներից ազատագրելու և յերկրի լիա-կատար դեմոկրատականացման համար, այդ բոլորը նա անում է միացած գյուղի յեվ քաղաքի այն սոցիալական ուլժեի հետ, վորոնք նույնպես գտնվում են կապիտալիստական ռահագործման հնձման տակ:

Յեզիպտական բուրժուազիան յետի թաթերի վրա յե քայլում անգլիական կապիտալի առաջ: Նա չի կամենում անգլիացիներին ույժով ծովը նետել: Նա չի կամենում թագավորին և ֆեոդալական ազնվականութեանը տապալել: Նա անվոդնաշար է: Նա նապաստակի պես վախկոտ է: Այդ բուրժուազիային վախեցնում է սոցիալական հեղափոխութեան կարմիր ուրվականը, վորի փայլը յերևաց նրան սրանից ընդամենը միքանի ամիս առաջ, յերբ գործարանները գրավվեցին բանվորների կողմից:



## ՍՈՒԴԱՆԻ ՀԱՐՑԸ

Սուդանի հարցի մասին Անգլիայի և Յեզիպոսի միջև 1889 թ. կնքված դաշնագրի մեջ ասված է. «Անգլիան համաձայն հաղթողի իրավունքների, մասնակցում է Սուդանի շինարարությունը»:

«Սուդանի բարձրագույն իշխանությունը պատկանում է յեզիպոսական թագավորին, վոր նշանակում է իր տեղակալը՝ համաձայն անգլիական կառավարություն հանձնարարություն»:

Ինչպես տեսնում ենք, այս դաշնագրի մեջ պարզ ասված է, վոր յեզիպոսական բուրժուազիային է պատկանում Սուդանի գերիշխանությունը (սուվերենիտետ): Բայց և այնպես Անգլիան վերջին տարիներս մեծ աշխոթակ է հայտնաբերում ի հաշիվ այդ յերկրի, վորտեղ 5-միլիոն սկամորթ է ապրում:

Սուդանը բռնված է յեզիպոսական զորքերով: Մոտ 24,000 զինվոր ունեցող յեզիպոսական բանակից շուրջ 4,400 զինվոր է պահվում բուն Յեզիպոսում, իսկ Սուդանում շուրջ 19,200 զինվոր է տեղավորված:

Սուդանը փաստորեն գրավված է յեզիպոսական զորքերի կողմից 80-ական թվականներին: Բայց անգլիական իմպերիալիզմը չի ուզում հրաժարվել Սուդանից հետևյալ յերկու պատճառներով.

Առաջին. նա՝ ով տիրում է Սուդանին, փաստորեն տիրում է նաև Յեզիպոսին: Նեղոսը՝ նախքան ղելթաների հովիտը հասնելը, հոսում է Սուդանով, սկիզբըն առնելով Ուգանդի կոչվող աղբյուրներից:

Անգլիացիք իրենց ձեռքում ունենալով Սուդանը, կարող են ամբարտակադոներ լինել չրանցքները և պահել Յեզիպոսին՝ Նեղոսի հոսանքը կտրենքը սալառնալիքի տակ: Այլ կերպ ասած՝ անգլիացիները քմահաճույքի հետևանքով Յեզիպոսը վորևէ ժամանակ կարող է զրկվել իր միակ վոռոգման աղբյուրից: Անգլիացիք չեն ուզում հրաժարվել Յեզիպոսի վրա ձնշում գործադրելու այդպիսի մի ուժեղ գենքից:

Յերկրորդ. անգլիական կապիտալը դարձրել է Սուդանը մի ընդարձակ բամբակի պլանտացիա: Մեծ Բրիտանիայի լիբերալ կուսակցություն լիդեր Ասկվիտին ինքը իր վորդու հետ գլուխ է կանգնած Սուդանի բամբակի Սինդիկատի, վոր պարլամենտի համաձայնությունամբ անգլիական կառավարությունից մեծ փոխառություններ է ստացել՝ Սուդանում բամբակի մշակությունը զարգացնելու համար:

1924 թ. Ապրիլի 5-ին Սուդանի կառավարության (սա կազմված է գլխավորապես անգլիական պաշտոնյաներից), բամբակի Սինդիկատի և տեղական բամբակաբույծների միջև մի համաձայնություն կայացավ, ըստ վորի Սուդանի բամբակի 40 տոկոսը հանձնվում է վերջիններին, 25 տոկոսը բամբակի Սինդիկատին և 35 տոկոսը Սուդանի կառավարությանը:

Արդեն մոտ 40 միլիոն ֆունտ ստերլինգ է մտել Սուդան: Բամբակի մշակությունն արագորեն զարգանում է, և Սուդանի բամբակը հետ չի մնում յեզիպոսականից:

Յեզիպոսական բուրժուազիան չի կարող տանել, վոր Սուդանը դառնա անգլիական մի գաղութ: Այդ



բուրժուազիան ինքն ե ուղում տիրանալ Սու-  
դանին, վորպեսզի ինքը շահագործե տեղական ժո-  
ղովրդին պատկանող հողերը: Այնպես վոր Յեգիպտոսի  
հասարակական կարծիքը ծայր աստիճանի հուզվում է  
տեսնելով վոր անգլիացիք տեր ու տնորեն են դառ-  
նում Սուդանում:

Նույնիսկ Ջադուլուն ինքը՝ ազգային կառավա-  
րություն կազմելիս հայտարարեց, վոր Սուդանը կազ-  
մում է Յեգիպտոսի անբաժան մասը: Այս տարվա ա-  
մառը, վոչ առանց յեգիպտական կառավարության  
մասնակցության, մեծ ղեպքեր տեղի ունեցան Նար-  
թումում (Սուդանի գլխավոր քաղաք), Ատրարում,  
Պորա-Սուդանում և ուրիշ քաղաքներում: Յերկաթու-  
քագծի յեգիպտական բատալիոնը և զինվորական զըպ-  
րոցի աշակերտները ցույցեր կազմակերպեցին՝ պահան-  
ջելով վոր Սուդանը միացվի Յեգիպտոսին: Այդ ժա-  
մանակ Ջադուլ-փաշան Փարիզումն էր:

Անգլիացիք չհապաղեցին Սուդան ուղարկել պա-  
տերազմական նավեր և սավառնակներ: Մակդոնալդի  
ազենտները յետ կանչեցին իրենց զորքերը: Տեղի ու-  
նեցան արյունալից ընդհարումներ:

Յեգիպտական կառավարությունը սարսափեց իր  
իսկ առաջ բերած շարժումից և նահանջի հրաման ար-  
ձակեց: Նա ինքը հրամայեց ձերբակալել ապստամբու-  
թյան ղեկավարներին, սպանելին ու զինվորներին:  
Նա շտապեց հանգցնել այն կրակը, վոր բորբոքվում  
էր ընդարձակ տարածության վրա՝ վերին և ներքին  
Յեգիպտոսում: Նա զիջեց և ընկրկեց անգլիական կա-  
ռավարության առաջ: Նա լրբաբար համաձայնեց կազ-  
մել անգլո-յեգիպտական խառը զինվորական ատյան՝

դատելու իր իսկ կողմից զրդված յունկերներին,  
սպանելին ու զինվորներին: Յեվ անձնատուր լինելու  
ու կայենական այս ամբողջ տակտիկան նրա համար  
էր, վորպեսզի իրեն արդարացնի Մակդոնալդի աչքում:

Վերջինս այդ միջոցին դնաց ժընև Աղգերի Լիգայի  
ժողովին մասնակցելու և իր «խաղաղության» շնոր-  
հաբաշխության համար նա նույնիսկ չուզեց Փարի-  
զում կանգ առնել՝ Ջադուլ-փաշայի հետ տեսակցելու  
համար: Մակդոնալդը այն ժամանակ միայն Ջադու-  
լին Լոնդոն կանչեց Սուդանի հարցի մասին բանակ-  
ցելու համար, յերբ յեգիպտական կառավարությունից  
բավարար համոզեցուցիչ ապացույցներ ստացավ վեր-  
ջինիս ստրկամտության և ստորաքարշության մասին:  
Այդ բանակցությունները, ի միջի այլոց, վոչ մի ար-  
դյունք չտվեցին:

Մենք դիտմամբ կանգ առանք Սուդանի վրա,  
վորպեսզի ավելի վառ գույներով պատկերանա յեգիպ-  
տական «ազգային կառավարության անգորությունը,  
ապիկարությունը և հաճոյակատարությունը: Յեգիպ-  
տական բուրժուազիան իր տեղը տաքացրել է անգլի-  
ական կապիտալի գրկում: Նա կարող է միայն փորի՝  
վրա սողալ այդ կապիտալի առաջ:



## ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

Մ Ա Ր Ո Կ Կ Ո

Մինչև այժմ մենք ուսումնասիրեցինք Մերձավոր Արևելքի մահմեդական այնպիսի յերկիրներ, վորտեղ ազգային-հեղափոխական շարժումն արդեն կատարել է իր զարգացման առաջին փուլը և վորտեղ ճնշված ազգություն բուրժուազիան արդեն գրավել է պետական իշխանությունը: Միևնույն ժամանակ տեսանք, վոր մի յերկրում, ինչպես Տաճկաստանում, ոտար կապիտալով առաջ յեկած ազգային բուրժուազիան հասավ համարյա քաղաքական լիակատար անկախության և քաղաքականապես ու մասամբ ել տնտեսապես տապալեց ֆեոդալիզմը իր բոլոր ճյուղավորումներով: Ազգային հեղափոխությունն այստեղ ուժեղ կերպով խորացավ և բուրժուազիան իր ձեռքն առավ պետական ամբողջ ապարատը: Մերձավոր Արևելքի մի ուրիշ գաղութային յերկրում, ինչպես Յեգիպտոսում, ազգային-ազատագրական շարժումը թեև թերի կերպով կատարեց իր առաջին փուլը՝ պետություն ղեկը բուրժուազիայի ձեռքը տալով, բայց այդ յեղով բրիտանական իմպերալիզմի և տեղական ֆեոդալիզմի գործարքի միջոցով: Յեգիպտոսի տեղական ազգային բուրժուազիան բաժանեց իշխանության «բեռը» ֆեոդալական-ճորտա-

տիրական ազնվական դասակարգի հետ: Յեգիպտոսը մնաց բրիտանական առյուծի ճիրաներում: Բուրժուազիայի և բանվոր-գյուղացիական մասսաների միջև, ընդամին և քաղաքի մանր բուրժուազիայի, փորվեց համարյա անանցանելի մի անդունդ:

Այսպես թե այնպես Տաճկաստանում, ինչպես նաև Յեգիպտոսում կովի առաջին փուլը վերջացավ և բուրժուազիան, նախկին վոչինչը դարձավ «ամեն ինչ», կամ համարյա «ամեն ինչ»:

Այժմ մենք անցնում ենք Մերձավոր Արևելքի ուրիշ յերկիրների ուսումնասիրությանը, վորտեղ ազգային-ազատագրական շարժումը տակավին իր զարգացման առաջին փուլի մեջ է գտնվում և դեռ յերկրապարհ, հաղիվ փետրավորված բուրժուազիան կռիվ է մղում քաղաքական իշխանությանը տիրանալու և յերկրի անկախության համար: Այսպիսի յերկիրներից են՝ Պարսկաստանը, Սիրիան և մասամբ Պաղեստինը: Առաջին յերկու յերկիրներում վաճառականական կապիտալը բավական զարգացած է և գոյություն ունի սաղմային վիճակում գործարանային արդյունաբերություն:

Բայց այս յերկիրների շարքում կան և այլպիսիները, վորտեղ ֆեոդալական-պատրիարքական դրությունը դեռ այնքան չի շերտավորվել, վորպեսզի բնիկ ազնվականությունը կտրվի ժողովրդական զանգվածներից, ինչպես, որինակ՝ թափառական և կիսաթափառական ցեղերն են: Այդպիսի յերկիրներում բնիկ առևտրական յեղով, մասամբ և հոգևորականության ներքիստովրատիայի, մասամբ և հոգևորականության ներկայացուցիչները հանդիսանում են վորպես գործոն առաջնորդներ իմպերիալիստական ճնշման դեմ մղվող



կովի մեջ: Ահա այս տիպի յերկիրներէից են Մարոկկոն, Միջագետքը և Տրիպոլիտանիան:

Սկսենք Մարոկկոյից:

Մարոկկոն բաժանված է յերկու «պղքեցութեան շրջաններէ» — սպանականի և ֆրանսականի: Անվանապես Մարոկկայի սուլթանն է համարվում յերկրի վրա իշխողը, բայց փաստորեն կառավարում են ֆրանսացիք:

Մարոկկոյի ազգաբնակչութեան թիւն է 5 և կես միլիոն, իսկ սպանական գոտումը (զոնա) 300,000:

Ինչպես ֆրանսական, այնպես ել սպանական գոտում տիրում է կամայականութուն, կողոպուտ և թաւան: Այնպեղ՝ ուր իմպերիալիստները կարողացել են հաստատուիլ մարդաշինջ մեքենաների ոգնութեամբ, բնիկ ազգաբնակչութունը սեփականազուրկ է արվել և յուր բնից դուրս քշվել:

Ցերկիրը, վոր զուրկ է արդյունաբերութեանից, հետաքնաց է և կողոպտված ֆրանկո-սպանական իմպերիալիստներից, տնտեսական շատ վողբալի վիճակ ունի: Միայն նավահանգստային քաղաքներում է, վոր առևտրական կապիտալը խիստ զարկացած է: Իսկ յերկրի խորքերում տիրում է բնական տնտեսութունը: Պատրիարքական նախնական բարքերը պահված են իրենց կուսական մաքրութեամբ:

Ազգաբնակչութունը կիսաթափառական կյանք է վարում մանավանդ Ատլաս և Ռիֆֆ լեռների բնակիչները (սպանական գոտի):

Ամառը բերբերի ցեղերը քաշվում են դեպի ծովափնյա զովասուն վայրերը իրենց հոտերով և վրաններով, իսկ ձմեռը վերադառնում են իրենց տեղերը:

Յուրաքանչյուր տեղ ունի քոչելու իր հատուկ շրջանը և ձմեռվա ու ամառվա իր վորոշ կայանը, ուր նրանք իրենց վրաններն են խփում:

Յերկրագործ-բերբերիների հողերը կազմում են ամբողջ բերբերի կամ կարելի կոչվող ցեղի սեփականութունը, վոր ապրում է պատրիարքական, համարյա բերլիական, հին-կտակարանի կյանքով: Յերկրագործութեամբ պարապող մեծ ընտանիքը կառավարվում է իրենից ընտրած պետի միջոցով:

Լեռնաբնակ կարելի ցեղի մի ընտանիք սեփականատեր է վոչ միայն հողի, այլև բոլոր գործիքների, զենքերի և փողի, վորոնք հարկավոր են իր անդամների պարապմունքների համար: Այստեղ բավականաչափ պահված են նախնական կոմունիզմի հետքեր: Համայնքը կամ «ջեմայի»-ն կարգավորում է իր բոլոր անդամների կյանքը ինչպես խաղաղութեան, այնպես ել պատերազմի ժամանակ:

Ահա Ատլասի և Ռիֆֆի այս լեռնաբնակ ցեղերն են, վոր կտրուկ կերպով հրաժարվում են յենթարկվել իմպերիալիզմի լծին: Նրանք կատաղի կռիվ են մղում ինչպես ֆրանսական, նույնպես և սպանական կոլոնիզատորների դեմ:

Ավելի բաղդավոր դուրս յեկան Ռիֆֆի շրջանի կարելիները, վոր սպանական ազգեցութեան տակ է ընկնում, 12 ցեղերից մեկի առաջնորդին՝ Աբդ-ել-Քերիմին հաջողից միացնել իր հայրենակիցներին և վոգևորել նրանց դեպի կռիվ՝ ընդդեմ ճնշողների:

Աբդ-ել-Քերիմն իր կրթութեանն ստացավ Մալադայի սպանական զինվորական բարձրագույն դպրոցում: Նա ատելութեամբ լցվեց դեպի սպանացի ամ-



բարտավան միլիտարիստները և կարողացավ այս ատելությունը ներշնչել իր ամբողջ ցեղին:

Արդեն չորրորդ տարին է, վոր այդ հեղափոխական «պատրիարքը» արյունահեղ կռիվ է մղում սպանացիների դեմ: Ռիֆֆի լեռնային լինելը ծայր ատիճանի բարեհաջող մի հանգամանք է պարտիզանական կռիվների համար: Մի յերկրում, ուր անձնավորությունը լուծվում է հավաքականության դադարաբեր մեջ և ուր անվերջությունը համարվում է դերագույն առաքինութուն, այնտեղ «քաղաքակիրթ» թըշնամու համար շատ դժվար պետք է լինի, թեկուզ նա զինվի համաձայն պատերազմի տեսնիքայի վերջին խոսքի: Սպանական իմպերիալիզմը պարտություն պարտության յետևից է կրում:

1921 թ. ամառը հեղափոխական լիդեր Աբդ-ե-Քերիմը ջախջախեց սպանական 20 հազարանոց զինվորական արշավախումբը: Աբդ-ե-Քերիմը առանձին հմտությամբ ոգտվում է ֆրանս-սպանական իմպերիալիզմի հակամարտությունից, իր ցեղակիցներին շահերի պաշտպանության համար: Ֆրանսական իմպերիալիզմը ինքը շատ հեռու է սպանացիներին Մարոկկոյից դուրս քշելուց, վորպեսզի «կլորացնի» իր հողամասերը և մոտենա Միջերկրականի հյուսիսային ափերին: Այս իսկ պատճառով ֆրանսացիք «բարյակացակամ» չեզոքություն պահեցին Աբդ-ե-Քերիմի հանդեպ: Նրանք վերջինիս արգելք չեղան, յերբ սա ֆրանսական Ալժիրի սահմանագլխով զենք եր տեղափոխում Ռիֆֆի շրջանը:

Բայց անգլիական իմպերիալիզմը չի կարող թույլ տալ, վոր ֆրանսացիք մոտենան Ջիբրալտարին: Անգ-

լիացիք ամբողջ ժամանակ պաշտպանեցին սպանացիներին՝ ընդդեմ ֆրանսացիների:

Անգլիական կապիտալը դեմ է ի լինի, յեթե Աբդ-ե-Քերիմը կարողանա դուրս քշել սպանացիներին, յերբ վերջիններս անկարող լինեն մնալու հյուսիսային Մարոկկոյում: Անգլիացիները համար կարևորը միայն այն է, վոր ֆրանսական իմպերիալիզմը չհասներ մինչև Միջերկրականի ափերը՝ Ջիբրալտարի մոտերքը: Թող այնտեղ իշխե թույլ Սպանիան, կամ թե Ռիֆֆի թույլ ցեղը, միայն վոչ ֆրանսական ամբարտավան իմպերիալիզմը:

Վերջերս եր, վոր անգլիական կապիտալիստները 300,000 ֆունտ ստերլինգ տվեցին Աբդ-ե-Քերիմին Ռիֆֆի շրջանի կոնցեսսիաների համար, ուր կան նավթի հորեր և ֆոսֆատի հանքեր: Իսկ Աբդ-ե-Քերիմն ոգտագործեց այդ գումարը զենքեր գնելու համար:

Աբդ-ե-Քերիմը 1924 թ. հուլիսին դիմեց Մագդոնալդի միջնորդությանը: Բայց այս տողերի գրելու միջոցին (սեպտեմբեր) սպանացիների գործերը այն տատիճանի էյին վատացել, վոր Աբդ-ե-Քերիմն այլևս միջնորդության պետք չեր զգում: Այժմ պետք է վախենալ, վոր անգլիական ուժեղ իմպերիալիզմը մի ձևով չմիջամտի հոգուտ սպանացիների: Ինչպես տեսնում ենք, Մարոկկոյի այս մասին ազգային ազատագրական շարժման գլուխ է կանգնած կարել դեղին ազնվական շուրթման ներկայացուցիչը: Այդ առաջնորդը իրոք հըրաշներ է գործում: Քառասուն հազարանոց պատերազմական մի բանակով նա կարողանում է փախցնել վրտից մինչև գլուղ զինված սպանական 150 հազարանոց բանակին: Նրա խիզախ պատերազմները փախուս-



տի մատենեցին սպանական մի զբահակիւր, իսկ մյուսին՝ «Ալֆոնս VIII» հրդեհեցին:

Արդ-եւ-Քերիմի հաղթություններն ուժեղ արձա-  
գանք գտան սպանական զոտու մյուս կողմը, վոր  
սահմանակից և Ֆրանսականին: Ատլասի ռազմիկ  
ցեղերը զեռ 1912 թվականից ե, վոր անընդհատ կռիվ  
են մզում Ֆրանսական իմպերալիզմի դեմ: Այժմ ամ-  
բողջ Ֆրանսական Մարոկկոն շարժման մեջ ե. Ֆրան-  
սական կոլոնիզատորներն այստեղ գործադրում են  
կողոպուտի և բռնության ճիշտ այն սխեման, ինչպի-  
սին նրանք 90 տարի շարունակ Ալժիրում և 40 տարի  
Թունիսում եյին գործադրում: Ֆրանսական կապիտալը  
քայքայեց դարերի ընթացքում համայնական հողա-  
տիրական սկզբունքի վրա կառուցված հողային հարա-  
բերությունները: Նրանք ինչպես Ալժիրում և Թա-  
նիսում բռնի կերպով այստեղ եւ մտցրին հողի մասնա-  
վոր սեփականություն համայնականի փոխարեն, կողոպ-  
տեցին արաբների հողամասերը և նրանց աղքատացրին:

Միայն սուլթան Առւայ-Յուսուֆը և հողատիրական բարձր արիստոկրատիան, վորոնց իշխանությունը ի միջի այլոց յերկրի միայն մի սահմանավանկ մասի վրա յե տարածվում, լիովին և ամբողջապես անցան ֆրանսական իմպերիալիզմի կողմը։ Ատլասի լեռնաբնակ ցեղերը շարունակում են գինված դիմադրություն ցույց տալ հափշտակիչներին։ Արդ-էլ-Քերիմի հաղթությունները սրանց ե՛լ ավելի մեծ վճռականություն, քաջություն և արիւթյուն են ներշնչում ֆրանսական իմպերիալիզմի դեմ մղած իրենց հերոսական կռիւը շարունակելու համար։

ԱԼԺԻՐ ՅԵՎ ԹՈՒՆԻՍ

Ֆրանսական միլիտարիզմը ֆինանսական կապիտալի համար Ալժիրում և Թունիսում գործունեության հրապարակ հարթեց: Ֆրանսական սուրը կապիտալի համար ապահովեց այնտեղ «եփան ձեռքերի» մի հսկա սլահետ: Տեղական արաբական ժողովրդի սեփականագրվման ճանապարհով կապիտալն արգասավոր հող գտավ իր զարգացման համար: Բնիկների հողերի բռնագրավման, ինչպես և մտրակի ռեժիմի սխտեմն աշտեղ գտավ իր կատարյալ արտահայտությունը: Ոտարեերացի խողոր հողատերերն ու աղարակատերերը ապահովված են ամենանեփան աշխատող ձեռքերով, վորովհետև իր սեփականությունից զրկված արաբ ֆեյլահը ստիպված է ամենացած վճարով աշխատել, վորպեսզի մրցի յեվրոպական յեկվոր բանվորների, գլխավորապես իտալացիների հետ:

Ֆինանսական կապիտալը (գլխավորապես ֆրանսական) ունենալով եժան լծակիր պրոլետարիատ, հնարավորութիւն ստացաւ այստեղ լայն կերպով զարգացնելու իր գործունեութիւնը։ Նա հյուսիսային Աֆրիկայի այս մասը ծածկեց յերկաթուղագծի ցանցով, բացեց ջրանցքներ, թափանցեց յերկրի ծոցը և համարյա ձրի աշխատող ձեռքերի շնորհիւ տիրացաւ հսկայական հարստութիւններու։

Ալժիրի և Թունիսի ֆեոդալները հանձնակցին Ֆրանսական իմպերիալիզմի հովանավորությանը։ Նրանք շատ հարստացան և հսկայական գումարներ դիզեցին՝ ալժիրական և Թունիսական ճորտացած գյուղացու թյունը ճնշելու և ազդատեղեկներ գնով։



Ֆրանսական նվաճողներն այստեղ գործադրում են շահագործման գեր-հափշտակության ձևեր՝ քամելով ազգաբնակչության ամբողջ հյուսթը: Տեղացիք հարկ են վճարում բերքերով և իրենց արշուկով: Պատերազմի ժամանակ հյուսիսային Աֆրիկայի արաբ և բերքերի ազգաբնակչությունը 400 հազար կովոզ արժեքի ֆրանսական բանակին: Թունիսը միայն իր 287 հազար ազգաբնակչությունից (18 տարեկանից բարձր) տվեց 65,000 զինվոր և 30,000 թիկունքի աշխատավոր: Զանազան ճակատներում սպանված արաբների թիվը հաշվվում է մոտ 75,000:

Հյուսիսային Աֆրիկայի ֆրանսական զաղութների արաբները մասսաներով զոհ գնացին ի փառս «քաղաքակիրթ» Ֆրանսիայի, վոր նրանց յերջանկացրել եր իր «պրոտեկտորատով» (պաշտպանություն): Ֆրանսական նվաճողներն արշուկաքամ արին արևելքը 100 տարուց ի վեր և Թունիսը՝ 42: Հաճախակի կրկնվող անբերրիությունն ու սովն ել հանդիսանում են այս յերկիրներում մտած ֆրանսական կապիտալիզմի ուղեկիցները:

Բնիկ բուրժուազիա գեռ չի կազմակերպվել: Ֆրանսացիք Թունյ չեն տալիս, վոր նա ամրանա: Ալժիրի հեղափոխական շարժումը ճնշվել և ֆրանսական միլիտարիզմի յերկաթե կրունկի տակ, վոր այս յերկրի վրա վորպես մի «ֆրանսացած» գալուսի: Թունիսում «յերիտասարդ-թունիսցիները» ազգաբնակչության մեջ ավելի կենդանի շարժումն են զարգացրել, վորով կարողացել են նվաճողներից չնչին ռեֆորմներ ձեռք բերել:

Ալժիրի և Թունիսի նավահանգստային քաղաք-

ներում և յերկաթի ու ֆոսֆատի հանքերի շրջանում (Թունիսը ֆոսֆատի համաշխարհային արդյունաբերության մեջ յերկրորդ տեղն է բռնում) գոյություն ունի փոքր ինչ բանվորական շարժում:

Անցյալ տարի Որանում (Ալժիր) տեղի ունեցավ նավահանգստի բեռնավորողների գործադուլ, վորին մասնակցում էին մոտ 3,000 բնիկ: Թունիսում, Սուսսում և Բիզերտում (նավահանգստային քաղաքներ) 7 գործադուլի 800 բանվոր մասնակցեց: Գործադուլավորների մեջ կար 200 բնիկ արաբ:

Որանի և Թունիսի նավահանգստի բանվորներն ու բեռնողները լավ են կազմակերպված և ունեն իրենց զանձարկղներն ու արհմիությունները:

Ալժիրի և Թունիսի կոմունիստական կազմակերպություններն ըստ մեծի մասին բաղկացած են ֆրանսական յեկվոր բանվորներից: Կուսակցությունը միայն վերջին տարին է սկսել ուղադրություն դարձնել յետ մնացած և մոռացված արաբ բանվորներին կոմունիստական շարժման կողմը գրավելու:

Վորքան վոր Մարոկկոյում ազգային-հեղափոխական շարժումը ուժգին թափով է տարածված և խոսքը գենքին և պատկանում, այնքան ել Ալժիրում և Թունիսում այդ շարժումը հաղիվ նշմարելի յե: Ֆրանսական կոլոնիալիզմները սրով և յերկաթով են ճնշում ամենափոքրիկ շարժումը, վոր բնիկ մասսաների կողմից արվում է իմպերիալիզմի դեմ: Ազգաբնակչությանն այն աստիճանի յե ահաբեկված, ճնշված և մոռացված, վոր զինված դիմադրության մասին միայն յերազել կարող է:



## ՏՐԻՊՈԼԻՏԱՆԻԱ

(Տրիպոլի)

Ճիշտ այն ժամանակ, յերբ Ֆրանսացիք հարձակումներ սկսեցին Մարոկկոյում, իտալական իմպերիալիզմն եւ յերիտասարդ-թյուրքական կառավարութեանը պատերազմ հայտարարեց Տրիպոլում, վոր գտնվում եր Թյուրքիայի գերիշխանութեան ներքո: Արյունահեղ պատերազմից հետո 1912 թ. հոկտեմբերին Լոզանում խաղաղութեան դաշնագիր կնքվեց, վորի համաձայն Թյուրքիան ստիպվեց հրաժարվել Տրիպոլի եւ Բարկա գավառներից: Այդ ժամանակից սկսած Տրիպոլիի տեղական ազգաբնակչութեան ընկալ իտալական իմպերիալիզմի լծի տակ:

Սակայն Տրիպոլիի ժողովուրդը Սենուսի տոհմի նշանավոր շեյխի տաջնորդութեամբ շարունակում եւ ամբողջ ժամանակ դիմադրել իտալական կոլոնիզատորներին: Յերկիրը մեծ մասամբ անապատային եւ Յերկրագործութեան միայն հնարավոր եւ ուղիսներում: Ամենից ավելի անասնապահութեան եւ դարգացած: Կապիտալիզմը համարյա բոլորովին ձեռք չի դիպցրել անապատային այդ վայրերին:

Սենուսի տոհմը եւ հոգևորականութեանը մեծ ազդեցութեան ունին ժողովրդի վրա, վոր ապրում եւ չչերտավորված ցեղական-սլաւոնաւորական կյանքով: Այդ տոհմի շեյխերից մեկի յեռանդուն պրոպագանդն ամբողջ յերկիրը վտարե հանեց՝ սրբազան պատերազմ մղելու իտալացիների դեմ: Բնիկ միլիցիան, վոր իտալացիների կողմից եւ կազմակերպված, 1915 թ. հարեց ապստամբներին: Իտալացիք կարողացան իրենց

դիրքերը պահել միայն ծովափնյա քաղաքներում, շրտորհիվ իրենց պատերազմական նավերի պաշտպանութեան:

Իտալացիք դիմեցին կաշառքի ոգնութեան եւ այդ ձևով իրենց կողմը դարձրին ազդեցիկ շեյխերից մեկին: Սրանով նրանք թուլացրին իրենց դեմ ուղղված աբխալոնական քոչվորների շարժումը: Այնուամենայնիվ իտալացիների դեմ ուղղված ազատագրական շարժումը վերջին տարիներում դարձյալ ուժեղացել եւ Անցյալ տարի տրիպոլիտանցիք ջախջախիչ հարված հասցրին Մուսոլինիի զորքերին եւ յետ քեցին նրանց մինչեւ ծովափնյա քաղաքները: Այս ձևով նրանք մաքրեցին ռազիսների մեծ մասը նվաճողների զորքերից:

Տրիպոլիի ապստամբութեանների կազմակերպման մեջ մեծ դեր են խաղում յերկրի մահմեդական ամբողջ-վանքերը: Վանքի գլխավորը միաժամանակ թե հոգևոր պետ եւ (իմամ) եւ թե զինվորական հրամանատար: Շեյխը (յեպիսկոպոսի նման), ինչպես միջնադարում եր, հավատացյալների գլուխ եւ կանգնում արշավանքի ժամանակ ընդդեմ իտալացիների:

Տրիպոլիում նման վանքերի թիվը, վորոնք ռազմա-առնտեսական կազմակերպչական դեր են կատարում, հասնում եւ մինչեւ 300-ի: Ուղիսների յերկու միլիոնանոց ժողովուրդը հաջողութեամբ եւ յետ մղում իտալական սվինների դրոհը:



## ԱՐԱՐՍՏԱՆ

### Մ Ի Զ Ա Գ Ե Տ Ք (Ի Ր Ա Կ)

Միջագետքի հեղափոխական-ազատագրական շարժումն իր բնույթով հիշեցնում է Մարոկկոյի շարժումը: Խաշնարածների ցեղային պատերազմական կենցաղը՝ Տիգրիսի և Յեփրատի ափերին, դեռ չի շերտավորվել: Բաղդադ, Բասրա և Մոսուլ քաղաքների նըստակյաց յերկրագործ ժողովուրդը դեռ չի ընկել կապիտալի ժանիքավոր անիվների տակ: Անգլիական իմպերիալիզմի և նրա հովանավորյալ ֆեոդալ-«թագավոր» Ֆեյսալի դեմ ուղղված ազգային-հեղափոխական շարժման ղեկավարներն ու նախամարտիկները հոգեվորականության, վաճառականության և նույնիսկ հողային ադնվականության ներկայացուցիչներն են:

Հաղթական Անգլիան իրեն համարեց վորպես ժառանգ թյուրքերայի: Անգլիական իմպերիալիզմն Արաբստանի վրա իշխող (Արաբիայի թերակղզին, Միջագետքը, Անդր-Հորդանանը, Սիրիան և Պաղեստինը) նախկին Ոստոմանյան կայսրության փոխարեն տեքդարձավ այդ յերկրին, բացառությամբ Սիրիայի: 1915 թ. իմպերիալիստական պատերազմի ժամանակ Անգլիայի սըր Մակ-Մահոնը դեպի տաճիկները թշնամաբար տրամադրված արաբական ֆեոդալներին խոստացավ կազմել առանձին արաբական մի պետություն:

Չեյն Հուսեյնի իշխանության տակ: Անգլիական իմպերիալիստական պատերազմի վերջին բարձրացրին Հուսեյն-Ֆեյսալի մի վորդուն սիրիական «գահը» Դամասկոսում, և մյուս վորդուն՝ Աբդուլահին՝ Անդր-Հորդանանի «գահը»: Իսկ հայրը՝ Հուսեյնը դարձավ Հեջազի թագավոր:

Բայց վորովհետև Ֆրանսիան պահանջեց Սիրիան, ուստի Անգլիացիք համաձայնեցին հրաժարվել Ֆեյսալին պաշտպանելուց, պայմանով վոր Ֆրանսիան ել հրաժարվի Մոսուլի նավթային շրջանի վրա ունցած իր իրավունքներից: Ֆրանսիական գեներալ Դուրոն իր եքսպեդիցիոն բանակով ափ իջավ Բեյրությում և մի քանի ճակատամարտներով ջախջախեց Ֆեյսալին: Այդպիսով 1920 թ. Սիրիան ընկավ Ֆրանսական իմպերիալիզմի իշխանության տակ:

Սակայն անգլիացիք վորոշեցին բավարարություն տալ Ֆեյսալին և նրա համար գտան մի նոր «գահ» Իրազում:

Իրակը շատ պտղաբեր շրջան է: Բավական է վերականգնել վորոգման ջրանցքները և ավարտել Բաղդադի յերկաթուղագծի կառուցումը, վորպեսզի սա ել դառնա մի յերկրորդ Յեգիպոս: Ավելացնենք դրա վրա և այն, վոր Իրազում գտնվում են նավթի շատ հարուստ աղբյուրներ: Նավթահորեր կան նախկին տաճկա-պարսկական սահմանագծի ամբողջ տարածության վրա, սկսած Աղվազից մինչև Կերկուկ և Մոսուլ: Բայց այս նավթային շրջանը գտնվում է մի կողմից հարավի խաշնարած ազգաբնակչության և մյուս կողմից հյուսիսի լեռնաբնակ քրդական ցեղերի սահմաններում:



Այս ամբողջ ազգաբնակչութիւնը միայն անգնա-  
նապես և ճանաչել տաճկական սուլթանի իշխանու-  
թիւնը: Ազատութիւն սիրող այդ խաշնարածները  
վոչ մի կերպ չեն համաձայնում խոնարհեցնել իրենց  
հպարտ պարանոցը անգլիական լծի տակ: Յեւ  
անգլիացիք վորոշեցին ձեւել Իրակի «անկախ» պե-  
տութիւնը, դնելով նրա գլխին ֆրանսացիների կող-  
մից Սիրիայից արտաքսված «թագավոր» Ֆեյսալին:  
Կատարվեց թատրոնական, ուղեւորային մի պլեբիս-  
ցիտ (հանրաքվե), և Ֆեյսալն սկսեց կառավարել հո-  
նուն Ալլահի և հանուն Լոնդոնի բորսայի:

Ֆեյսալը, ի վարձատրութիւն իր գահի, ստորա-  
դրեց Անգլիայի հետ մի դաշնագիր, վորով Իրակը  
դառնում է անգլիական մի գաղութ: Թագավոր Ֆեյ-  
սալիի և նրա բոլոր մինիստրների մոտ նշանակվում են  
անգլիական խորհրդականներ, առանց վորոնց գիտու-  
թյան վոչ մի կարևոր վորոշում չի կարող կայացվել:  
Անգլիացի վաճառականներին տրվում են հատուկ ա-  
ռանձնաշնորհներ և արտոնութիւններ: Յերկաթուղա-  
գծերը մնում են անգլիացիների ձեռքում:

Սակայն ազգաբնակչութիւնը վճռականապէս  
հրաժարվեց անգլիական իմպերիալիզմի շահագործման  
առարկա դառնալուց: Նա կատաղի կռիւ սկսեց սառը-  
կացնողների դեմ: Անգլիացիք ինչպես Գլըզոնի, այն-  
պես եւ Մակդոնալդի ժամանակ չխնայեցին վոչ ռումբ  
և վոչ ել պայթուցիկ նյութեր՝ յերկիրն անբոսպանե-  
քով ուժակոծելու համար:

Հոգևորականութեան ներկայացուցիչները— «մուշ-  
տեյիդները», վորոնք ժողորդական զանգվածների վրա  
հսկայական ազդեցութիւն ունեն, իրենց բոցավառ

քարոզներով գրգռում են նրանց դեմ դնելու խորա-  
մանկ և խստասիրտ թշնամուն: Անգլիացիք իրենց հեր-  
թին կանգ չեն առնում ժողովրդական զանգվածների  
աչքում սրբացած «մուշտեյիդներին» յերկրից արտաք-  
սելու առաջ:

1922 թվականի վերջերին Իրակից Պարսկաստան  
քաշված «մուշտեյիդները» դիմեցին Կոմիտեերնի նախա-  
գահ ընկ. Զինովյեվին, բողոքելով Իրակում կատար-  
վող անգլիական խստութիւնների դեմ և խնդրելով  
Կոմիտեերնից պաշտպանութիւն ու բարոյական ա-  
ջակցութիւն:

Անգլիացիներին ու նրանց հովանավորյալ ֆեո-  
դալներին դեմ ուղղված հեղափոխական յեղույթները  
չեն դադարում Իրակում անգլիական տիրապետութեան  
ամբողջ ընթացքում:

Անգլիացիներն իրենց վրա վերցրին Իրակի ժո-  
ղովրդի «դաստիարակչի դերը «դեմոկրատիզմի և ազա-  
տութեան» վորով: Իրանք հանդես բերեցին մի պողատ  
պարլամենտ (մեջլիս), վոր պետք է ի միջի այլոց  
վաճառեցնի անգլո-իտալական դաշնագիրը: Հասկանա-  
լի չէ, վոր Իրակի անգլիական բարձր կամխարը՝ կա-  
խելու արժանի Պերսի-Կոկսը ջանքեր արեց վոսկու  
ռոգնութեամբ մեջլիս մտցնել բավական թվով անգլիա-  
ցի կողմնակիցներ: Բայց դրանով այդ անգլիասերների  
դրութիւնը շատ վատացավ: Նրանց վրա հաճախ մա-  
հափորձ և կատարվում և նրանցից շատերը զոհ են  
գնում իրենց ազգային դավաճանութեանը:

Հիշյալ համաձայնագրի դեմ կազմակերպվող ցույ-  
ցերը չդադարեցին մինչև հունիսի սկզբները: Մեծ քա-  
ղաքների վաճառականութիւնը գործոն մասնակցու-



Թյուն ունեցավ այդ ցույցերին, փակելով շուկաները, վորպես նշան բողոքի: Բաղդադի շրջակայքի արաբ ցեղերից վորոշ խմբեր սկսեցին քաղաք ներխուժել և մահափորձեր կատարել անգլիական սպանների դեմ: Կերկուրում ապստամբություն ծագեց, վոր անգլիացիների կողմից դաժանորեն ճնշվեց ասորական ջոկատների ոգնությամբ: (Ասորիները հին ասորեստանցիների հետնորդներն են, քրիստոնյա և Անգլիայի վարձկաններ): Ավելի քան 3 հազար քուրդ և արաբ կոտորվեց: Հենց այդ ժամանակ էր, վոր անգլիական ողային տորմիզը սկսեց ուժգանվել Սուլեյմանիյե քաղաքը՝ ազգաբնակչությանը կրկնակի կերպով ահաբեկելու համար:

Հունիսի 5-ին կայացավ մեջլիսի նիստը, վորանդ զրված էր անգլո-իրակյան դաշնագրի հարցը: Մեջլիսի շենքը պաշարվեց մի քանի տասնյակ հազարից բաղկացած ամբոխի կողմից, վորի միջից անվերջ սպառնալիքներ ելին արվում մեջլիսի, Ֆեյսալի և դաշնագրի դեմ: Ֆեյսալի հրամանով զորամասեր կանչվեցին: Տեղի ունեցավ ընդհարում: Ամբոխին հանգստացնելու համար դուրս յեկան մեջլիսի անդամներից յերկուսը, վորոնք վստահացրին, թե մեջլիսի 75 անդամ (100 պատգամավորներից) դեմ ե դաշնագրին, և նրանք չեն թույլ տա, վոր անգլո-իրակյան դաշնագիրը ստորագրվի:

Անգլիական բարձր կոմիսար Պերսի-Կոկսը հունիսի 9-ին վերջնագիր ներկայացրեց Իրակի կառավարությանը և մեջլիսին, պահանջելով դաշնագրի վավերացումը, հակառակ դեպքում սպառնալով խիստ միջոցների դիմել: Հունիսի 10-ի նիստի ներկա յեղավ 100 պատգամավորից միայն 69-ը: Դաշնագրի թեր

քվեարկեցին 37 հոգի, դեմ՝ 24 և ձեռնպահ՝ 8: Թերքվեարկողները յեղան հրեաները, հայերը և ասորիները, ազգային փոքրամասնությունների այդ ներկայացուցիչները, վորոնք Իրակում ծառայում են վորպես գործիք անգլիական քաղաքականության:

Մենք կանգ առանք անգլո-իրակյան կողոպտիչ դաշնագրի վավերացման պատմության վրա, վորպեսզի ընդգծենք 2-րդ Ինտերնացիոնալի առաջնորդ՝ մեծագույն Մակդոնալդի ազենտների իմպերիալիստական-ավազակային դերը: Այս «դաստիրակ-դեմոկրատները» զենքի ճնշմամբ և վոսկու ուշժով, ծախված պատգամավորների ձեռքից ստացան անգլո-իրակյան դաշնագրի վավերացումը:

## Ս Ի Ր Ի Ա

Սիրիան ունի բավական զարգացած առևտրական բուրժուազիա և նույնիսկ մանածագործական ու մետաքսի արդյունաբերության բավական հիմնավոր ձեռնարկություններ Բեյրութում, Դամասկոսում, Հալեպում և այլ քաղաքներում:

Մենք արդեն գիտենք, վոր անգլիացիք Սան-Րեմոյում Ֆրանսիային զիջեցին Սիրիայի վրա ունեցած բրենց մանդատը: Կլեմանսոյի և Պուանկարեյի Ֆրանսիան ուղարկեց զեներալ Դուրոյին՝ այդ յերկրում «զեմոկրատիզմ և ազատություն» տարածելու համար: Այս վերջինը սրով և հրով անցավ ամբողջ Սիրիայով, վոր արհեստականորեն բաժանված էր Պաղեստինից: Նա բաժանեց Սիրիան 4 տարբեր թզուկային «ինքնավար» պատմությունների, իր կողմը գրավեց խոշոր ֆեոդալներին և այդ դժբախտ յերկրում հաստատեց մետ-



րակի ռեժիմ՝ ոգտադործելով տարբեր կրոնական գա-  
վաճանքների միջև յեղած հակամարտությունն ու թշ-  
նամությունը:

Ազգային ազատագրական շարժումը հատկապես  
ուժեղ կերպով տարածվեց թյուրքերով բնակված հյուս-  
սիսային Սիրիայում, վորոնք բռնությամբ են բաժան-  
վել քեմալական թյուրքիայից: Այստեղ ծագում են  
թրքական անկանոն խմբերի հաճախակի ապստամբու-  
թյուններ, վորոնք պաշտպանություն են դտնում ազ-  
գաբնակչության կողմից, վոր անդուսպ տենչ ունի  
իր հայրենիքին՝ թյուրքիային միանալու:

Սիրիայի մնացան մասում գործում են «յերիտա-  
սարդ մուսուլմանների» զանազան ազգային-բուրժուա-  
կան կուսակցություններ, վորոնք կալում են Սիրիա-  
յի ազգային անկախության համար:

Ֆրանսական իմպերիալիզմի ծանր յերկաթյա  
կրունկը կոխկոտում է հեղափոխության ծիւրը: Մա-  
կայն բնիկ յերիտասարդ ազգային բուրժուազիան  
գնալով ալեւի յե քաջանում, զարգանում է կտրուկ  
ոպոզիցիա կազմում Ֆրանսական նւաճումի դեմ:

Անդամահատված, փոշիացած է ճնշված Սիրիան  
ույծեր է ժողովում՝ Ֆրանսական իմպերիալիզմին  
դիմադրություն կազմակերպելու համար:

## ՊԱՂԵՍՏԻՆ

Պաղեստինը անգլիական իմպերիալիզմի հաժար  
նշանակություն ունի բացառապես վորպես ռազմական  
կետ: Նրանով պաշտպանվում է անգլիական տիրապե-  
տությունների հաղորդակցության մեծ յերակի՝ Մու-  
հզի ջրանցքի բանալիներից մեկը: Այս իսկ պատճա-

ռով Մեծ Բրիտանիան վոչ մի դեպքում չի համաձայ-  
նում Պաղեստինը հանձնել թագավոր Հուսեյնի շա-  
սալիղների ձեռքը:

Անգլիան Անդր-Հորդանանում «գահ» բարձրա-  
ցրեց Աբդուլահին, իրակում Ֆեյսալին, իսկ Պաղես-  
տինում թագավորում է մի հարուստ հրեա բանկիր՝  
բարձր կոմիսար՝ սըր Ռոբերտ Սամուելը: Անգլիացիք  
չեն վստահում Պաղեստինը արաբներին, և վոչ իսկ  
իրենց ամենահավատարիմ հւատակ ստրկամիտ ֆեո-  
դալներին. նրանք ոգտադործում են հրեյա գաղթական-  
ներին վորպես բուֆֆեր (խուփ) արաբ ազգայնական-  
ների դեմ: Անգլիան հենվում է հրեա սիոնիստական  
կապիտալի վրա ընդդեմ արաբների:

Բալթիւրը 1917-ին մի հայտարարություն արեց՝  
խոստանալով հրեական պետություն կազմել Պաղես-  
տինում: Բայց ահա ջ տարի անցավ և այդ հայտա-  
բարությունը մնաց վորպես մի թղթի կտոր: Արաբնե-  
րի մեջ ուժեղացող ազգային-ազատագրական շարժու-  
մըն ստիպում է անգլիացիներին «կարտերը փոխել»—  
այսինքն՝ գրգռել հրեաներին արաբների դեմ և արաբ-  
ներին՝ հրեաների դեմ: Անգլիացիք բորբոքում են ա-  
րաբների և հրեաների միջև յեղած ազգային թշնա-  
մությունը, ընդհարումներ են առաջ բերում և հետո  
հնդկական կամ իրլանդական զորքերի ոգնությամբ  
«կարգը վերահաստատում են»:

Անգլիացիք սկզբից սիրալիր վարվեցին հրեանե-  
րի հետ, վորոնք կազմում են ազգաբնակչության մի-  
այն 13 տոկոսը: Նրանք ստեղծեցին հրեական «գոր-  
ծակալություն»: Հրավիրված «Սահմանադիր ժողովի»  
մեջ, վորի կեսն ընտրվեց, իսկ կեսը նշանակվեց, անգ-



լիացիք ապահովեցին հրեաների համար մեծամասնու-  
թյուն: Բայց արաբ-ազգայնականներն ընտրություն-  
ների դեմ բոյկոտի պայքար կազմակերպեցին, վոր  
ունեցավ փայլուն հաջողություն: Այն ժամանակ անգ-  
լիացիք կազմեցին նաև «արաբական գործակալություն»  
վորպես ներկայացուցչական մի մարմին արաբների  
համար: Սակայն վերջիններս չխաբվեցին այդ վտակե-  
ղոծ շաքարահացի և կտրուկ ոպպողիցիայի մեջ ֆնացին  
«բարեգործ» նվաճողների հանդեպ:

Պաղեստինը դեռ չքայքայված ֆեոդալիզմի շրջ-  
ջանն է ապրում: Այնտեղ նկատելի չեն կապիտալիզմի  
թույլ ծիլեր: Ազգաբնակչութունն զբաղվում է յերկ-  
բադործությամբ, մշակելով հողը շատ նախնական ձե-  
վերով (մեխի ձև ունեցող մի կտոր յերկաթով): Աշ-  
խատող անասունների անբավարար լինելու պատճա-  
ռով ֆելլահը (գյուղացին) հերկելու ժամանակ հաճախ  
լծում է իր կինը:

Տեղական եֆենդի-ֆեոդալները և իշխանները  
շահագործում են գյուղացությանը ամենախիստ ձե-  
վերով: Եֆենդիներին մրցակից են հանդիսանում  
հրեա գաղթականները, վորոնք մշակում են հողը գյու-  
ղատնտեսական մեքենաներով: Գաղթականների կող-  
քին կան 3,000-ի չափ հրեա բաւորակներ, վորոնք  
վարձով աշխատում են առանձին գաղթականների կամ  
թե կոոպերատիվ արտեղների մոտ: Սովորաբար հրեա  
գաղթականները գերադասում են վարձել արաբ բան-  
վորներ, վորովհետև սրանք ավելի եփան են աշխա-  
տում, քան հրեա բանվորները և քացի այդ՝ վերջին-  
ները մեծ մասամբ համարվում են «կոմմունիստական  
վոգով» վարակվածներ:

Անգլիական նվաճումի և հրեա-սիոնիստական  
գաղթականության հետևանքով նկատելի չե փոքր ի  
շատե կենդանություն արտադրության և վաճառակա-  
նության մեջ: Դադաքներում՝ Յերուսաղեմում, Յաֆ-  
ֆայում և Հայֆայում կառուցվում են նոր թաղեր և  
հայտնվում են գործարաններ 20-200 բանվորով:

Արաբ ազգաբնակչությունը, շատ հազվագյուտ  
բացառությամբ, ծայր աստիճանի թշնամաբար է տը-  
րամադրված դեպի անգլո-սիոնիստական նվաճումը:  
Ինչպես «ազգային» կուսակցությունը, վոր միացնում  
է յերիտասարդ արաբ բուրժուազիայի առաջադիմա-  
կան տարրերին, այնպես էլ ֆեոդալական-կղերական  
կուսակցությունը, վոր մինչև վերջին ժամանակնե-  
րըս էլ մեծ ազդեցություն ունի ֆեոդալների յետամնաց  
մասսաների վրա, նույնքան թշնամաբար են տրամա-  
դրված դեպի անգլիական իմպերիալիզմը և դեպի նը-  
բանից հովանավորվող սիոնիզմը: Չնայած, վոր ազ-  
գաբնակչությունը զինաթափ է արված, բայց և այն-  
պես նա դարձյալ կարողանում է ճանապարհներ և  
միջոցներ գտնել կռվելու անգլիացիների դեմ՝ նրանց  
մեջ տեսնելով իրենց արյունարբու թշնամիներին:

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՊԱՆԵՍՏՆՈՒՄ

Արաբսանի յեվ վոչ մի յերկում բանվորական  
շարժում գոյություն չունի բացի Պաղեստինից: Բանվո-  
րական կազմակերպությունների անգամները սովորա-  
բար հրեա տարրերն են, վորոնք Պաղեստին են գաղ-  
թել: Վերջիններս միացած են «աշխատանքի կոնֆե-  
դերացիայի» մեջ, վոր ունի 8,000 անդամ և վոր



հարում և Ամասերդամին: Այս կոնֆեդերացիայի մեջ  
եր բանվորական հասվածք, վոր վերջերս ցիրուցան  
արվից անգլիացիների ու հրեա մենշիկների կողմից  
և վոր գտնվում եր գաղանի աշխատող կոմմունիստա-  
կան կուսակցության ազդեցության տակ:

Արաբ բանվորների թիվը քաղաքներում հասնում  
է մոտավորապես 40,000-ի.

- 1) Յերկաթուղու ծառայողներ . . 2,500 մարդ
- 2) Նավահանգստի բանվորներ . . 2,000 »
- 3) Ծանապարհների բանվ. և կառուց. 15,000 »
- 4) Զանազան մանր ձեռնարկություն-  
ներում աշխատող բանվորներ . 15,000 »

Հրեական գաղութներում աշխատող արաբ բա-  
րակների թիվը հաշվվում է 12,000: Բացի այդ եֆեն-  
դիների ազարակներում աշխատում է 20,000 մարդ:  
Իսկ արաբների ամբողջ թիվն է 515,000:

Ինչպես տեսնում ենք՝ Պաղեստինի արաբների մի  
կարևոր մասը սեփականազուրկ է և ապրում է  
վարձու աշխատանքով: Արաբները շնորհիվ կոմմուն-  
իստների աշխատանքի վերջին տարում հակվեցին  
գեպի հեղափոխական շարժումը և մասնակցություն  
ունեցան գործադուլների մեջ:

Արաբ ազգայնականները ջանքեր են անում բան-  
վորներին գրավելու գեպի ազգայնական շարժումը,  
վորպեսզի նրանց ոգտագործեն իրենց նպատակների  
համար:

Ազգային ազատագրական շարժումը հետզհետե  
ավելի մեծ չափերով է տարածվում արաբ ազգաբնակ-  
չության լայն շերտերի մեջ, վոր, ինչպես տեսնում-  
ենք, զգալիորեն շերտավորված է: Յեվ այս հար-

ցում նրա գլխավոր առաջնորդներն են հոգային ազ-  
նվականության ներկայացուցիչները և հոգևորակա-  
նության ու առևտրական բուրժուազիայի վորոշ մասը:

Ազգաբնակչության սեփականազուրկ մասի մեջ  
շատ ուժեղ համակրանք կա գեպի «մոսկվիտները»,  
այսինքն՝ կոմմունիստները, վորոնք անկեղծորեն կըռ-  
վում են Գ. Իստերնացիոնալի գաղափարների համար:

Քըրզոնի ժամանակ անգլիական իշխանություն-  
ներն այնքան խստորեն չեյին հալածում կոմմունիստ-  
ներին, վորքան այդ գործադուլում եր Մակդոնալդի ժա-  
մանակ: Պաղեստինի աշխատավոր մասսաները փորձով  
համոզվում են, վոր Բ. Իստերնացիոնալը անգլիական  
ավագակային իմպերալիզմի լավագույն նեցուկն է...



## Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

### ԱԶԳԱՅԻՆ-ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԲՆՈՒՅՔԸ

Վերջացնելով արժարկուն յերկիրների մասին, վորտեղ ազգային-ազատագրական շարժումը դեռևս իր զարգացման առաջին փուլն է ապրում, մենք պետք է կանգ առնենք վերջին յերկրի վրա, վոր ազգային անկախութեան համար մղվող կռիւի տեսակետից զրտնվում է առաջին փուլից դեպի յերկրորդը տանող անցման շրջանի մեջ:

Մենք այստեղ ի նկատի ունենք Պարսկաստանը, այդ կիսագաղութային յերկիրը, վորտեղ առևտրական բուրժուազիան թեև իր ձեռքում ունի պետական իշխանութիւնը, բայց և դեռ հաստատուն կերպով վորտքի չի կանգնած և կռվում է ֆեոդալական կենդրոնախույս ուշժերի և սրանց պաշտպան անգլիական իմպերիալիզմի դեմ: Ինչ վոր բնորոշ է պարսկական ազգային-հեղափոխական շարժման համար, այդ զինվորականութեան աստիճանաբար անող դերն է, վոր քայլ առ քայլ առաջ է գնում, ազգային իդիոկրիայի կշրողների, այսինքն առևտրա-արհեստավորական բուրժուազիայի հետ, և յերբեմն ել նույնիսկ անցնում է

նրան յերկիրը կործանող ֆեոդալիզմի ճանկերից ժողովուրդն ազատագրելու գործում:

Այս յերկրի հեղափոխական-ազատագրական շարժման բնութիւնը պայմանավորված է նախ՝ նրա հետաճաց եկոնոմիկայով և յերկրորդ՝ անգլիական ու ցարական իմպերիալիզմի հետ ունեցած փոխհարաբերութիւնների պատմական-քաղաքական աստատով:

Պարսկաստանում յերկաթուղիներ չկան, բացառութեամբ մի փոքրիկ գծի: Հյուսիսային Պարսկաստանում 28 ֆարսիկա և գործարան կա, վորոնցից 10-ը չեն գործում: Անգործ են այն ձեռնարկութիւնները, վորոնց արտադրած ապրանքներից մեծ քանակութեամբ ներմուծվում են արտասահմանից, ինչպես, որինակ՝ շաքար, լուցկի և այլն: Պարսկաստանի տրնտեսութեան զարգացման ամենամեծ արգելակներից (ТОРМОЗ) մեկը փտած ֆեոդալական կազմն է:

Գյուղերում ֆեոդալիզմի և կոռւմբորութեան լծի տակ հեծում է ագքատացած գյուղացութեանը, վոր մեծ մասամբ հողազուրկ է: Գյուղացիք վճարում են կապալառուներին իրենց յեկամտի  $2\frac{1}{3}$ — $3\frac{1}{2}$ -ը: Պարսիկ գյուղացին ամբողջապես կախված է կալվածատիրոջ կամքից: Վերջինս գյուղի անբաժան տերն է և իրավունք ունի գյուղը ծախել գյուղացիներով միասին: Գյուղացիների ուսին է ընկնում հարկերի ամբողջ ծանրութիւնը:

Հողը մշակվում է նախնական միջոցներով: Ցաքանի տեղը բռնում են մի կերպ իրար միացրած տախտակներ, վորոնց վրա սրածայր քարեր են ամբացնում: Բահ ու բրիչով լրանում է նրանց ամբողջ գյուղատնտեսական տեխնիկան...



Հանքային արդյունաբերությունը գտնվում է տեխ-  
նիքական շատ ցած աստիճանի վրա. նա տնայնագոր-  
ծության և արհեստի վիճակից դուրս չի գալիս: Ար-  
հեստավորների վիճակը շատ վողբալի յե, վորովհետե  
նրանք տուժում են ներմուծվող յեվրոպական ապ-  
րանքների արցունքով:

Հողի սովը և արդյունաբերության բացակայու-  
թյունը պատճառ են դառնում, վոր աղքատացած  
պարսիկ գյուղացությունը, արհեստավորներն ու տը-  
նայնագործները գաղթեն դեպի Թուրքեստան, Կով-  
կաս, Սև-ծովի նավահանգիստները և Հարավային  
Պարսկաստանի նավթարդյունաբերող շրջաններ:

Բնական տնտեսությունից փողայինին անցնելը  
մեծապես հարվածեց գյուղացությանը, քայքայման  
դուռը հասցրեց արհեստավորությանը և ստեղծեց բա-  
վականին ազդեցիկ առևտրական մի դասակարգ՝ վա-  
ճառականություն:

Տնտեսական զարգացման կանգ առնելով սոցիա-  
լական բոլոր խմբավորումները փոշիացան, թուլացան  
և մնացին առանց ուժեղ ձևակերպման: Յերկու խոշոր  
գիշատիչ՝ անգլիական և ցարական, իրենց թաթը դրե-  
ցին այս յերկրի վրա և դարձրին նրան իրենց համար-  
մի գաղութ:

1905 թվականի առաջին ռուսական հեղափոխու-  
թյան ազդեցությամբ Պարսկաստանը 1906 թվականից  
սկսած թևակոխում է հեղափոխական խմորումների  
շրջանը: Հասարակական բոլոր այլազան տարրերը,  
դժգոհ՝ յերկիրը դեպի կորուստ տանող շահական ռե-  
ժիմից, ի մի յեն գալիս: Ամեն տեղ կազմվում են հա-  
տուկ կոմիտեներ — «Ենջումեն», վորոնց նպատակն է՝

կռիվ շահական միապետության դեմ և սահմանադրու-  
թյան հաստատում:

1906 թ. ռեոստոսին Մուղաֆֆեր-եղ-Դին շահը  
ընդհանրացած շարժման ճնշման տակ հրովարտակ  
հրատարակեց Ազգային Ժողով հրավերելու մասին:

Սակայն այս հեղափոխությունը մնաց կես ճա-  
նապարհին: Թեև առևտրական-արհեստավորական բուր-  
ժուազիան առաջին պարլամենտում («Մեջլիս») մեծա-  
մասնություն ստացավ, բայց և դրան հաջորդող դեպ-  
քերի բերմամբ նա մի կողմ ձգվեց, հաղթվելով կալ-  
վածատեր դասակարգից:

Հեղափոխությունը ձեռք չտվեց կալվածատեր  
դասակարգի ֆեոդալական առանձնաշնորհներին, տըն-  
տեսական հարաբերությունների ճորտտիրական ձե-  
վերը չվոչնչացան, ֆեոդալ-ազնվականության բըռ-  
նությունները և նրանց կենդրոնախույս ձգտումները  
(պետական կենդրոնական իշխանությունից անկախ  
լինել) չվերացան: Ֆեոդալականները կռիվ մղեցին  
«յերրորդ դասի»՝ բուրժուազիայի և շահի դեմ: Նրանք  
պայքարեցին շահի կենդրոնական իշխանության դեմ  
իրենց իրավունքների և իրենց պապենական կալված-  
ների համար: Նրանց ուղածն էլ հենց սահմանադրու-  
թյունն էր:

Յերկու ուլժեր դեմ առ դեմ կանգնեցին—հողային,  
ճորտատիրական ազնվականությունը և առևտրական-  
արհեստավորական բուրժուազիան: Մինչև այսօր էլ  
իշխանության համար մղվող այս յերկու դասակարգի  
կռվի շուրջն են պտըտվում Պարսկաստանի հեղափո-  
խական բոլոր դեպքերը:

1914—18 թվականների իմպերիալիստական պա-



տերազմը և ոտարյերկրյա կապիտալի ազդեցությունը կրկնապատկեցին և բարդացրին այդ կռիվը: Իմպերիալիզմը, գլխավորապես անգլիական, հասկանալի չե, չոր հենվում է կալվածատերերի-հետադիմական տարրերի վրա, թուլացնելով հեղափոխական դասակարգների ուժերը:

Բայց ահա վորոտաց Ռուսաստանում Հոկտեմբերյան Հեղափոխությունը: Անգլիացիք ոգավեցին նախկին ցարական Ռուսաստանի զորքերի հեռանալուց՝ Պարսկաստանում իրենց տիրապետությունն ամրապնդելու համար: Նրանք իրենց զորքերով գրավեցին Պարսկաստանը, դաշինք կնքելով ծախված ֆեոդալների հետ:

Ազնվականության տիրող դասակարգի բացահայտ դավաճանությունը և ոտարյերկրյա թշնամու լիակատար տիրապետությունը նոր թափ տվեցին ազգային շարժմանը: Անգլիացիների ղեկավարության (բռնապետությունը) հայտնաբերին ճորտատիրական ռեժիմի բոլոր խոցերը: Յերկիրը փաստորեն բաժանաժան չեղավ զանազան անկախ խանությունների, ազգային կենդրոնական իշխանություն չմնաց, իսկ համազգային բանակը, վոր կարող եր տեղական «թագավոր-խաներին» կարգի բերել, գոյություն չունեի: Գյուղացիական և արհեստավորական ժողովրդական մասսաների աղքատություն, կալվածատերերի և անպատասխանատու բյուրոկրատիայի անբուսպ բռնություն, պետական գանձարանի մշտական ֆինանսական կարիքը, վաճառականության լիակատար խափանում ծավալվող անիշխանական դրության յերկրի մեջ, ահա այդ որերի անմխիթար պատկերը: Յեվ ա-



ՌԻԶԱ-ԽԱՆ



հա մոտավորապես 21 թ. փետրվարին հանդես ե գալիս նոր ուշ՝ ազգային-առաջադիմական զինվորականությունը:

Պարսկական կազակային վաշտի նախկին շաքային Ռիզա-Նանը, վոր սպայի աստիճանի հասավ, հայտնվում է Պարկաստանի քաղաքական հորիզոնի վրա և նրա հետ միասին սկսվում է Պարսկաստանի ազգային-ազատագրական շարժման պատմության թեքման մոմենտը:

Ֆեոդալ-հետադիմականներն ուժեղ են բացառապես շնորհիվ անգլիական պաշտպանության: Անգլիական իմպերիալիզմը շահագրգռված է տեսնել Պարկաստանը քույլ և բաժան-բաժան յեղած:

Նրա այդ շահագրգռությունը համապատասխանում է պարսիկ խաների տենչանքներին, վորոնք չեն ուզում կախված լինել կենդրոնական կառավարությունից և զրկվել գյուղացության վրա ունեցած իրենց իշխանությունից: Ազգային-ազատագրական շարժումը հանդիպում է մի հակառակորդի, վոր ֆինանսական և զինվորական ոգնություն է ստանում մի աշխարհի ուժեղ իմպերիալիստական պետությունից, ինչպիսին Անգլիան է:

Կովել ֆեոդալների կենդրոնախույս ուժերի և անգլիական իմպերիալիզմի դեմ, այդ թերևս կարողանալով զինվորական ուժեղ մի իշխանություն: Ռիզա-Նանը հայտնվում է ճիշտ այն ժամանակ, յերբ ազգային ուժեղ բանակ ունենալու պահանջը դարձել եր կենսական անհրաժեշտություն: Հառաջադիմական տարրերն սկսեցին աշխատակցել Ռիզա-Նանին, վորպեսզի ստեղծեն զինվորական աշխարհի մի ապարատ, վոր

կարող լինի գոռոզ աղնավականության վողնաշարը կոտրել:

Այս խնդիրը հեշտանում է նրանով, վոր հեղափոխական Պարսկաստանին հարևան դարձավ ցարական ճնշող Ռուսաստանի փոխարեն՝ Խորհրդային Ռուսաստանը: Պարսկական հեղափոխությունն զգում է, վոր 325 վերստ յերկարություն ունեցող սահմանագծի վրա ունի պահապան հրեշտակ՝ մի բարեկամ, վոր նրան վոչ միայն դավաճանորեն չի հարվածի թիկունքից, այլև բոլոր ուժերով կոզնի պարսկական պետության ազգային հառաջադիմական վերականգնումին:

Այս հանգամանքն ողնեց Պարկաստանի հառաջադիմական տարրերին, կազմելու բավական ուժեղ մի բանակ, վոր ուշադրություն չդարձնելով անգլիացիների խարդավանքներին, անցավ հյուսիսային և հարավային խաների թիկունքը և նրանց զգալի մեծամասնությանը յենթարկեց կենդրոնական կառավարության իշխանությանը: Այս բանակի կազմակերպողն է տաղանդավոր Ռիզա-խանը:

Պարսկաստանի հեղափոխական շարժման վերջին յերկու-յերեք տարիները լիքն են անգլիական կոլոնիզատորների և նրանց ծախված ֆեոդալների զավաճանության դեմ՝ յերիտասարդ հեղափոխական հասարակության կողմից մղված կովի դրամատիկ միջնադեպերով:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Ամենաազդեցիկ կուսակցությունը «դեմոկրատների» կուսակցությունն է, վոր կազմվեց դեռ 1906 թ.



առաջին հեղափոխությունից առաջ: Իր սոցիալական կազմով խայտաբղետ այս խմբավորուման ձախ թեւը պաշտպանում է արհեստավոր խավերի շահերը, իսկ աջ թեւը ներկայացնում է առևտրական բուրժուազիայի ունեւոր տարբերին:

Այս հիմնական խմբավորման կողքին կա «լիբերալներ», «սոցիալ-դեմոկրատներ» և բանվորա-գյուղացիական կամ կոմմունիստական մանր խմբավորումների մի ամբողջ շարք: Վերջիններն ստիպված են աշխատել ընդհատակյա պայմաններում:

Հասկանալի չէ, վոր քաղաքական խմբավորումներն այստեղ չեն կարող հաստատուն և տևականորեն ամրացած լինել, ի նկատի ունենալով յերկրի հետաձայն լինելը, քաղաքական կյանքի ընացումը, վորտեղ հոգևորականությունը դեռ ուժեղ գործոն է, վորտեղ արդյունաբերական պրոլետարիատը համարյա թե բացակայում է, վորտեղ գյուղացությունը ճորտացած է կալվածատիրոջ մոտ և առևտրական բուրժուազիան գտնվում է յերկու որիյենտացիայի՝ անգլիականի և խորհրդայինի ազդեցություն տակ: Այդ խմբավորումները դեռ յերբբուն են և փոփոխում են իրենց «կարտերը»: Ազդեցիկ ֆեոդալներն անգլիական վոսկու ոգությունամբ կազմում են իրենց «կուսակցությունները»: Կան նաև Ռիզա-խանի և ուրիշ հասարակական գործիչների կուսակցություններ, վորոնք դեգերում են ժամանակակից Պարսկաստանի քաղաքական աստարեղի վրա:

### ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Առաջին արհմիությունը ծնունդ առավ Թեհրանում մոտավորապես 1906-ին: Այս միությունը կազմ-

վեց տպագրական բանվորների կողմից: Յերկու տարի հետո նա միանգամայն հաջող կերպով ղեկավարեց մի գործադուլ, վոր 14 որ անեց: Զեռք բերվեց 8 ժամյա բանվորական որ: Այդ գործադուլի հաջողությունը խորախուսեց հացթուխ և ուրիշ արհեստների բանվորներին:

Թեհրանում ընդամենը գոյություն ունի 10 միություն, վորոնց անդամների թիվը գնալով ավելանում է: Այս միություններն ունեն իրենց կենդրոնական խորհուրդը: Արհմիություններ կան նաև այնպիսի քաղաքներում, ինչպես, որինազ, Ենդեղի, Ռեշտ, Թավրիզ և Կումե:

Միայն Թեհրանում կա 50,000 բանվոր, իսկ ամբողջ յերկրի բանվորների թիվն է մոտ 100,000:

Թեհրանում արհմիության անդամները բաժանված են հետևյալ կարգով:\*)

Տպագրիչների միություն . . . 200 մարդ

Մանուֆակտուրայի խանութների ծառայողների միություն . . . 350 »

Հացաթուխն. » . . . 3000 »

Առևտրական ձեռնարկությունների

բանվորների միություն . . . 250 »

Փոստ-հեռագրական ծառայողների միություն՝ Թեհրանում 200 մարդ և ամբողջ Պարսկաստանում 2,000 մարդ:

Խմորեղեն շինողների միութ. . . 300 մարդ

Կոշկակարների » . . . 1800 »

Դերձակների » . . . 2000 »

\*) Վերջին ժամանակներս այդ արհմիությունների մի մասը քայքայվել է:



Հաշվառման Պարսկաստանում անգլո-պարսկական նավթային ընկերության ժողովում աշխատող բանվորների և ծառայողների թիվն է 35,000: Այս թվի մեջ չեն մտնում բացառապես հիշյալ ընկերության համար աշխատող արհեստավորները: Յեթե դրանց ել հաշվենք, այն ժամանակ բոլոր բանվորների թիվը կըհասնի 40,000-ի:

Բանվորներն ու ծառայողները իրենց զբաղմունքի տեսակետից բաժանվում են հետևյալ կերպով.

Սև աշխատանք կատարողներ՝

65 տոկ. (22,000 մարդ)

Վորակյալ բանվորներ 20 »

Վարչական կազմ . . . 9 »

Տան ծառաներ . . . 6 »

Բանվորներն ու ծառայողներն ըստ ազգություն բաժանվում են հետևյալ ձևով՝

Պարսիկներ . . . . . 79 տոկ.

Հնդիկներ . . . . . 13 »

Հայեր . . . . . 2 »

Անգլիացիներ . . . . . 2

Զինացիներ . . . . . 1 »

Այս բանվորները չեն կազմակերպված միությունների մեջ, վորովհետև անգլիացիք բանվոր և ծառայող վարձելիս քաղաքական խիստ ստուգում են կատարում: «Բազաքական» տեսակետից կասկածելիներն անխնա կերպով հեռացվում են ծառայությունից:

Սև աշխատանք կատարողների ոռճիկը չափազանց ցածր է: Բնակարանային պայմանները վրդովեցուցիչ են: Այստեղ բանվորները յենթակա յեն ամե-

նախիստ շահագործման՝ նավթային ընկերության տերերի կողմից:

Միայն Աբադանում է (նավահանգիստ), ուր պարսիկ բանվորները հայտնաբերում են գիտակցականության բարձր աստիճան և հաճախ գործադուլներ են կազմակերպում: Այդտեղ ընկերության կառավարիչներն իրենք կազմակերպում են կեղծ հեղափոխական միություններ, վորպեսզի դրանով կռվեն բանվորության շարքերում յեղող իսկական հեղափոխական տարրերի դեմ...



## ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Մեր կատարած մահմեդական Մերձավոր Արևելքի և արաբական մյուս յերկիրների ազգային-հեղափոխական շարժման վերլուծությունը հաստատում է զարգացման միջանի տիպեր, վորոնք կարող են յեզրափակվել հետևյալ կերպով.

1) Ազգային-հեղափոխական շարժման դասական տիպը մենք ունենք հանձին հանրապետական թյուրքիայի: Ֆեոդալիզմը քաղաքականապես մեռած է: Ֆեոդալական գլուխը կտրված է (սուլթանի և խալիֆայի գահընկեցությունը), Բնական հարկից («աշար») դեպի փողայինին անցնելով և մյուս բարենորոգումներով հարթվել է գյուղի կապիտալիստական հարաբերությունների զարգացման ճանապարհը: Ոտարյերկրյա լուծը թոթափված է: Ազգային անկախությունը համարյա լիովին իրականացած է: Կովի առաջին փուլը անցած է ամբողջովին: Բնիկ ազգային բուրժուական դարձել է յերկրի լիակատուր տերը: Բանվորական դասակարգը բռնում է ինքնուրույն դասակարգային կովի ուղին՝ հետզհետե ազատագրելով ազգայնական գաղափարախոսությունից (իդեոլոգիա):

Ճիշտ է, այս պրոցեսը դեռ այնքան էլ վորոշա-

կի չի պարզված, սակայն նրա ընդհանուր ուղղագծերն արդեն քաշված են: Տաճիկ կնոջ ազատագրումը փաստ է (թեկուզ հենց ելեքտրաքարշի վագոնների բաժանող վարագույրների վերացումը և նման բարեկարգումները):

Հոգևորականությունը կորցրել է մասսաների վրա ունեցած իր կղերական իշխանությունը (խալիֆայի արտաքսման ժամանակ նա չհամարձակվեց նույնիսկ ձայն հանել: Տաճիկ գյուղացիներն ավելի էլին հետաքրքրվում սերմի փոխատվությամբ, քան խալիֆայի վիճակով...):

2) Ազգային ազատագրական շարժման մյուսը տիպը մենք ունենք Ֆեդիպոստում: Բուրժուազիան իշխանություն տերն է, բայց նա այդ իշխանության հասավ կոմպրոմիսների ճանապարհով, ֆեոդալիզմի և բրիտանական իմպերիալիզմի հետ գործարքի մոտեցելով: Բուրժուազիան ստիպված է բաժանել իշխանությունը խոշոր ազնվականության և արքունիքի հետ (սահմանադրական միապետություն):

Բանվորական դասակարգը հայտնաբերում է Արևելքի համար չտեսնված դասակարգային կովի հեղափոխական վորդի (ֆաբրիկաների գրավումը): Ազգային անկախության կովի վրա պետք է ուրիշ դասակարգեր ստանձնեն, վորոնք մոտ են կանգնած բանվորական դասակարգին և գործակցում են նրա հետ: Այստեղ մենք ունենք յերկարածիք մի պրոցես:

3) Յեթե թյուրքիայում և Ֆեդիպոստում բուրժուազիան կանգնեց շարժման գլուխ, Մարոկկոյում և Միջագետքում այդ բանն արեց հողային ազնվականություն և հոգևորականության ներկայացուցիչները:



Թյունը (պատճառը դեռ չչերտավորված նահապետական ցեղային կյանքի յեղանակն է)։ Սիրիան, Միջագետքը (Իրակ), Պաղեստինը և Մարոկկոն նույնպես գտնվում են դեռ ազգային-ազատագրական կռիւ առաջին փուլի մեջ, այստեղ եւ արտաքին թշնամին տակաւին չի վռնդված, իսկ ներքին թշնամին դեռ ևս չի հաղթահարված։

4) Ազգային-ազատագրական շարժման վերջին փուլը Պարսկաստանում ենք տեսնում։ Ազգային բուրժուազիան արդեն իշխանության շնաճից մի քայլ դեպի ներս է արել և գտնվում է զարգացման առաջին փուլից դեպի յերկրորդը տանող ճանապարհի վրա։ Այստեղ «ազգային միասնական ճակատը» բացարձակապես անհրաժեշտ է։

Վերոհիշյալ յերկրներէ հեղափոխական շարժումը դեռ ևս յերերուն վիճակի մեջ է։ Այդ շարժումը ստեղծված է հենց կապիտալիզմի կողմից։ Թյուրքիայի ազգային բուրժուազիայի հայրը գերմանական կապիտալն է, իսկ յեգիպտականը՝ գլխավորապես անգլիական կապիտալը ևս այն։

Բուրժուազիայի կողքին հանդես է գալիս նաև բանվոր դասակարգը իր դասակարգային պահանջներով։ Գործարանային ընդարձակ շարժումներն այդ յերկրի համար դառնում են «կենցաղային» յերևույթ։

Կապիտալիզմի զարգացումն այդ յերկրներում և նրանց գաղութային կամ կիսագաղութային վիճակից դուրս գալն ու անկախ պետութիւն կազմելը նեղացնում են իմպերիալիստական յերկրներէ բանվորական արիստոկրատիայի այն շերտերի նյութական բազան, վորոնք կերակրվել են ի հաշիւ նախկին այդ

ճնշված յերկրներից դուրս քաշված գեր-վաստակների։ Ազգային-ազատագրական շարժումը վորքան ավելի առաջ դնա, այնքան ավելի կը թուլանան Յեմբուպի իմպերիալիստական պետութիւնների դիրքերը։ Այս թուլացումը տեղի կունենա առաջին հերթին Ֆրանսայի և Անգլիայի նկատմամբ, այն եւ այն չափով, վոր չափով սրանք գաղութացնում են (колонизируют) և «պաշտպանում» են (протектируют) մահմեդական յերկրները։ (Միայն Տրեպոլին է, վոր գանդական իտալական իմպերիալիզմի իշխանության տակ և հյուսիսային Մարոկկոյի մի նեղ շերտ եւ պատկանում է սալանական կոլոնիզատորներին, վորոնք ի միջի այլոց զգալի պարտութիւններ են կրում ռիֆի հեղափոխական ցեղերից)։

Նախկին ցարական Ռուսաստանում կատարված Հոկտեմբերյան հեղափոխութիւնը կայծակի պես լուսավորեց Արևելքի ճնշված ժողովուրդների ճանապարհըն ընդհանրապես և Մերձավոր Արևելքի ժողովուրդներին մասնավորապես։ Կործանվում են ֆեոդալական գահերը, խորտակվում են դասակարգային միջնադարի հիմունքները և Թյուրքիայում վորքի յե կանգնում նախկին ճնշված բուրժուազիան։ Իշխանության աստիճաններով բարձրացող բուրժուազիայի յետևից գընում է ճնշվածների ճնշվածը՝ բանվոր դասակարգը, յերկրի ապագա հրամայողը։ Բարձրանում են սոցիալական նոր շերտեր։

Բուրժուազիան ջանքեր է անում իր հովանավորութիւն տակ առնել բանվոր դասակարգը և նրան հազցնել ազգայնական «խաղաղացող» շապիկը։ Ի դուրս չենց վոր բուրժուազիան իր ձեռքն է առնում կառա-



վարութեան սանձերը, բանվոր դասակարգն ու պարզ-  
ցիա յե կազմում և կանգնում ե դասակարգային հե-  
ղափոխական ճանապարհի վրա:

Ազգային-ազատագրական շարժումը ցուցադրում  
ե մեզ պատերազմի հոյակապ դրամատիքական միջ-  
նադեպերը: 294,500 մամլր փախուստի յեն մատնում  
19 միլիոն սպանացիներ Վրա իշխող սպանական  
միլիտարիստներին...

Ռազմական իմպերիալիզմը գաղութային և կիսա-  
գաղութային յերկիրներում ունեցած իր ավազակային  
տիրապետութիւնը ծածկել և աշխատում զեմոկրատիզ-  
մի և պարլամենտարիզմի թղենու տերէներով: Կախու-  
արժանի «գեմոկրատ» Պերսի Կոկսը զեմոկրատիզմ ե  
ցանում Իրակում, արյունուշտ, դահիճ «գեմոկրատ-  
ներ» են ստեղծում և արյունվա յեղած Սիրիայում  
ընտրութիւնների կատակերգութիւններ են կազմա-  
կերպում: Ֆրանսական բարձր կոմիսարները Ալժիրում  
և Թունիսում հրավիրում են որենսգիր-խորհրդակցա-  
կան ժողովներ: Այս բոլոր «ներկայացուցչական ժո-  
ղովներում հասկանալի յե վոր մասնակցում են միայն  
ծախված ֆեոդալներն ու շեյխերը: Իսկ ճնշված ժո-  
ղովուրդներն ինչպես ընդհանուր որենք, բոյկոտի յեն  
յենթարկում այդ «պարլամենտները», բոյկոտի յեն յեն-  
թարկում կազմակերպված ձեռվ և համերաշխաբար՝  
թույլ չտալով վոր իրենց խաբեն Մակդոնալդի, Երի-  
ոյի և Ժուս «գեմոկրատների» ազենտները:

Ազգային-հեղափոխական շարժումն առաջ և զը-  
նում հոյակապ զարգացում է:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                 |    |
|---------------------------------|----|
| Ներածական հոդված—Միք. Պալլովիչի | 62 |
| ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ                    | 26 |

### Թ Յ Ո Ւ Ի Ք Ի Ա.

|                                            |    |
|--------------------------------------------|----|
| Ա.Ա.Ա.Զ.ԻՆ ԳԼ. Ազգ.-հեղ. շարժման արմատները | 34 |
| ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼ. Կուսակցական խմբավորումներ:    |    |
| Քեմալի խումբը: Խոշոր բուրժուազիա-          |    |
| յի կուսակցութիւն կամ զուտ «Իթթիհատա        |    |
| կաններ»: Ֆեոդալական — ճորտատիրական         |    |
| կուսակցութիւն: Բանվոր - գյուղացիական       |    |
| կամ կոմունիստական կուսակցութիւն . . .      | 39 |
| ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼ. Սուլթանութեան լիկվիդացիան և   |    |
| խալիֆայութեան պահպանումը: Խալիֆա-          |    |
| յութեան լիկվիդացիան: «Աշարի» վերացումը .   | 48 |
| ԶՈՐԿՐՈՐԴ ԳԼ. Բանվորական շարժումը Թյուր-    |    |
| քիայում                                    | 57 |

### Յ Ե Ք Ի Պ Տ Ո Ս

|                                          |    |
|------------------------------------------|----|
| Ա.Ա.Ա.Զ.ԻՆ ԳԼ. Ազգ.-հեղ. շարժման բնույթը | 63 |
| ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼ. Կուսակցական խմբավորումներ:  |    |
| «Զաղլուկաններ»: Ազգայնական կուսակ-       |    |
| ցութիւն «Հիդը-ելվաթանի»: «Ազլիլական-     |    |
| ներ»: Կոմունիստական կուսակցութիւն . . .  | 72 |
| ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼ. Հոգային հարաբերութիւններ    | 77 |
| ԶՈՐԿՐՈՐԴ ԳԼ. Բանվորական շարժումը . . .   | 80 |
| ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼ. Սուլթանի հարցը . . .       | 86 |

### ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՅՐԻԿԱ

|                                       |    |
|---------------------------------------|----|
| Մարտկո, Ալժիր, Թունիս և Տրիպոլի . . . | 90 |
|---------------------------------------|----|

### Ա Ր Ա Բ Ս Տ Ա Ն

|                                          |     |
|------------------------------------------|-----|
| Միջազեռք (Իրակ), Սիրիա, Պաղեստին: Բանվո- |     |
| րական շարժումը Պաղեստինում . . .         | 102 |

### Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

|                                           |     |
|-------------------------------------------|-----|
| Ազգ.-հեղ. շարժման բնույթը: Բաղադրական խմ- |     |
| բավորումները: Բանվորական շարժումը . . .   | 114 |
| Յ ե զ ր ա փ ա կ ու մ . . .                | 126 |



## ԳԼԽԱՎՈՐ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. ՏԵՂԵԿԱԳՐԵՐ. Մերձ.-Արևելքի. Կոմիտերենի յենթաբաժնի.

2. ՄԻՆ. ՊԱՎԼՈՎԻՉ. «Հեղափոխական Թյուրքիան»: «Հոդային կարգը Պարսկաստանում» և այլ աշխատանքներ:

3. ԼԵՆԻՆԻ ՅԵՐԿԵՐԸ. հատ. XVIII, մասն 1 և 2 (Ազգ.-գաղութային հարցը):

4. ՀԱՆԴԵՍ. «Նոր Արևելք»: Աստախովի հոդվածները—«Նոր Թյուրքիայի պրոբլեմները (աշար)»: 5-րդ գիրք—Պավլովիչի, Սոդորովի և Նարիմանովի հոդվածները.—«Լենինը և Արևելքի ժողովուրդները», նաև ուրիշ հոդվածներ նույն գրքում: Իրանակու հոդվածը—«Ռազմական դիկտատուրայի միջոցով դեպի ազգային պետություն» (Պարսկաստանի մասին):

5. ՀԱՆԴԵՍ «Նոր Արևելք», 4-րդ գիրք. Պ. Կիտայգարովսկու հոդվածը—«Հյուսիսային Աֆրիկա», Իրանակու հոդվածը—«Սորհրդային իշխանություն 5 տարվա փոխհարաբերությունները Պարսկաստանի հետ» և ուրիշներ:

6. ԳՈՒԻԿՈ-ԿՐՅԱԺԻՆ. «Ազատագրական շարժումը Մերձավոր Արևելքում»:

7) ՌՈԶԱ-ԼՅՈՒՖՍԵՆԲՈՒՐԳ. «Կապիտալի կուտակումը Ալժիրի, Յեզիպոսի և Զինաստանի մասին յեղած գլուխները»:



803

Հայաստանի Ազգային գրադարան



NL0422803



